

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

2010 թվականի մայիսի 20-ի թիվ 257

ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԵՎ
ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Փոփոխող փաստաթղթերի ցանկ

(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 379, 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 617 (2011 թվականի հունիսի 22-ի խմբագրությամբ), 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշումների խմբագրությամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 39, 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 213, 2013 թվականի հունվարի 31-ի թիվ 8, 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 (2013 թվականի հոկտեմբերի 1-ի խմբագրությամբ), 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 140, 2013 թվականի հուլիսի 3-ի թիվ 148, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289, 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105, 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127, 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 133 (2014 թվականի սեպտեմբերի 23-ի խմբագրությամբ), 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 214, 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 215, 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 237, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 62, 2015 թվականի մայիսի 12-ի թիվ 50, 2015 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 109, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129, 2015 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 139, 2015 թվականի նոյեմբերի 3-ի

թիվ 140, 2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 166, 2016 թվականի հունվարի 26-ի թիվ 8, 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 52, 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 77, 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 145, 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146, 2017 թվականի ապրիլի 24-ի թիվ 35, 2017 թվականի հունիսի 20-ի թիվ 68, 2017 թվականի հուլիսի 18-ի թիվ 91, 2017 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 163, 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 167, 2017 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 188, 2018 թվականի հունվարի 16-ի թիվ 5, 2018 թվականի հունվարի 31-ի թիվ 16, 2018 թվականի մարտի 27-ի թիվ 42, 2018 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 157 որոշումների խմբագրությամբ)

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 180-րդ հոդվածին համապատասխան՝ Մաքսային միության հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել «Ապրանքների մասին հայտարարագրի լրացման կարգի մասին» հրահանգը (այսուհետ՝ Հրահանգ) (1-ին հավելված) եւ ապրանքների մասին հայտարարագրի ձեւը (այսուհետ՝ Ձեւ) (2-րդ հավելված):

2. Սահմանել, որ Հրահանգը եւ Ձեւն ուժի մեջ են մտնում 2011 թվականի հունվարի 1-ից, եւ մինչեւ դրանք ուժի մեջ մտնելը կիրառել Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված մաքսային հայտարարագրերի (փաստաթղթերի) ձեւերը (ձեւաթղթերը) եւ դրանց լրացման կարգը:

3. Կողմերին՝ Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարության հետ համատեղ մինչեւ 2010 թվականի հոկտեմբերի 15-ը Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ լրաշմակել եւ հաստատել՝

- մաքսային հայտարարագրերը լրացնելու համար օգտագործվող դասակարգիչները,

- մաքսային հայտարարագրերի էլեկտրոնային պատճենների կառուցվածքը եւ ձեւաչափերը,
- «Մաքսային հայտարարագիրն էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ներկայացնելու եւ օգտագործելու կարգի մասին» (այսուհետ՝ Կարգ) հրահանգը:

4. Ուժը կորցրել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունվարի 31-ի թիվ 8 որոշում:

5. Կողմերին՝ մինչեւ 2010 թվականի հունիսի 7-ը ներկայացնել Փորձագիտական խմբի կազմի թեկնածուների ցանկ եւ դրա ղեկավարի վերաբերյալ առաջարկներ:

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի	Ղազախստանի	Ռուսաստանի
Հանրապետությունից՝	Հանրապետությունից՝	Դաշնությունից՝
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)
Ա. ԿՈՔՅԱԿՈՎ	ՈՒ. ՇՈՒԿԵԵՎ	Ի. ՇՈՒՎԱԼՈՎ

Հաստատված է

Մաքսային միության հանձնաժողովի
2010 թվականի մայիսի 20-ի թիվ 257 որոշմամբ

**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ
ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՀԱՆԳ**

Փոփոխող փաստաթղթերի ցանկ

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 39, 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 213, 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 140, 2013 թվականի հուլիսի 3-ի թիվ 148, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289, 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105, 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127, 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 133 (2014 թվականի սեպտեմբերի 23-ի խմբագրությամբ), 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 214, 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 215, 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 237, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 62, 2015 թվականի մայիսի 12-ի թիվ 50, 2015 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 109, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129, 2015 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 139, 2015 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 140, 2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 166, 2016 թվականի հունվարի 26-ի թիվ 8, 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 52, 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 77, 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 145, 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146, 2017 թվականի ապրիլի 24-ի թիվ 35, 2017 թվականի հունիսի 20-ի թիվ 68, 2017 թվականի հուլիսի 18-ի թիվ 91, 2017 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 163, 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 167, 2017 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 188, 2018 թվականի հունվարի 16-ի թիվ 5, 2018 թվականի հունվարի 31-ի թիվ 16, 2018 թվականի մարտի 27-ի թիվ 42, 2018 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 157 որոշումների խմբագրությամբ)

I. Ընդհանուր դրույթներ

1. «Ապրանքների մասին հայտարարագրի լրացման կարգի մասին» սույն հրահանգը (այսուհետ՝ Հրահանգ) մշակված է Մաքսային միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 180-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերին համապատասխան եւ սահմանում է ապրանքների մասին հայտարարագրի (այսուհետ՝ ԱՀ) լրացման կարգը:

2. Եթե սույն Հրահանգով այլ բան սահմանված չէ, մեկ ԱՀ-ում հայտարարագրվում են մեկ ապրանքային խմբաքանակում ներառված ապրանքների մասին տեղեկություններ, որոնք ձեւակերպվում են միեւնույն մաքսային ընթացակարգով:

Սույն Հրահանգի նպատակներով, որպես մեկ ապրանքային խմբաքանակ, դիտարկվում են՝

ապրանքները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, մաքսային տարածք) ներմուծելու դեպքում՝ այն ապրանքները, որոնք մաքսային տարածքով տեղափոխվում են միեւնույն ուղարկողից միեւնույն ստացողի հասցեով, արտաքին տնտեսական գործարքի կատարումը հաստատող մեկ փաստաթղթով (կամ վերամշակման արդյունքների մաքսային հայտարարագրման դեպքում ապրանքների վերամշակման պայմանների մասին մեկ փաստաթղթով) սահմանված պարտավորությունների կատարման շրջանակներում, կամ միակողմանի արտաքին տնտեսական գործարքով կամ առանց որեւէ գործարքի կատարման, ինչպես նաեւ եթե այդպիսի ապրանքներն Օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված ժամկետների սահմաններում մաքսային տարածքի ժամանման վայրում կամ առաքման վայրում ներկայացվել են միեւնույն մաքսային մարմին՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառմամբ, եւ եթե դրանք գտնվում են ժամանակավոր պահպանության մեկ վայրում (եթե ապրանքները հանձնվել են ժամանակավոր պահպանության) կամ բաց են թողնվել, Օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան, ԱՀ ներկայացնելու համար սահմանված ժամկետներում.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

ապրանքները մաքսային տարածքից արտահանելու դեպքում՝ այն ապրանքները, որոնք բեռնառաքվում են միաժամանակ կամ Միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերում բեռնառաքվում են սահմանված որոշակի ժամանակահատվածում, միեւնույն մաքսային մարմնի գործունեության տարածքում եւ միեւնույն ուղարկողից՝ մաքսային տարածքից դուրս գտնվող միեւնույն ստացողի հասցեով, արտաքին տնտեսական գործարքի իրականացումը հաստատող մեկ փաստաթղթով (կամ վերամշակման արդյունքների մաքսային հայտարարագրման դեպքում ապրանքների վերամշակման պայմանների մասին մեկ փաստաթղթով) սահմանված պարտավորությունների կատարման շրջանակներում, կամ միակողմանի արտաքին տնտեսական գործարքով, կամ առանց որեւէ գործարքի կատարման.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

ապրանքներն առանց Միության մաքսային սահմանով (այսուհետ՝ մաքսային սահման) տեղափոխելու ավելի վաղ հայտարարագրված մաքսային ընթացակարգի գործողությունը փոփոխելու կամ ավարտելու դեպքում՝ մեկ պայմանագրով միեւնույն նախորդող մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները, եթե արտաքին տնտեսական գործարք կատարելիս կնքվել է համապատասխան պայմանագիր (կամ ապրանքների վերամշակման պայմանների մասին մեկ փաստաթղթով), դրանց վերամշակման արդյունքները, այդպիսի ապրանքներից արտադրված (ստացված) ապրանքները, այդպիսի ապրանքներից գոյացած թափոնները, որոնք գտնվում են միեւնույն մաքսային մարմնի մաքսային հսկողության ներքո կամ բաց են թողնվել, Օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան, ԱՀ ներկայացնելու համար սահմանված ժամկետներում, եւ որոնց հայտարարատու կհանդիսանա այն նույն անձը, ով ապրանքները ձեւակերպել է նախորդող մաքսային ընթացակարգով, կամ այն

անձը, ով հայտարարագրվող ապրանքների նկատմամբ գույքային իրավունքներ է ձեռք բերել դրանք նախորդող մաքսային ընթացակարգով ձեակերպելուց հետո:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Հայտարարատուն իրավունք ունի մեկ ապրանքային խմբաքանակում ներառված ապրանքների մասին տեղեկությունները հայտարարագրելու միեւնույն մաքսային մարմին ներկայացվող մի քանի ԱՀ-ներում՝ բացառությամբ այն դեպքի, երբ ելնելով Մեկնաբանման հիմնական 2ա կանոնից՝ մեկ ապրանքային խմբաքանակում ներառված ապրանքները դիտարկվում են որպես չհավաքված կամ կազմատված տեսքով ներկայացված ապրանքի բաղկացուցիչ եւ դասակարգվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության (այսուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) միասնական ապրանքային անվանացանկի՝ կոմպլեկտավորված կամ ավարտուն ապրանքին համապատասխանող դիրքում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում ապրանքային խմբաքանակում ապրանքի բաղադրիչներ (բաղկացուցիչներ) հանդիսացող՝ սահմանված ժամանակահատվածում տարբեր ապրանքային խմբաքանակներով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի մեկ ծածկագրով՝ կոմպլեկտավորված կամ ավարտուն ապրանքին համապատասխանող ապրանքների եւ այդպիսի բաղադրիչներ (բաղկացուցիչներ) չհանդիսացող ապրանքների առկայության դեպքում, ինչպես նաեւ ապրանքային խմբաքանակում տարբեր ապրանքների բաղադրիչներ (բաղկացուցիչներ) հանդիսացող կամ Օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան ներկայացված՝ ԱՀ-ի ներկայացման մի քանի պարտավորություններին համապատասխան բաց թողնված ապրանքների

առկայության դեպքում այդպիսի ապրանքների հայտարարագրումն իրականացվում է առանձին (տարբեր) ԱՀ-ների համապատասխան քանակի կիրառմամբ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

3. Մեկ ԱՀ-ում կարող են հայտարարագրվել ոչ ավելի, քան 999 ապրանքների մասին տեղեկություններ:

4. Եթե մեկ ապրանքային խմբաքանակում ներառված ապրանքները հայտագրվում են տարբեր մաքսային ընթացակարգերով, յուրաքանչյուր մաքսային ընթացակարգի համար պետք է ներկայացվեն առանձին ԱՀ-ներ:

Արժույթի եւ արժեթղթերի մաքսային հայտարարագրման (այսուհետ՝ հայտարարագրում) դեպքում արժույթի եւ արժեթղթերի յուրաքանչյուր տեսակի համար ներկայացվում է առանձին ԱՀ:

Ղազախստանի Հանրապետությունում մեկ ապրանքային խմբաքանակում այնպիսի ապրանքների առկայության դեպքում, որոնց նկատմամբ կիրառվում են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի տուրքերի դրույքաչափեր, եւ այնպիսի ապրանքների առկայության դեպքում, որոնք ներառված են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 59 որոշմամբ հաստատված այն ապրանքների ցանկում, որոնց նկատմամբ որպես Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը միանալու պայման, ընդունված պարտավորություններին համապատասխան, Ղազախստանի Հանրապետության կողմից կիրառվում են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի տուրքերի դրույքաչափերի համեմատությամբ՝ ներմուծման մաքսատուրքերի ավելի ցածր դրույքաչափեր, եւ այդ տուրքերի դրույքաչափերի ցանկում (այսուհետ՝ ապրանքների ցանկ, որոնց նկատմամբ կիրառվում են ներմուծման

մաքսատուրքերի ցածր դրույքաչափեր, եւ այդպիսի տուրքերի դրույքաչափերի ցանկ), այդպիսի ապրանքները ենթակա են ձեւակերպման տարբեր ԱՀ-ում:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 166 որոշմամբ)

5. ԱՀ-ն բաղկացած է հիմնական (ԱՀ1) եւ լրացուցիչ (ԱՀ2) թերթերից:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշման խմբագրությամբ)

ԱՀ-ի լրացուցիչ թերթերն օգտագործվում են որպես հիմնական թերթի լրացում այն դեպքում, երբ մեկ ԱՀ-ում տեղեկություններ են հայտարարագրվում երկու եւ ավելի ապրանքների մասին:

Ապրանքների գրավոր հայտարարագրման դեպքում ԱՀ-ն ներկայացվում է A4 ձեւաչափի թերթերի վրա:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշմամբ)

6. ԱՀ-ի հիմնական թերթի վրա նշվում են մեկ ապրանքի մասին տեղեկություններ: Լրացուցիչ մեկ թերթի վրա կարող են նշվել երեք ապրանքների մասին տեղեկություններ:

Ընդ որում, որպես մեկ ապրանք հայտարարագրվում են մեկ ապրանքային խմբաքանակում ներառված՝ մեկ անվանմամբ ապրանքները (առետորային, կոմերցիոն անվանումներ), որոնք դասվում են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի մեկ դասակարգման ծածկագրով, ծագում են մեկ երկրից կամ մեկ տնտեսական միության տարածքից կամ համայնքից, կամ որոնց ծագման երկիրն անհայտ է, որոնց նկատմամբ կիրառվում են մաքսասակագնային կարգավորման եւ արգելքների ու սահմանափակումների միատեսակ պայմաններ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Սույն Հրահանգի 1-ին հավելվածում նշված ապրանքները, որոնք ձեռակերպվում են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով, հայտարարագրվում են որպես մեկ ապրանք, եթե ի լրումն սույն կետի երկրորդ պարբերության մեջ նշված պայմանների՝ ապրանքներն ունեն մեկ ապրանքային նշան, մակնիշ, մոդել, ապրանքատեսակ (արտիկոլ) եւ օժտված են միատեսակ տեխնիկական եւ (կամ) կոմերցիոն բնութագրերով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշման խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում մտավոր սեփականության այնպիսի օբյեկտներ պարունակող ապրանքները, որոնք ներառված են Միության այն անդամ պետության մտավոր սեփականության օբյեկտների մաքսային ռեեստրում, որտեղ այդ ապրանքները ձեռակերպվում են մաքսային ընթացակարգով, հայտարարագրվում են նշված ռեեստրում ներառված մտավոր սեփականության օբյեկտներ չպարունակող ապրանքներից առանձին:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի ապրիլի 24-ի թիվ 35 որոշմամբ)

Եթե ապրանքները գտնվում են տակդիրների վրա, ապա այդպիսի տակդիրները հայտագրվում են հայտարարագրվող ապրանքների հետ միասին՝ պայմանով, որ տակդիրների արժեքը ներառված է ապրանքի արժեքի մեջ, նաեւ եթե տակդիրների արժեքը, արտաքին տնտեսական գործարքի պայմաններին համապատասխան, առանձնացված չէ:

Հինգերորդից տասնհինգերորդ պարբերությունները հանվել են: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշում:

Ղազախստանի Հանրապետությունում մեկ ապրանքային խմբաքանակում ներառված՝ տարբեր անվանումներով, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի մեկ դասակարգման

ծածկագրին դասվող, մեկ երկրից կամ մեկ տնտեսական միության տարածքից կամ համայնքից ծագող կամ անհայտ ծագման երկիր ունեցող այն ապրանքները հայտարարագրելիս, որոնց նկատմամբ կիրառվում են մաքսասակագնային կարգավորման եւ արգելքների ու սահմանափակումների միատեսակ պայմաններ, ինչպես նաեւ սույն Հրահանգի 1-ին հավելվածում նշված ապրանքները հայտարարագրելիս լրացուցիչ թերթերի փոխարեն կարող է կիրառվել ապրանքների՝ A4 ձեւաչափի թերթերի վրա, երեք օրինակից ձեւակերպվող եւ ԱՀ-ի անբաժանելի մաս կազմող ցանկ (այսուհետ՝ ապրանքների ցանկ):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Ղազախստանի Հանրապետությունում ապրանքների ցանկի կիրառմամբ ապրանքները հայտարարագրելիս ԱՀ-ն լրացնելու առանձնահատկությունները սահմանված են սույն Հրահանգի X բաժնով:

Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ)

Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան՝ կենսականորեն անհրաժեշտ եւ կարեւորագույն դեղամիջոցների շարքին դասվող դեղամիջոցները հայտարարագրելիս դրանք հայտարարագրվում են որպես մեկ ապրանք, եթե դրանք ունեն մեկ անվանում, դեղաձեւ, դեղաչափ եւ բացթողման ձեւ.

մեկ ապրանքային խմբաքանակում ներառված՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգման մեկ ծածկագրի նշմամբ, տարբեր անվանումներով ապրանքները մեկ ԱՀ-ում հայտարարագրելիս լրացուցիչ թերթերի փոխարեն թույլատրվում է օգտագործել ապրանքների՝ երեք օրինակից ձեւակերպվող եւ ԱՀ-ի անբաժանելի մաս կազմող ցանկը (այսուհետ՝ ցանկ).

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում օգտագործվող ցանկում պետք է պարունակվեն ապրանքների բոլոր անվանումների եւ յուրաքանչյուր ապրանքի քանակի (չափման հիմնական եւ լրացուցիչ միավորներով) մասին տեղեկություններ, յուրաքանչյուր ապրանքի արժեքի եւ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման ծածկագրի մասին տեղեկություններ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

7. ԱՀ-ն լրացվում է սույն Հրահանգով սահմանված կարգին համապատասխան՝ մեծատոռ՝ տպող սարքերի կիրառմամբ, ընթեռնելի, չպետք է պարունակի ջնջումներ, ջնջվածքներ եւ ուղղումներ, եթե սույն Հրահանգով այլ բան սահմանված չէ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 167 որոշման խմբագրությամբ)

Եթե փաստաթղթերում օտարերկրյա անձանց, ապրանքների, տրանսպորտային միջոցների անվանումները եւ այլն հանդիպում են լատինական այբուբենի տառերով, ապա ԱՀ-ում այդպիսի տեղեկությունները նշվում են լատինական այբուբենի տառերով:

Օրինակ՝

օտարերկրյա անձի անվանումը՝ ««PARADISE» LLC,» ««AGRO TRADING GROUP» LTD», «AMRO BANK»,

ավտոտրանսպորտային միջոցի անվանումը՝ ըստ տեխնիկական միջոցի անձնագրի եւ պաշտոնական տեղեկատուների՝ «TOYOTA LAND CRUISER», «MAZDA 626»,

նավի անվանումը՝ «VICTORIA»,

դեղապատրաստուկի անվանումը՝ «FESTAL», «SULPHAQUIN»:

8. ԱՀ-ն գրավոր ներկայացնելու հետ մեկտեղ մաքսային մարմին է ներկայացվում դրա էլեկտրոնային տարբերակը, որի կառուցվածքը եւ ձեւաչափը սահմանվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշմամբ:

(8-րդ կետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշման խմբագրությամբ)

9. ԱՀ-ի լրացուցիչ թերթերի վանդակները լրացնելու կարգը նույնական է ԱՀ-ի հիմնական թերթի համապատասխան վանդակները լրացնելու կարգին, եթե լրացուցիչ թերթերի առանձին վանդակների համար սույն Հրահանգով սահմանված չեն դրանք լրացնելու առանձնահատկություններ:

10. Եթե ապրանքները գրավոր հայտարարագրելիս ԱՀ-ի վանդակներում տեղեկությունները հայտագրելու կամ պաշտոնատար անձի կողմից ծառայողական նշումներ դնելու համար բավարար տեղ չկա, ապա տեղեկությունները եւ ծառայողական նշումները, որոնց համար բավարար տեղ չկա, դրվում են ԱՀ-ի դարձերեսին կամ լրացուցիչ կցվող՝ A4 ձեւաչափի թերթերի վրա, որոնք ԱՀ-ի անբաժանելի մասն են կազմում (այսուհետ՝ լրացում): Ընդ որում, ԱՀ-ի համապատասխան վանդակում կատարվում են նշումներ՝ «ՏԵՄ՝ ԴԱՐՁԵՐԵՍԸ» կամ (ՏԵՄ՝ ԼՐԱՅՈՒՄԸ), որոնք չեն կատարվում ԱՀ-ի էլեկտրոնային օրինակում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշման խմբագրությամբ)

Ընդ որում, ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի դարձերեսի վրա դրվում են վանդակի համարը եւ հայտարարագրվող ապրանքի հերթական համարը (եթե տեղեկություններն առնչվում են կոնկրետ ապրանքի), եւ նշվում են սույն Հրահանգով նախատեսված կարգով հայտագրվող տեղեկությունները:

Լրացման բոլոր թերթերը պետք է համարակալված լինեն:

Յուրաքանչյուր լրացում պետք է կազմվի այն թվով, որով կազմվում են ԱՀ-ի օրինակները: ԱՀ-ի առաջին օրինակին կցվում է լրացման բնօրինակը, իսկ մյուս օրինակներին կարող են կցվել պատճեններ:

Լրացման յուրաքանչյուր թերթի վրա նշվում են՝

վերին աջ անկյունում՝ «ԹԻՎ — ԱՀ-ի ԼՐԱՑՈՒՄ --- ԹԵՐԹԻ ՎՐԱ».

հայտարարագրվող ապրանքի հերթական համարը՝ «Ապրանք թիվ ___» գրառման տեսքով, եւ ըստ յուրաքանչյուր ապրանքի՝ վանդակի համարը եւ այն տեղեկությունները, որոնք լրացվում են այդ վանդակում՝ տվյալ վանդակը լրացնելու կարգին համապատասխան:

Լրացման յուրաքանչյուր օրինակ ներքեւի աջ անկյունում ստորագրվում է ԱՀ կազմած անձի կողմից եւ հաստատվում է հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կնիքի դրոշմվածքը դնելու միջոցով, եթե Միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ հայտարարատուն կամ մաքսային ներկայացուցիչը պետք է ունենան կնիք:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Եթե լրացումը կազմված է պաշտոնատար անձի կողմից, ապա լրացման յուրաքանչյուր օրինակ ներքեւի աջ անկյունում հաստատվում է պաշտոնատար անձի ստորագրությամբ՝ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքը դնելով:

ԱՀ-ի էլեկտրոնային տարբերակում ներառվում են ԱՀ-ի դարձերեսին եւ լրացումներում պարունակվող բոլոր տեղեկությունները:

11. ԱՀ-ում տեղեկությունները հայտագրելու համար կիրառվում են դասակարգիչներ եւ նորմատիվ-տեղեկատվական տեղեկությունների ցանկեր, որոնք օգտագործվում են մաքսային նպատակների համար, կազմվում են Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերի եւ ակտերի եւ (կամ) Միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան եւ ենթակա են կիրառման՝ դրանց համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

12. Եթե ԱՀ-ի լրացուցիչ թերթերն օգտագործելիս մնում են «31» նիշով տարբերանշված չլրացված վանդակներ, ապա այդ վանդակների վրա պետք է հորիզոնական գիծ քաշվի:

13. Ապրանքները գրավոր հայտարարագրելիս ԱՀ-ն մաքսային մարմին է ներկայացվում երեք օրինակից, որոնցից յուրաքանչյուրը համարակալվում է ԱՀ-ի հիմնական թերթի 2, 8, 14, 18, 21, 25 եւ 29 վանդակներից դեպի ձախ տեղակայված վանդակում եւ բաշխվում է հետեւյալ կերպ՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշման խմբագրությամբ)

առաջին օրինակը մնում է մաքսային մարմնում, որտեղ հայտարարագրվում են ապրանքները.

երկրորդ եւ երրորդ օրինակները վերադարձվում են հայտարարատուին: Ընդ որում, ապրանքները մաքսային տարածքից ապրանքների արտահանում նախատեսող մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս երկրորդ օրինակը ներկայացվում է մաքսային տարածքից ապրանքների մեկնման վայրում տեղակայված մաքսային մարմին:

Բելառուսի Հանրապետությունում ԱՀ-ն մաքսային մարմին է ներկայացվում չորս օրինակից, որոնցից յուրաքանչյուրը համարակալվում է ԱՀ-ի հիմնական թերթի 2, 8, 14, 18, 21, 25 եւ 29 վանդակներից դեպի ձախ տեղակայված վանդակում եւ բաշխվում է հետեւյալ կերպ՝

առաջին եւ չորրորդ օրինակները մնում են մաքսային մարմնում, որտեղ հայտարարագրվում են ապրանքները.

երկրորդ եւ երրորդ օրինակները վերադարձվում են հայտարարատուին: Ընդ որում, ապրանքները մաքսային տարածքից ապրանքների արտահանում նախատեսող մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս երկրորդ օրինակը ներկայացվում է մաքսային տարածքից ապրանքների մեկնման վայրում տեղակայված մաքսային մարմին:

Պարբերությունն ուժը կորցրել է՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշում:

II. Մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքների համար ԱՀ-ի լրացման կարգը

14. Ապրանքները «ներքին սպառման համար բացթողում», «մաքսային պահեստ», «մաքսային տարածքում վերամշակում», «ներքին սպառման համար վերամշակում», «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)», «վերաներմուծում», «անմաքս առետուր (օտարերկրյա ապրանքների մասով), «ոչնչացում», «հրաժարում՝ հոգուտ պետության», «ազատ մաքսային գոտի» (օտարերկրյա ապրանքների մասով), «ազատ պահեստ» (օտարերկրյա ապրանքների մասով), «հատուկ մաքսային ընթացակարգ» մաքսային ընթացակարգերով հայտարարագրելիս հայտարարատուի կողմից լրացվում են ԱՀ-ի հետեւյալ վանդակները՝

1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 15 (a, b), 16-րդ, 17-րդ, 17 (a, b), 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ,

25-րդ, 26-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, «B», 48-րդ, 52-րդ (Բելառուսի Հանրապետությունում), 54-րդ:

Պարբերությունը հանվել է. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշում:

15. Հայտարարատուի կողմից վանդակների լրացման կարգը՝

1) 1-ին վանդակ. «Հայտարարագիր»

1. Հայտարարագիր

Վանդակի առաջին ենթաբաժնում կատարվում է գրառում՝ «ИМ».

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է հայտագրվող մաքսային ընթացակարգի երկնիշ ծածկագիրը՝ մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

ԱՀ-ն էլեկտրոնային փաստաթղթի տեսքով օգտագործելու դեպքում վանդակի երրորդ ենթաբաժնում կատարվում է գրառում՝ «ЕД».

2) 2-րդ վանդակ. «Ուղարկող/Արտահանող»

2. Ուղարկող/Արտահանող

Վանդակում նշվում են տեղեկություններ տրանսպորտային (փոխադրման) այն փաստաթղթերում որպես ուղարկող նշված անձի վերաբերյալ, որոնց համապատասխան սկսված է (սկսվում է) ապրանքների փոխադրումը.

կազմակերպության համար՝ կազմակերպության կրճատ անվանումը եւ գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, եւ հասցեն).

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Ֆիզիկական անձի համար՝ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը եւ բնակության վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, եւ հասցեն):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

«RED» LTD

ԳԵՐՄԱՆԻԱ, ԲԵՌԼԻՆ, ԲԼՈՒՄԵՆՇՏՐԱՍԵ, 26».

կամ «BARTON BILL,

ԻՏԱԼԻԱ, ROMA, ST. PETER, 12, 1»:

Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում, եթե ապրանքների տեղափոխումն իրականացվում է տրանսպորտի կամ տրանսպորտային միջոցների մի քանի տեսակների օգտագործմամբ (մեկ տրանսպորտային միջոցից մեկ այլ տրանսպորտային միջոց ապրանքների փոխաբեռնմամբ (վերաբեռնմամբ)), եւ ԱՀ-ի ներկայացման պահին հայտարարատուն չի կարող ներկայացնել տրանսպորտային (փոխադրման) այնպիսի փաստաթուղթ, որին համապատասխան սկսված է (սկսվում է) ապրանքների փոխադրումը, ապա վանդակում նշվում են արտաքին տնտեսական գործարքին մասնակից օտարերկրյա անձի վերաբերյալ տեղեկություններ՝ «ԿՈՆՏՐԱԳԵՆՏ» նշումով:

Պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Վանդակը չի լրացվում, եթե ավելի վաղ հայտագրված մաքսային ընթացակարգի գործողությունը փոփոխելիս կամ ավարտելիս հայտարարագրվող ապրանքների նկատմամբ միջազգային փոխադրում չի իրականացվել, ապրանքների իրացման հետ կապված օդանավերով, երկաթուղային եւ այլ տեսակի տրանսպորտով տեղափոխվող կանխիկ արժույթի (թղթադրամների եւ մետաղադրամների տեսքով հասույթի եւ փոխանակման արժույթի) հայտարարագրման դեպքում, ինչպես նաեւ մաքսային տարածքից դուրս մանրածախ առետրում ձեռք բերված ապրանքների հայտարարագրման դեպքում.

3) 3-րդ վանդակ. «Ձեւեր»

3. Ձեւեր

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է ԱՀ-ի թերթի հերթական համարը:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է ԱՀ-ի թերթերի ընդհանուր քանակը՝ ներառյալ հիմնական եւ բոլոր լրացուցիչ թերթերը:

Օրինակ՝

երկու լրացուցիչ թերթերով մեկ ԱՀ-ի առկայության դեպքում ԱՀ-ի հիմնական թերթի վրա նշվում է՝ «1/3», առաջին լրացուցիչ թերթի վրա՝ «2/3», երկրորդի վրա՝ «3/3»,

եթե ԱՀ-ն լրացուցիչ թերթեր չունի, նշվում է՝ «1/1».

4) 4-րդ վանդակ. «Բեռնառաքման մասնագրեր»

4. Բեռնառաքման մասնագրեր

Վանդակը լրացվում է ապրանքներ, այդ թվում՝ չհավաքված կամ կազմատված, չկոմպլեկտավորված կամ անավարտ տեսքով տեղափոխվող ապրանքներ հայտարարագրելիս բեռնառաքման մասնագրերի, ցանկերի եւ նմանատիպ այլ փաստաթղթերի օգտագործման դեպքում:

Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում վանդակը լրացվում է նաեւ այն դեպքում, եթե տարբեր անվանումներով ապրանքները հայտարարագրվում են՝ նշելով ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգման մեկ ծածկագիր:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

Վանդակում թվային նիշերով նշվում է ԱՀ-ի հետ միաժամանակ ներկայացվող մասնագրերի, ցանկերի, ցանկերի եւ նմանատիպ այլ փաստաթղթերի ընդհանուր քանակը, իսկ «/» բաժանիչ նշանից հետո՝ մասնագրերի, ցանկերի եւ նմանատիպ այլ փաստաթղթերի ընդհանուր քանակը.

5) 5-րդ վանդակ. «Ապրանքներ՝ ընդամենը»

5. Ապրանքներ՝ ընդամենը

Վանդակում թվային նիշերով նշվում է ԱՀ-ում հայտարարագրվող ապրանքների ընդհանուր քանակը:

Հայտարարագրվող ապրանքների ընդհանուր քանակը պետք է համապատասխանի ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի՝ լրացվող 3 վանդակների քանակին կամ մասնագրերում, ցանկերում եւ նմանատիպ մյուս փաստաթղթերում նշվող ապրանքների անվանումների ընդհանուր

քանակին, եթե հայտարարագրման դեպքում ԱՀ-ի լրացուցիչ թերթերի փոխարեն օգտագործվում են այդ փաստաթղթերը.

6) 6-րդ վանդակ. «Տեղեր՝ ընդամենը»

6. Տեղեր՝ ընդամենը

Վանդակում թվային նիշերով նշվում է հայտարարագրվող ապրանքների բեռնատեղիների ընդհանուր քանակը՝ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերին համապատասխան:

Եթե ապրանքները փոխադրվում են սորուն, խուռնային կամ լցովի, եւ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում չի սահմանվում բեռնատեղիների քանակը, վանդակում նշվում է «0» թիվը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105, 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշումների խմբագրությամբ)

Վանդակը չի լրացվում, եթե ավելի վաղ հայտագրված մաքսային ընթացակարգի գործողությունը փոփոխելիս կամ ավարտելիս հայտարարագրվող ապրանքների նկատմամբ միջազգային փոխադրում կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով փոխադրում չի իրականացվել.

7) 7-րդ վանդակ. «Հղման համարը»

7. Հղման համարը

Վանդակում նշվում է ապրանքների հայտարարագրման առանձնահատկության ծածկագիրը՝ ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

ապրանքների նախնական հայտարարագրման դեպքում վանդակում նշվում է ապրանքների հայտարարագրման առանձնահատկության ծածկագիրը՝ «ՊՏԴ»,

չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված եւ անավարտ տեսքով ապրանքների հայտարարագրման դեպքում առանձին բաղադրիչների համար նշվում է ապրանքների հայտարարագրման առանձնահատկության ծածկագիրը՝ «ՕՔՏ»:

Բելառուսի Հանրապետությունում չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ տեսքով՝ սահմանված ժամանակահատվածում մի քանի խմբաքանակներով մատակարարվող ապրանքների հայտարարագրման, ինչպես նաև նախքան առանձին բաղադրիչների համար ԱՀ ներկայացնելն այդ ապրանքների հայտարարագրման դեպքում նշվում է ապրանքի հայտարարագրման առանձնահատկության ծածկագիրը՝ «ՕՔՏ», իսկ վերջին խմբաքանակի հայտարարագրման դեպքում՝ «ՅՈՒ»:

Վանդակը չի լրացվում, եթե ապրանքների հայտարարագրման առանձնահատկությունները բացակայում են, կամ ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունների դասակարգչի մեջ համապատասխան ծածկագիր նախատեսված չէ.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

8) 8-րդ վանդակ. «Ստացող»

Վանդակում նշվում են տեղեկություններ տրանսպորտային (փոխադրման) այն փաստաթղթերում որպես ստացող նշված անձի վերաբերյալ, որոնց համապատասխան ավարտված է (ավարտվում է) ապրանքների փոխադրումը.

կազմակերպության համար՝ կազմակերպության կրճատ անվանումը եւ գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան (մասնաշենքի, շինության), բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

««ՌՈՄԱՇԿԱ» ՍՊԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻ ԵՐԿՐԱՄԱՍ, ՔԱՂ. ՊՅԱՏԻԳՈՐՍԿ, ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ՓՈՂ., 27 Շ., 3-րդ ՄԱՍՆԱՇԵՆՔ».

Եթե կազմակերպության անունից հանդես է գալիս իրավաբանական անձ չհանդիսացող՝ դրա առանձնացված ստորաբաժանումը, ապա ի լրումն վերոնշյալ տեղեկությունների՝ նշվում են նաեւ առանձնացված ստորաբաժանման վերաբերյալ տեղեկություններ՝ կրճատ անվանումը եւ գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան (մասնաշենքի, շինության), բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

««ՊՈԼԵՍՅԵ» ԲԲԸ ԲԵԼԱՌՈՒՄ ՔԱՂ. ՄԻՆՍԿ, ՅԱ. ԿՈԼԱՍԻ ՓՈՂ., Շ. 14

«ՊՈԼԵՍՅԵ» ԲԲԸ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԲԵԼԱՌՈՒՄ, ԲՐԵՍՏԻ ՄԱՐԶ, ՔԱՂ. ԿՈՐԻՆ, ՅԱ. ԿՈՒՊԱԼԻ ՓՈՂ., Շ. 8».

անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը եւ նրա բնակության վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան (մասնաշենքի, շինության) եւ բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

«ԱԶ ՌԱԽԻՄՈՎ ԱՍԿԱՐ ՄԱՐԱՏԻ

ՂԱԶԱԽՍՏԱՆ, ՔԱՂ. ԱՍՏԱՆԱ, ԱԲԱՅԻ ՓՈՂ., Շ.12, ԲՆԱԿԱՐԱՆ 234».

անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի համար՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը եւ բնակության վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, վարչատարածքային միավորը (վարչատարածքային միավորի ծածկագիրը՝ վարչատարածքային եւ տարածքային միավորների օբյեկտների նիշերի համակարգի պետական դասակարգչին համապատասխան (ՎՏՄՆՀ ՊԴ)՝ Ղրղզստանի Հանրապետության համար), բնակավայրը, փողոցը, տան եւ բնակարանի համարը), ինչպես նաեւ անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները (փաստաթղթի անվանումը՝ Ռուսաստանի Դաշնության համար), փաստաթղթի սերիան եւ համարը, տրամադրման ամսաթիվը, նույնականացման համարը՝ առկայության դեպքում, կամ Հայաստանի Հանրապետության համար՝ հանրային ծառայությունների

համարանիշը (ՀԾՀ) կամ այդ համարանիշի բացակայության վերաբերյալ տեղեկանքի համարը):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

Օրինակ՝

«ՋԱԲՈԼՈՅԿԻՅ ՌՈՒՍԼԱՆ ՊԱՎԵԼԻ

ԲԵԼԱՌՈՒՍ, ԳՈՄԵԼԻ ՄԱՐԶ, ԿՐԻՆԻՑԱ ԱՎԱՆ, ՏՈՒՆ 2, N MP2663741, ՏՐՎԱԾ 06.03.2010-ԻՆ, 7140169C002PB8»:

Վանդակի վերին աջ անկյունում՝ «N» նշանից հետո, Միության անդամ պետությունների անձանց համար նշվում է՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Հայաստանի Հանրապետությունում՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշմամբ)

Բելառուսի Հանրապետությունում՝ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ)՝ բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի,

Ղազախստանի Հանրապետությունում՝ կազմակերպության (մասնաճյուղի եւ ներկայացուցչության) եւ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար՝ բիզնես նույնականացման համարը (ԲՆՀ), կամ ֆիզիկական անձի, այդ թվում՝ անձնական ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անհատական նույնականացման համարը (ԱՆՀ)։

Ղրղզստանի Հանրապետությունում՝ հարկ վճարողի նույնականացման հարկային համարը (ՀՎՆՀՀ), որը Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տրամադրվել է ստացողին, եթե ստացողը, Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ է կամ իրավաբանական անձ, կամ անձնական նույնականացման համարը (ԱՆՀ), եթե ստացողը Ղրղզստանի Հանրապետության տարածքում առետրային գործունեություն իրականացնող եւ որպես անհատ ձեռնարկատեր չգրանցված ֆիզիկական անձ է.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշմամբ)

Ռուսաստանի Դաշնությունում՝ հարկ վճարողի նույնականացման համարը (ՀՎՆՀ) եւ իրավաբանական անձի համար՝ «/» բաժանիչ նշանից հետո՝ հաշվառման կանգնեցնելու պատճառի ծածկագիրը (ՀԿՊԾ), ընդ որում, եթե որպես ապրանքների ստացող հանդես է գալիս իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումը, ապա նշվում է ըստ առանձնացված ստորաբաժանման գտնվելու վայրի տրված ՀԿՊԾ-ն:

Վանդակի ստորին մասում նշվում է՝

Ղազախստանի Հանրապետությունում՝ ստացողի, այդ թվում՝ օտարերկրյա անձի նույնականացման մաքսային համարը (ՆՄՀ)՝ Ղազախստանի Հանրապետությունում կիրառվող՝ նույնականացման մաքսային համարի ձեւավորման դասակարգչին համապատասխան.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Ղրղզստանի Հանրապետությունում՝ իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի համար՝ Ձեռնարկությունների եւ կազմակերպությունների համահանրապետական դասակարգչի (ՁԿՀԴ) ծածկագիրը.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշմամբ)

Ռուսաստանի Դաշնությունում՝ պետական գրանցման հիմնական համարը (ՊԳՀՀ) կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վերաբերյալ գրառման պետական գրանցման հիմնական համարը (ԱՁՊԳՀՀ)՝ բացառությամբ օտարերկրյա անձի, ինչպես նաև այն անձի, որը գրանցված է Միության այն անդամ պետությունում, որը տարբերվում է Միության այն անդամ պետությունից, որի մաքսային մարմին ներկայացվում է ԱՀ-ն:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Եթե որպես ապրանքների ստացող հանդես է գալիս օտարերկրյա անձը, ինչպես նաև այն անձը, որը գրանցված է Միության այն անդամ պետությունում, որը տարբերվում է Միության այն անդամ պետությունից, որի մաքսային մարմին ներկայացվում է ԱՀ-ն, ապա վանդակի վերին աջ անկյունը չի լրացվում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Եթե ավելի վաղ հայտագրված մաքսային ընթացակարգի գործողությունը փոփոխելիս կամ ավարտելիս հայտարարագրվող ապրանքների նկատմամբ միջազգային փոխադրում չի իրականացվել (չի իրականացվելու), վերոնշյալ կանոններին համապատասխան՝ վանդակում տեղեկություններ են նշվում այն անձի մասին, որը գույքային իրավունքներ է ձեռք բերել հայտարարագրվող ապրանքների նկատմամբ, այդ թվում՝ մաքսային տարածքում այլ մաքսային ընթացակարգով ավելի վաղ ձեռակերպված ապրանքների նկատմամբ, եւ որն ապրանքների օգտագործման թույլտվություն է ստացել մաքսային ընթացակարգի պայմաններին համապատասխան:

Եթե սույն վանդակում հայտագրման ենթակա տեղեկությունները կրկնում են ԱՀ-ի 14-րդ վանդակում հայտագրման ենթակա տեղեկությունները, այդ տեղեկությունները սույն վանդակում չեն լրացվում. ընդ որում, կատարվում է գրառում՝ «տե՛ս ԱՀ-ի 14-րդ վանդակը»:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ)

Վանդակը չի լրացվում ապրանքների իրացման հետ կապված օդանավերով, ինչպես նաև երկաթուղային եւ այլ տեսակի տրանսպորտով տեղափոխվող կանխիկ արժույթի (թղթադրամների եւ մետաղադրամների տեսքով հասույթի եւ փոխանակման արժույթի) հայտարարագրման դեպքում.

9) 9-րդ վանդակ. «Ֆինանսական կարգավորման համար պատասխանատու անձ»

9. Ֆինանսական կարգավորման համար պատասխանատու անձ N

Վանդակում նշվում են տեղեկություններ հետեւյալ անձանցից մեկի վերաբերյալ՝

Միության անդամ պետության այն անձի մասին, որն արտաքին տնտեսական գործարք իրականացնելիս կնքել է (կամ որի անունից կամ որի հանձնարարությամբ կնքվել է) պայմանագիր, որին համապատասխան ապրանքները ներմուծվել են մաքսային տարածք.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

օտարերկրյա անձի մասին, որը մաքսային տարածքում ապրանքները տնօրինելու իրավունք ունի ոչ արտաքին տնտեսական այն գործարքի շրջանակներում, որի կողմերից մեկն է հանդես գալիս Միության անդամ պետության անձը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

ԱՀ-ն ներկայացնելու պահին հայտարարագրվող ապրանքների սեփականատեր հանդիսացող անձի մասին, եթե հայտարարագրվող ապրանքները մաքսային տարածք են ներմուծվել արտաքին տնտեսական միակողմանի գործարքի շրջանակներում.

այն անձի մասին, որը գույքային իրավունքներ է ձեռք բերել (ձեռք բերում) հայտարարագրվող ապրանքների նկատմամբ, այդ թվում՝ մաքսային տարածքում այլ մաքսային ընթացակարգով ավելի վաղ ձեռակերպված ապրանքների նկատմամբ, եւ որն ապրանքների օգտագործման թույլտվություն է ստացել մաքսային ընթացակարգի պայմաններին համապատասխան.

մաքսային տարածք կանխիկ արժույթի ներմուծում իրականացնող անձի մասին:

Վանդակում նշվում են՝

կազմակերպության համար՝ կազմակերպության կրճատ անվանումը եւ գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան (մասնաշենքի, շինության), բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Եթե կազմակերպության անունից հանդես է գալիս իրավաբանական անձ չհանդիսացող՝ դրա առանձնացված ստորաբաժանումը, ապա ի լրումն վերոնշյալ տեղեկությունների՝ նշվում են նաեւ առանձնացված ստորաբաժանման վերաբերյալ տեղեկություններ՝ կրճատ անվանումը եւ գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին

համապատասխան, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան (մասնաշենքի, շինության), բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը)։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը եւ բնակության վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան եւ բնակարանի համարը)։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի համար՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը եւ բնակության վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, վարչատարածքային միավորը (Ղրղզստանի Հանրապետության համար՝ վարչատարածքային միավորի ծածկագիրը՝ վարչատարածքային եւ տարածքային միավորների օբյեկտների նիշերի համակարգի պետական դասակարգչին համապատասխան (ՎՏՄՆՀ ՊԴ), բնակավայրը, փողոցը, տան եւ բնակարանի համարը)), անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները (Ռուսաստանի Դաշնության համար՝ փաստաթղթի անվանումը), փաստաթղթի սերիան եւ համարը, տրամադրման ամսաթիվը, նույնականացման համարը (առկայության դեպքում) կամ հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ) կամ այդ համարանիշի բացակայության վերաբերյալ տեղեկանքի համարը (Հայաստանի Հանրապետության համար)։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ)

Վանդակի վերին աջ անկյունում՝ «N» նշանից հետո, նշվում է՝

Հայաստանի Հանրապետությունում՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշմամբ)

Բելառուսի Հանրապետությունում՝ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ)՝ բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի,

Ղազախստանի Հանրապետությունում՝ կազմակերպության (մասնաճյուղի եւ ներկայացուցչության) եւ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար՝ բիզնես նույնականացման համարը (ԲՆՀ), կամ ֆիզիկական անձի, այդ թվում՝ անձնական ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անհատական նույնականացման համարը (ԱՆՀ)։

Ղրղզստանի Հանրապետությունում՝ հարկ վճարողի նույնականացման հարկային համարը (ՀՎՆՀՀ), որը Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տրամադրվել է ստացողին, եթե ստացողը, Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ է կամ իրավաբանական անձ, կամ անձնական նույնականացման համարը (ԱՆՀ), եթե ստացողը Ղրղզստանի Հանրապետության տարածքում առետրային գործունեություն իրականացնող եւ որպես անհատ ձեռնարկատեր չգրանցված ֆիզիկական անձ է։

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշմամբ)

Ռուսաստանի Դաշնությունում՝ հարկ վճարողի նույնականացման համարը (ՀՎՆՀ) եւ իրավաբանական անձի համար՝ «/» բաժանիչ նշանից հետո՝ հաշվառման կանգնեցնելու պատճառի ծածկագիրը (ՀԿՊԾ), ընդ որում, եթե իրավաբանական անձի անունից հանդես է գալիս իրավաբանական անձի

առանձնացված ստորաբաժանումը, ապա նշվում է ըստ առանձնացված ստորաբաժանման գտնվելու վայրի տրված ՀԿՊԾ-ն:

Վանդակի ստորին մասում նշվում է՝

Ղազախստանի Հանրապետությունում՝ ֆինանսական կարգավորման համար պատասխանատու անձի, այդ թվում՝ օտարերկրյա անձի ՆՄՀ-ն՝ Ղազախստանի Հանրապետությունում կիրառվող՝ նույնականացման մաքսային համարի ձեւավորման դասակարգչին համապատասխան.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Ղրղզստանի Հանրապետությունում՝ իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի համար՝ Ձեռնարկությունների եւ կազմակերպությունների համահանրապետական դասակարգչի (ՁԿՀԴ) ծածկագիրը.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշմամբ)

Ռուսաստանի Դաշնությունում՝ պետական գրանցման հիմնական համարը (ՊԳՀՀ) կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վերաբերյալ գրառման պետական գրանցման հիմնական համարը (ԱՁՊԳՀՀ):

Եթե սույն վանդակում հայտագրման ենթակա տեղեկությունները կրկնում են ԱՀ-ի 14-րդ վանդակում հայտագրման ենթակա տեղեկությունները, այդ տեղեկությունները սույն վանդակում չեն լրացվում. ընդ որում, կատարվում է գրառում՝ «տե՛ս ԱՀ-ի 14-րդ վանդակը».

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ)

10) 11-րդ վանդակ. «Առեւտուր անող երկիր»

11. Առեւտուր անող երկիր

Վանդակի առաջին ենթաբաժնում, աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, նշվում է այն պետության ծածկագիրը, որտեղ գրանցված է կամ մշտապես բնակվում է այն անձը, որն իր կատարած արտաքին տնտեսական գործարքի մասով հանդես է գալիս որպես Միության անդամ պետության անձի կոնտրագենտ, այդ թվում՝ ավելի վաղ հայտագրված մաքսային ընթացակարգի գործողությունը փոփոխելու կամ ավարտելու դեպքում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Արտաքին տնտեսական գործարքի կատարումը հաստատող պայմանագրի բացակայության դեպքում վանդակի առաջին ենթաբաժնում, աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, նշվում է պետության ծածկագիրը՝ առեւտրային փաստաթղթերի հիման վրա:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշումների խմբագրությամբ)

Վանդակի առաջին ենթաբաժինը չի լրացվում ապրանքների իրացման հետ կապված օդանավերով, ինչպես նաեւ երկաթուղային եւ այլ տեսակի տրանսպորտով տեղափոխվող կանխիկ արժույթի (թղթադրամների եւ մետաղադրամների տեսքով հասույթի եւ փոխանակման արժույթի) հայտարարագրման դեպքում.

Բելառուսի Հանրապետությունում՝

արտաքին տնտեսական գործարքի բացակայության, ինչպես նաեւ այն դեպքում, եթե հայտարարատուի կողմից կատարված արտաքին տնտեսական գործարքի մասով որպես Բելառուսի Հանրապետությունում գրանցված կամ

մշտապես բնակվող հայտարարատուի-անձի կոնտրագենտ հանդես եկող անձի գրանցման երկիրը կամ մշտական բնակության վայրը հայտնի չէ, վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է երկնիշ թվային ծածկագիր՝ «00».

ապրանքները հայտարարագրելիս վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է վանդակի առաջին ենթաբաժնում նշված՝ երկրի վարչատարածքային բաժանման եռանիշ թվային ծածկագիրը՝ Բելառուսի Հանրապետությունում կիրառվող՝ երկրների վարչատարածքային բաժանման դասակարգչին համապատասխան.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

այն երկրի վարչատարածքային բաժանման եռանիշ թվային ծածկագրի բացակայության դեպքում, որի ծածկագիրը նշված է սույն վանդակի առաջին ենթաբաժնում, վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է եռանիշ թվային ծածկագիր՝ «000»:

11) 12-րդ վանդակ. «Ընդհանուր մաքսային արժեք»

12. Ընդհանուր մաքսային արժեք

Վանդակում թվային նիշերով նշվում է Միության այն անդամ պետության արժույթով հայտարարագրվող ապրանքների ընդհանուր մաքսային արժեքը, որի մաքսային մարմին ներկայացվում է ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի 45-րդ վանդակներում հայտագրված բոլոր ապրանքների մաքսային արժեքների մեծությունների գումարման միջոցով ստացված ԱՀ-ն:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Վանդակում նշվում է ընդհանուր մաքսային արժեքի ստացված մեծությունը, որը մաթեմատիկայի կանոններով կլորացված է՝ ստորակետից հետո մինչեւ երկու նիշ ճշտությամբ:

Հայաստանի Հանրապետությունում նշվում է ընդհանուր մաքսային արժեքի ստացված մեծությունը, որը մաթեմատիկայի կանոններով կլորացված է մինչև ամբողջ թիվը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 77 որոշումների խմբագրությամբ)

Պարբերությունը հանվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ:

Ռուսաստանի Դաշնությունում տարբեր անվանումներով ապրանքները ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի մեկ դասակարգման ծածկագրի նշումով հայտարարագրելու դեպքում նշվում է ցանկում ներկայացված բոլոր ապրանքների ընդհանուր մաքսային արժեքը Միության այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին ներկայացվում է ԱՀ-ն:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

12) 14-րդ վանդակ. «Հայտարարատու»

14. Հայտարարատու	N
------------------	---

Վանդակում նշվում են հայտարարատուի մասին տեղեկությունները՝

կազմակերպության համար՝ կազմակերպության կրճատ անվանումը եւ գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան (մասնաշենքի, շինության), բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը), ինչպես նաեւ առկայության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն (Բելառուսի Հանրապետության համար).

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշումների խմբագրությամբ)

Եթե կազմակերպության անունից հանդես է գալիս իրավաբանական անձ չհանդիսացող՝ դրա առանձնացված ստորաբաժանումը, ապա ի լրումն վերոնշյալ տեղեկությունների՝ նշվում են նաև տեղեկություններ՝ առանձնացված ստորաբաժանման վերաբերյալ. կրճատ անվանումը եւ գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան (մասնաշենքի, շինության), բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը), ինչպես նաև առկայության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն (Բելառուսի Հանրապետության համար).

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշումների խմբագրությամբ)

անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը եւ բնակության վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, եւ հասցեն), վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան (մասնաշենքի, շինության), բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը, ինչպես նաև առկայության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն (Բելառուսի Հանրապետության համար).

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշումների խմբագրությամբ)

անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի համար՝ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը եւ բնակության վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին

համապատասխան, վարչատարածքային միավորը (վարչատարածքային միավորի ծածկագիրը՝ վարչատարածքային եւ տարածքային միավորների օբյեկտների նիշերի համակարգի պետական դասակարգչին համապատասխան (ՎՏՄՆՀ ՊԴ)՝ Ղրղզստանի Հանրապետության համար), բնակավայրը, փողոցը, տան եւ բնակարանի համարը), էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում) (Բելառուսի Հանրապետության համար), անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները (փաստաթղթի անվանումը (Ռուսաստանի Դաշնության համար), փաստաթղթի սերիան եւ համարը, տրամադրման ամսաթիվը, նույնականացման համարը (առկայության դեպքում) կամ հանրային ծառայությունների համարանիշը (ՀԾՀ) կամ այդ համարանիշի բացակայության վերաբերյալ տեղեկանքի համարը) (Հայաստանի Հանրապետության համար):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ)

Վանդակի վերին աջ անկյունում՝ «N» նշանից հետո, նշվում է՝

Հայաստանի Հանրապետությունում՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշմամբ)

Բելառուսի Հանրապետությունում՝ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ)՝ բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, կամ առկայության դեպքում՝ ֆիզիկական անձի նույնականացման համարը.

Ղազախստանի Հանրապետությունում՝ կազմակերպության (մասնաճյուղի եւ ներկայացուցչության) եւ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար՝ բիզնես նույնականացման համարը (ԲՆՀ), կամ ֆիզիկական անձի, այդ թվում՝ անձնական ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ

համար՝ անհատական նույնականացման համարը (ԱՆՀ), ինչպես նաև օտարերկրյա անձի նույնականացման համարը (Եթե որպես հայտարարատու հանդես է գալիս օտարերկրյա անձը)՝ դրա առկայության դեպքում.

Ղրղզստանի Հանրապետությունում՝ հարկ վճարողի նույնականացման հարկային համարը (ՀՎՆՀՀ), որը Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տրամադրվել է ստացողին, եթե ստացողը, Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ է կամ իրավաբանական անձ, կամ անձնական նույնականացման համարը (ԱՆՀ), եթե ստացողը Ղրղզստանի Հանրապետության տարածքում առևտրային գործունեություն իրականացնող եւ որպես անհատ ձեռնարկատեր չգրանցված ֆիզիկական անձ է.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշմամբ)

Ռուսաստանի Դաշնությունում՝ հարկ վճարողի նույնականացման համարը (ՀՎՆՀ) եւ իրավաբանական անձի համար՝ «/» բաժանիչ նշանից հետո՝ հաշվառման կանգնեցնելու պատճառի ծածկագիրը (ՀԿՊԾ), ընդ որում, եթե իրավաբանական անձի անունից հանդես է գալիս իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումը, ապա դրվում է ըստ առանձնացված ստորաբաժանման գտնվելու վայրի տրված ՀԿՊԾ-ն:

Վանդակի ստորին մասում նշվում է՝

Ղազախստանի Հանրապետությունում՝ հայտարարատուի, այդ թվում՝ օտարերկրյա անձի ՆՄՀ-ն՝ Ղազախստանի Հանրապետությունում կիրառվող՝ նույնականացման մաքսային համարի ձեւավորման դասակարգչին համապատասխան.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Ղրղզստանի Հանրապետությունում՝ իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի համար՝ Ձեռնարկությունների եւ կազմակերպությունների համահանրապետական դասակարգչի (ՁԿՀԴ) ծածկագիրը.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշմամբ)

Ռուսաստանի Դաշնությունում՝ պետական գրանցման հիմնական համարը (ՊԳՀՀ) կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վերաբերյալ գրառման պետական գրանցման հիմնական համարը (ԱՁՊԳՀՀ)՝ բացառությամբ օտարերկրյա անձի, ինչպես նաեւ այն անձի, որը գրանցված է Միության այն անդամ պետությունում, որը տարբերվում է Միության այն անդամ պետությունից, որի մաքսային մարմին ներկայացվում է ԱՀ-ն:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Եթե որպես հայտարարատու հանդես է գալիս օտարերկրյա անձը, ինչպես նաեւ այն անձը, որը գրանցված է Միության այն անդամ պետությունում, որը տարբերվում է Միության այն անդամ պետությունից, որի մաքսային մարմին ներկայացվում է ԱՀ-ն, ապա վանդակի վերին աջ անկյունը չի լրացվում.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

13) 15-րդ վանդակ. «Ուղարկող երկիր»

15. Ուղարկող երկիր

Վանդակում նշվում է ապրանքներն ուղարկող երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Ապրանքներն ուղարկող երկրի մասին տեղեկությունները սահմանվում են տրանսպորտային (փոխադրման) այն փաստաթղթերում ներկայացված տեղեկությունների հիման վրա, որոնց համաձայն սկսել է իրականացվել ապրանքների միջազգային փոխադրումը:

Եթե միջազգային փոխադրումն իրականացվել է տրանսպորտային (փոխադրման) մի քանի փաստաթղթերով, վանդակում նշվում է առաջին երկրի կրճատ անվանումը, որտեղ ԱՀ-ում հայտագրված ապրանքներն ընդունվել են փոխադրման՝ ԱՀ-ի 8-րդ վանդակում նշված ստացողի հասցեով ուղարկելու համար:

Վանդակը չի լրացվում, եթե ավելի վաղ հայտագրված մաքսային ընթացակարգի գործողությունը փոփոխելիս կամ ավարտելիս հայտարարագրվող ապրանքների նկատմամբ միջազգային փոխադրում չի իրականացվել, նաեւ ապրանքների իրացման հետ կապված օդանավերով, ինչպես նաեւ երկաթուղային եւ այլ տեսակի տրանսպորտով տեղափոխվող կանխիկ արժույթի հայտարարագրման դեպքում.

14) 15-րդ վանդակ (a,b). «Ուղարկող երկրի ծածկագիր»

15. Ուղարկող երկրի ծածկագիր	
a	b

Վանդակի «a» ենթաբաժնում նշվում է ուղարկող երկրի ծածկագիրը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշումների խմբագրությամբ)

Վանդակը չի լրացվում, եթե ԱՀ-ի 15-րդ վանդակը լրացված չէ:

Բելառուսի Հանրապետությունում՝

ապրանքները հայտարարագրելիս վանդակի «b» ենթաբաժնում նշվում է ուղարկող երկրի վարչատարածքային բաժանման եռանիշ թվային ծածկագիրը՝ Բելառուսի Հանրապետությունում կիրառվող երկրների վարչատարածքային բաժանման դասակարգչին համապատասխան.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

այն երկրի վարչատարածքային բաժանման համապատասխան եռանիշ թվային ծածկագրի բացակայության դեպքում, որի ծածկագիրը նշված է սույն վանդակի «a» ենթաբաժնում, վանդակի «b» ենթաբաժնում նշվում է եռանիշ ծածկագիր՝ «000».

15) 16-րդ վանդակ. «Ծագման երկիր»

16. Ծագման երկիր

Վանդակում նշվում է հայտարարագրվող ապրանքների ծագման երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Եթե ապրանքի վրա զետեղված մականշվածքով կամ տրամադրված փաստաթղթերով չի նշվում ապրանքների ծագման կոնկրետ երկիրը, այլ դրանցում տեղեկություններ են պարունակվում Եվրոպական միության տարածքից ապրանքների ծագման մասին, ապա վանդակում կատարվում է գրառում՝ «ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ»:

Եթե մեկ ԱՀ-ում հայտարարագրվում են տարբեր երկրների (միությունների կամ համայնքների) ծագում ունեցող մի քանի ապրանքներ, կամ եթե առնվազն մեկ ապրանքի ծագման երկիրն անհայտ է, վանդակում կատարվում է գրառում՝ «ՏԱՐԲԵՐ ԵՆ»:

Եթե ԱՀ-ում հայտարարագրվող բոլոր ապրանքների ծագման երկիրն անհայտ է, վանդակում կատարվում է գրառում՝ «ԱՆՀԱՅՏ Է»:

Վանդակը չի լրացվում ապրանքների իրացման հետ կապված օդանավերով, ինչպես նաև երկաթուղային եւ այլ տեսակի տրանսպորտով տեղափոխվող կանխիկ արժույթի (թղթադրամների եւ մետաղադրամների տեսքով հասույթի եւ փոխանակման արժույթի) հայտարարագրման դեպքում.

16) 17-րդ վանդակ. «Նշանակման երկիր»

17. Նշանակման երկիր

Վանդակում նշվում է ապրանքների նշանակման երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Ապրանքների նշանակման երկիրը որոշվում է տրանսպորտային (փոխադրման) այն փաստաթղթերում ներկայացված տեղեկությունների

հիման վրա, որոնց համաձայն ավարտվել է (ավարտվում է) ապրանքների միջազգային փոխադրումը:

Բելառուսի Հանրապետությունում ապրանքները հայտարարագրելիս վանդակը լրացվում է «ազատ մաքսային գոտի» եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերի գործողության ավարտման դեպքում՝ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում ներկայացվող տեղեկությունների հիման վրա:

Վանդակը չի լրացվում ապրանքների իրացման հետ կապված օդանավերով, ինչպես նաեւ երկաթուղային եւ այլ տեսակի տրանսպորտով տեղափոխվող կանխիկ արժույթի (թղթադրամների եւ մետաղադրամների տեսքով հասույթի եւ փոխանակման արժույթի) հայտարարագրման դեպքում.

17) 17-րդ վանդակ (a,b). «Նշանակման երկրի ծածկագիր»

17. Նշանակման երկրի ծածկագիր			
a		b	

Վանդակի «a» ենթաբաժնում նշվում է նշանակման երկրի ծածկագիրը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշումների խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում՝

«ազատ մաքսային գոտի» կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերի գործողությունն ավարտելու դեպքում ապրանքները հայտարարագրելիս վանդակի «b» ենթաբաժնում նշվում է նշանակման երկրի վարչատարածքային բաժանման եռանիշ թվային ծածկագիրը՝

Բելառուսի Հանրապետությունում կիրառվող երկրների վարչատարածքային բաժանման դասակարգչին համապատասխան.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

այն երկրի վարչատարածքային բաժանման համապատասխան եռանիշ թվային ծածկագրի բացակայության դեպքում, որի ծածկագիրը նշված է սույն վանդակի «a» ենթաբաժնում, նշվում է եռանիշ ծածկագիր՝ «000».

18) 18-րդ վանդակ. «Տրանսպորտային միջոցի նույնականացումը եւ գրանցման երկիրը՝ ուղարկման/ժամանման պահին»

18 Տրանսպորտային միջոցի նույնականացումը եւ գրանցման երկիրը՝ ուղարկման/ժամանման պահին
--

Վանդակում նշվում են մաքսային տարածքով այնպիսի ապրանքներ տեղափոխած տրանսպորտային միջոցի (տրանսպորտային միջոցների) վերաբերյալ տեղեկություններ, որոնք մաքսային մարմին են ներկայացվում մաքսային ընթացակարգով ձեւակերպելու համար՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի:

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է տրանսպորտային միջոցների ընդհանուր քանակը եւ միջակետից հետո՝ «,» բաժանիչ նշանով, առանց միջակայքի.

ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրման դեպքում՝ տրանսպորտային միջոցների գրանցման համարները, օրինակ՝

«4. A770AE, A771 BC, A772MH, A773AB»,

«4. A880AE199, A881 BC199, A882MH99, A883EH199».

ապրանքները ավտոտրանսպորտային միջոցների կազմով փոխադրելու դեպքում՝ բոլոր տրանսպորտային միջոցների գրանցման համարները՝ սկզբում ակտիվ տրանսպորտային միջոցի եւ «/» բաժանիչ նշանից հետո՝ կցորդների, կիսակցորդների եւ այլնի համարները, օրինակ՝

«2. C225BH163/AB1971163»,

«2. AA3571-7/A4171A-7»,

«3. A880AE199/AE2234, A882MH199».

երկաթուղային տրանսպորտով փոխադրելու դեպքում՝ երկաթուղային վագոնների (կառամատույցների, ցիստեռնների եւ այլնի) համարները.

ապրանքները ծովային (գետային) տրանսպորտով փոխադրելու դեպքում՝ նավերի անվանումները.

ապրանքներն օդային տրանսպորտով փոխադրելու դեպքում՝ չվերթների համարները:

Տասնհինգերորդ-տասնվեցերորդ պարբերությունները հանվել են 2015 թվականի հուլիսի 1-ից: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է այն երկրի ծածկագիրը, որտեղ գրանցված է տրանսպորտային միջոցը, իսկ եթե փոխադրումն իրականացնելիս օգտագործվել է տրանսպորտային միջոցների կազմ, ապա այն երկրի ծածկագիրը, որտեղ գրանցված է մյուս տրանսպորտային միջոցը (տրանսպորտային միջոցները) շարժման մեջ դնող տրանսպորտային միջոցը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշումների խմբագրությամբ)

Եթե հայտարարագրման պահին հայտնի չէ այն երկիրը (երկրները), որտեղ գրանցված է տրանսպորտային միջոցը, վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է երկու հատ գրո՝ «00»:

Եթե ապրանքները փոխադրվել են տարբեր երկրներում գրանցված մի քանի տրանսպորտային միջոցներով, վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է երկու հատ ինը՝ «99»:

Ապրանքները երկաթուղային տրանսպորտով փոխադրելու դեպքում վանդակի երկրորդ ենթաբաժինը չի լրացվում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

Վանդակը չի լրացվում, եթե հայտարարագրվող ապրանքների նկատմամբ նախքան դրանք ԱՀ-ում հայտագրված մաքսային ընթացակարգով ձեակերպելը, այդ թվում՝ ավելի վաղ հայտագրված մաքսային ընթացակարգի գործողությունը փոփոխելու կամ ավարտելու դեպքում դրանց միջազգային փոխադրում չի իրականացվել, ինչպես նաև միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների տեղափոխման դեպքում:

Բելառուսի Հանրապետությունում ապրանքների հայտարարագրման դեպքում վանդակը չի լրացվում.

19) 19-րդ վանդակ. «Բեռնարկ»

19. Բեռնարկ

Վանդակում նշվում են ապրանքների փոխադրման հետեյալ հատկանիշները՝

«1»՝ եթե մաքսային սահմանով ապրանքների փոխադրումն իրականացվում է (իրականացվել է) բեռնարկում.

«0»՝ այլ դեպքերում (այդ թվում, եթե հայտնի չէ, թե ինչպես են փոխադրվում (փոխադրվել) ապրանքները).

20) 20-րդ վանդակ. «Մատակարարման պայմաններ»

20. Մատակարարման պայմաններ	

Վանդակում նշվում են մատակարարման պայմանների վերաբերյալ տեղեկությունները, եթե հայտարարագրվող ապրանքները ներմուծված են (ներմուծվում են) մաքսային տարածք արտաքին տնտեսական գործարք կատարելիս կնքված պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարմամբ:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում են մատակարարման պայմանների ծածկագիրը՝ մատակարարման պայմանների դասակարգչին համապատասխան, եւ աշխարհագրական կետի անվանումը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Երրորդ-չորրորդ պարբերությունները հանվել են 2015 թվականի հուլիսի 1-ից: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Եթե ԱՀ-ում հայտարարագրվող ապրանքներին առնչվող մատակարարման պայմանները (բազիսները) տարբեր են, կամ եթե մատակարարման պայմանը (բազիսը) վերաբերում է ԱՀ-ում հայտարարագրվող բոլոր ապրանքներին, սակայն մատակարարումն իրականացվում է տարբեր աշխարհագրական կետերում, վանդակի երկրորդ ենթաբաժնում կատարվում է գրառում՝ «ՏԱՐԲԵՐ ԵՆ»:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

Վանդակի առաջին եւ երկրորդ ենթաբաժինները չեն լրացվում.

21) 21-րդ վանդակ. «Ակտիվ տրանսպորտային միջոցի նույնականացումը եւ գրանցման երկիրը՝ սահմանի վրա»

21. Ակտիվ տրանսպորտային միջոցի նույնականացումը եւ գրանցման երկիրը՝ սահմանի վրա

Վանդակը լրացվում է, եթե հայտարարագրվող ապրանքները ձեակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգից տարբերվող այլ մաքսային ընթացակարգերով, ապրանքների՝ մաքսային տարածք ժամանելու վայրերում կամ մաքսային սահմանին մոտեցված այլ վայրերում, եթե այդպիսի վայրերը սահմանված են Միության անդամ պետությունների օրենսդրությամբ:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Վանդակում նշվում են տեղեկություններ այն տրանսպորտային միջոցի (տրանսպորտային միջոցների) վերաբերյալ, որի (որոնց) վրա ապրանքները գտնվել են մաքսային սահմանով տեղափոխման վայրեր ժամանելու պահին:

Եթե միջազգային փոխադրում իրականացնելիս օգտագործվել է տրանսպորտային միջոցների կազմ, նշվում են տեղեկություններ՝ մյուս տրանսպորտային միջոցը (տրանսպորտային միջոցները) շարժման մեջ դրած ակտիվ տրանսպորտային միջոցի վերաբերյալ:

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է տրանսպորտային միջոցների ընդհանուր քանակը եւ միջակետից հետո՝ «,» բաժանիչ նշանով, առանց միջակայքի.

ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրման դեպքում՝ տրանսպորտային միջոցների գրանցման համարները,

օրինակ՝

«4. A770AE, A771BC, A772MH, A773AB»,

«4. A880AE199, A881 BC199, A882MH99, A883EH199»,

ապրանքները ծովային (գետային) տրանսպորտով փոխադրելու դեպքում՝ նավերի անվանումները. ապրանքներն օդային տրանսպորտով փոխադրելու դեպքում՝ չվերթների համարները:

Տասներորդ-տասնմեկերորդ պարբերությունները հանվել են 2015 թվականի հուլիսի 1-ից: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է այն երկրի ծածկագիրը, որտեղ գրանցված է տրանսպորտային միջոցը, իսկ եթե փոխադրման ժամանակ օգտագործվել է տրանսպորտային միջոցների կազմ, ապա այն երկրի ծածկագիրը, որտեղ գրանցվել է մյուս տրանսպորտային միջոցը (տրանսպորտային միջոցները) շարժման մեջ դրած տրանսպորտային միջոցը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշումների խմբագրությամբ)

Եթե հայտարարագրման պահին հայտնի չէ այն երկիրը, որտեղ գրանցված է տրանսպորտային միջոցը, վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է երկու հատ գրո՝ «00»:

Եթե ապրանքները փոխադրվել են տարբեր երկրներում գրանցված մի քանի տրանսպորտային միջոցներով, վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է երկու հատ ինը՝ «99»:

Պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Եթե հայտարարագրվող ապրանքները՝ դրանց ԱՀ-ում հայտագրված մաքսային ընթացակարգով ձեւակերպելուց առաջ փոխադրվել են մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, ապա վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է տրանսպորտային այն միջոցների ընդհանուր քանակը, որոնց վրա գտնվել են ապրանքները մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրեր ժամանելիս, այլ տեղեկություններ վանդակում չեն նշվում:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշմամբ)

Վանդակը չի լրացվում, եթե հայտարարագրվող ապրանքների նկատմամբ նախքան դրանք ԱՀ-ում հայտագրված մաքսային ընթացակարգով ձեւակերպելը, այդ թվում՝ ավելի վաղ հայտագրված մաքսային ընթացակարգի գործողությունը փոփոխելու կամ ավարտելու դեպքում դրանց միջազգային փոխադրում չի իրականացվել, ապրանքները երկաթուղային տրանսպորտով փոխադրելու, ինչպես նաև միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքները տեղափոխելու դեպքում:

Բելառուսի Հանրապետությունում ապրանքները հայտարարագրելիս վանդակը չի լրացվում.

22) 22-րդ վանդակ. Արժույթը եւ ընդհանուր գումարը՝ ըստ հաշիվ-ապրանքագրի

22. Արժույթը եւ ընդհանուր գումարը՝ ըստ հաշիվ- ապրանքագրի

Վանդակի առաջին ենթաբաժնում Հայաստանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար նշվում է պայմանագրի գնի արժույթի տառային ծածկագիրը, իսկ Բելառուսի Հանրապետության համար՝ վճարման (գնահատման) այն արժույթի տառային ծածկագիրը, որով սահմանված է ԱՀ-ում հայտագրված ապրանքների արժեքը՝ արժույթների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

Եթե պայմանագրի (գործարքի) պայմաններով նախատեսված է գնի ավելի քան մեկ արժույթ (վճարման (գնահատման) արժույթ), գնի արժույթի (վճարման (գնահատման) արժույթի) վերաբերյալ տեղեկությունները հայտագրելիս նշվում է գնի գերակայող արժույթի (վճարման (գնահատման) արժույթի) ծածկագիրը:

Եթե պայմանագրի (գործարքի) վրա տարածվում է գործարքի անձնագրի ձեւակերպման կամ պայմանագրի (գործարքի) գրանցման պահանջ Միության այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան արժութային վերահսկողություն իրականացնելու նպատակով, որի մաքսային մարմին ներկայացվում է ԱՀ-ն, ապա գնի արժույթի (վճարման (գնահատման) արժույթի) վերաբերյալ տեղեկությունները նշվում են գործարքի անձնագրի կամ գրանցված պայմանագրի (գործարքի) հիման վրա:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Պայմանագրի (գործարքի) բացակայության դեպքում նշվում է գնի արժույթի (վճարման (գնահատման) արժույթի) տառային ծածկագիրը՝ առետրային փաստաթղթերում նշված արժույթների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է ապրանքների ընդհանուր արժեքը, որն ստացվել է որպես ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի 42-րդ վանդակներում նշված արժեքների հանրագումար:

Ապրանքների ընդհանուր արժեքի ստացված մեծությունը մաթեմատիկական կանոններով կլորացվում է՝ ստորակետից հետո մինչեւ երկու նիշ ճշտությամբ:

Ռուսաստանի Դաշնությունում տարբեր անվանումներով ապրանքները ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի մեկ ծածկագրի նշումով հայտարարագրելիս նշվում է ցանկում ներկայացված բոլոր ապրանքների արժեքների հանրագումարը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

23) 23-րդ վանդակ. «Արժույթի փոխարժեքը»

23. Արժույթի փոխարժեքը

Վանդակը լրացվում է, եթե հայտարարագրվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու եւ (կամ) մաքսային վճարները հաշվարկելու համար պահանջվում է արտարժույթի փոխարկում:

Վանդակում նշվում է ԱՀ-ի գրանցման օրվա դրությամբ Միության անդամ պետության կենտրոնական (ազգային) բանկի կողմից սահմանված՝ ԱՀ-ի 22-րդ վանդակում նշված ծածկագրով արտարժույթի փոխարժեքը Միության այն անդամ պետության արժույթի նկատմամբ, որի մաքսային մարմին ներկայացվում է ԱՀ-ն:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

24) 24-րդ վանդակ. «Գործարքի բնույթը»

24. Գործարքի բնույթը

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է գործարքի բնույթի եռանիշ թվային ծածկագիրը՝ Միության անդամ պետություններում կիրառվող՝ գործարքի բնույթի դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է արտաքին տնտեսական գործարքի առանձնահատկության երկնիշ թվային ծածկագիրը՝ Միության անդամ պետություններում կիրառվող՝ արտաքին տնտեսական գործարքի առանձնահատկության դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Վանդակի երրորդ ենթաբաժինը չի լրացվում.

25) 25-րդ վանդակ. «Տրանսպորտային միջոցի տեսակը՝ սահմանին»

25. Տրանսպորտային միջոցի տեսակը՝

սահմանին

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է այն տրանսպորտային միջոցի տեսակի ծածկագիրը, որի մասին տեղեկությունները նշված են ԱՀ-ի 21-րդ վանդակում՝ տրանսպորտային միջոցների եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման տեսակների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Ապրանքները երկաթուղային տրանսպորտով փոխադրելու դեպքում, ինչպես նաև միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքները տեղափոխելու դեպքում վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է ծածկագիրը՝ տրանսպորտային միջոցների եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման տեսակների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում ապրանքները հայտարարագրելու դեպքում վանդակի առաջին ենթաբաժնում, հայտարարատուի ունեցած տեղեկությունների հիման վրա, նշվում է տրանսպորտային միջոցի տեսակի ծածկագիրը (տրանսպորտային փոխադրման տեսակը), որով (որի օգտագործմամբ) հայտարարագրվող ապրանքները տեղափոխվել են (տեղափոխվելու են) մաքսային սահմանով՝ տրանսպորտային միջոցների եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման տեսակների դասակարգչին համապատասխան: Եթե հայտարարագրվող ապրանքները մաքսային սահմանով տեղափոխվել են (տեղափոխվելու են) տրանսպորտային միջոցների տարբեր տեսակներով, նշվում է «99» ծածկագիրը՝ տրանսպորտային միջոցների եւ ապրանքների փոխադրման տեսակների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Վանդակի երկրորդ ենթաբաժինը չի լրացվում:

Վանդակը չի լրացվում ավելի վաղ հայտագրված մաքսային ընթացակարգի գործողությունը փոփոխելու կամ ավարտելու դեպքում, եթե հայտարարագրվող ապրանքների նկատմամբ միջազգային փոխադրում (տրանսպորտային

փոխադրում) չի իրականացվել (չի իրականացվելու), ինչպես նաև Միության ապրանքները «անմաքս առետուր» մաքսային ընթացակարգով ձեռակերպելու դեպքում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

26) 26-րդ վանդակ. «Տրանսպորտային միջոցի տեսակը՝ երկրի ներսում»

26. Տրանսպորտային միջոցի տեսակը՝ երկրի ներսում

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է այն տրանսպորտային միջոցի տեսակի ծածկագիրը, որի մասին տեղեկությունները նշված են ԱՀ-ի 18-րդ վանդակում՝ տրանսպորտային միջոցների եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման տեսակների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների տեղափոխման դեպքում վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է ծածկագիրը՝ տրանսպորտային միջոցների եւ ապրանքների փոխադրման տեսակների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Վանդակի երկրորդ ենթաբաժինը չի լրացվում:

Վանդակը չի լրացվում, եթե հայտարարագրվող ապրանքների նկատմամբ նախքան դրանք ԱՀ-ում հայտագրված մաքսային ընթացակարգով ձեւակերպելը, այդ թվում՝ ավելի վաղ հայտագրված մաքսային ընթացակարգի գործողությունը փոփոխելու կամ ավարտելու դեպքում դրանց միջազգային փոխադրում չի իրականացվել:

Բելառուսի Հանրապետությունում ապրանքների հայտարարագրման դեպքում վանդակը չի լրացվում.

27) 29-րդ վանդակ. «Մուտքի (ելքի) մարմինը»

29. Մուտքի (ելքի) մարմինը

Վանդակում նշվում է այն մաքսային մարմնի ծածկագիրը, որի միջոցով ապրանքները մաքսային տարածք են ժամանել՝ Միության անդամ պետություններում կիրառվող՝ մաքսային մարմինների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Եթե ապրանքները մաքսային տարածք ներմուծվում են (ներմուծվել են) Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանի հատվածում տեղակայված անցակետերով, վանդակում նշվում է մաքսային մարմնի ծածկագիրը՝ ըստ հետեւյալ սխեմայի՝

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշմամբ)

$\frac{ZZZYYYXX}{1\ 2\ 3}$, որտեղ՝

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշմամբ)

1-ին տարրը Հայաստանի Հանրապետության եռանիշ թվային ծածկագիրն է.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշմամբ)

2-րդ տարրը՝ «000» թվերը.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշմամբ)

3-րդ տարրը՝ ժամանման վայրում տեղակայված մաքսային մարմնի երկնիշ ծածկագիրը՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ մաքսային մարմինների դասակարգչին համապատասխան:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշմամբ)

Օրինակ՝

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշմամբ)

«05100011»:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշմամբ)

Եթե ապրանքները մաքսային տարածք ներմուծվում են (ներմուծվել են) Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության կամ Ղրղզստանի Հանրապետության մաքսային սահմանի հատվածներում տեղակայված անցակետերով, վանդակում նշվում է մաքսային մարմնի ծածկագիրը՝ ըստ հետեւյալ սխեմայի՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ)

$\frac{ZZZXXXXX}{1 \quad 2}$, որտեղ՝

1-ին տարրը Միության այն անդամ պետության եռանիշ ծածկագիրն է, որի տարածքում տեղակայված է մաքսային մարմինը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

2-րդ տարրը՝ ժամանման վայրում տեղակայված մաքսային մարմնի հնգանիշ ծածկագիրը՝ Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում կամ Ղրղզստանի Հանրապետությունում կիրառվող՝ մաքսային մարմինների դասակարգիչներին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

Օրինակ՝

«11209103», «39852300» կամ «41710302»:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ)

Եթե ապրանքները մաքսային տարածք ներմուծվում են (ներմուծվել են) Ռուսաստանի Դաշնության մաքսային սահմանի հատվածում տեղակայված անցակետերով, վանդակում նշվում է մաքսային մարմնի ութանիշ ծածկագիրը՝ Ռուսաստանի Դաշնությունում կիրառվող՝ մաքսային մարմնի դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝ «10206040»:

Եթե հայտարարագրվող ապրանքները մաքսային տարածք են ներմուծվում տարբեր անցակետերով, վանդակում նշվում են մաքսային տարածք ապրանքների ժամանման վայրերում տեղակայված բոլոր մաքսային մարմինների ծածկագրերը՝ Միության անդամ պետություններում կիրառվող՝ մաքսային մարմինների դասակարգիչներին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Բելառուսի Հանրապետությունում ապրանքների հայտարարագրման դեպքում վանդակը չի լրացվում.

28) 30-րդ վանդակ. «Ապրանքների գտնվելու վայրը»

30. Ապրանքների գտնվելու վայրը

Վանդակում նշվում են այն վայրի մասին տեղեկություններ, որտեղ ապրանքները գտնվում են ԱՀ-ն ներկայացնելու պահին եւ կարող են ներկայացվել մաքսային մարմին՝ դրանց նկատմամբ մաքսային տեսազննում եւ (կամ) մաքսային զննում անցկացնելու համար՝

ապրանքների գտնվելու վայրի ծածկագիրը՝ ապրանքների գտնվելու վայրերի դասակարգչին համապատասխան.

այն մաքսային մարմնի ծածկագիրը, որի գործունեության տարածքում է գտնվում ապրանքների գտնվելու նշված վայրը՝ Միության անդամ պետություններում կիրառվող՝ մաքսային մարմինների դասակարգիչներին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

ապրանքների գտնվելու վայրի փոստային հասցեն՝ առանց փոստային ինդեքսի.

երկաթուղային կայարանի անվանումը (եթե ապրանքների գտնվելու վայրը տեղակայված է երկաթուղային կայարանի (մերձատար ուղիների) տարածքում).

ծովային (գետային) նավահանգստի անվանումը (եթե ապրանքների գտնվելու վայրը տեղակայված է ծովային (գետային) նավահանգստի տարածքում):

Եթե ապրանքները գտնվում են մաքսային հսկողության գոտում, եւ Միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ հաշվառվում են մաքսային հսկողության գոտիները (դրանց տրվում են գրանցման համարներ), ի լրումն սույն ենթակետի չորրորդ եւ հինգերորդ պարբերություններով նախատեսված տեղեկությունների՝ նշվում է մաքսային հսկողության գոտու գրանցման համարը: Ընդ որում, սույն ենթակետի վեցից ութերորդ, տասներկուերորդ, տասնհինգերորդ եւ տասնութերորդ պարբերություններով նախատեսված տեղեկությունները վանդակում չեն նշվում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

«21, 16000, ՄՄ թիվը - 1601/0000246»:

Եթե ապրանքները գտնվում են ժամանակավոր պահպանման պահեստում, սեփական ապրանքների պահպանման պահեստում, մաքսային պահեստում, ազատ պահեստում, անմաքս առետրի խանութում, լիազորված տնտեսական օպերատորի շինություններում, բաց հրապարակներում եւ այլ տարածքներում, ի լրումն սույն ենթակետի չորրորդ-ութերորդ պարբերություններով նախատեսված տեղեկությունների՝ նշվում է ժամանակավոր պահպանման պահեստի, սեփական ապրանքների պահպանման պահեստի, մաքսային պահեստի, ազատ պահեստի, անմաքս առետրի խանութի տիրապետողին, լիազորված տնտեսական օպերատորին համապատասխան ռեեստրում ներառելու մասին վկայող փաստաթղթի համարը:

Օրինակ՝

«11, 50700, ՂԱԶԱԽՍՏԱՆ, ՔԱՂ. ԱԿՏԱՌԻ, ՈՒՄԻՐԶԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՎԱՆ, «ԱԿՏԱՌԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԾՈՎԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆԱՎԱՀԱՆԳԻՍ» ՏՊԶ-ի (տարածաշրջանային պետական ձեռնարկություն) ՏԱՐԱԾՔ, ԹԻՎ 333 - Պ»:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշման խմբագրությամբ)

Եթե Միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան մաքսային մարմնի գրավոր թույլտվությամբ ապրանքների ժամանակավոր պահպանությունն իրականացվում է սույն ենթակետի տասներկուերորդ պարբերությունում չնշված ժամանակավոր պահպանության վայրերում, ի լրումն սույն ենթակետի չորրորդ-ութերորդ պարբերություններով նախատեսված տեղեկությունների՝ նշվում են այդ վայրերում ապրանքների ժամանակավոր պահպանությունը թույլատրող՝ մաքսային մարմնի կողմից տրված փաստաթղթի համարը եւ ամսաթիվը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

«31, 10510000, ՌՌԻՍԱՍՏԱՆ, ՉԵԼՅԱԲԻՆՍԿԻ ՄԱՐԶ, ՔԱՂ. ՄԱԳՆԻՏՈԳՈՐՍԿ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՓՈՂ., ՏՈՒՆ 27, 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԹԻՎ 10510/006»:

Եթե Միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ապրանքների ժամանակավոր պահպանման վայրն ավտոտրանսպորտային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցն է, ի լրումն սույն ենթակետի չորրորդ-ութերորդ պարբերություններով նախատեսված տեղեկությունների, տրանսպորտային միջոցների եւ ապրանքների փոխադրման տեսակների դասակարգչին համապատասխան՝ նշվում է տրանսպորտային միջոցի տեսակի ծածկագիրը եւ «,» նշանից հետո բաժանման նշանով, առանց միջակայքերի՝ տրանսպորտային միջոցների գրանցման համարները:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

«52, 50305, ՂԱԶԱԽՍՏԱՆ, ՔԱՂ. ԱՍՏԱՆԱ, 310-ՐԴ ԳՎԱՐԴԻԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՓՈՂ., 20.011246,011247,011248»:

Ապրանքների նախնական հայտարարագրման ժամանակ սույն ենթակետի երրորդ-քսաներորդ պարբերություններով սահմանված կարգով նշվում են այն վայրի մասին տեղեկությունները, որտեղ ապրանքները ներկայացվելու են մաքսային մարմնին՝ դրանց նկատմամբ մաքսային տեսազննում եւ (կամ) մաքսային զննում անցկացնելու եւ դրանց բացթողման մասին որոշում ընդունելու համար:

Վանդակը չի լրացվում՝

եթե ապրանքների բացթողումն իրականացվել է նախքան Օրենսգրքի 197-րդ հոդվածի սահմանված կարգով ԱՀ-ն ներկայացնելը.

պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված՝ ապրանքների հայտարարագրման առանձնահատկությունների կիրառման ժամանակ Օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում (մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար թերի, պարբերական, ժամանակավոր, լրացուցիչ ժամանակավոր կամ ամբողջական ԱՀ ներկայացնելու դեպքում, եթե ԱՀ-ի 7-րդ վանդակում նշված է ապրանքների հայտարարագրման առանձնահատկության համապատասխան ծածկագիրը՝ ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունների դասակարգչին համապատասխան), եթե Միության անդամ պետությունների օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

այն ապրանքների նկատմամբ «ոչնչացում» մաքսային ընթացակարգի կիրառման ժամանակ, որոնք ոչնչացել, անվերադարձ կորել են վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով:

(28-րդ ենթակետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

29) 31-րդ վանդակ. «Բեռնատեղիները եւ ապրանքների նկարագրությունը»

31. Բեռնատեղիները եւ ապրանքների նկարագրությունը	Մակնշումը եւ քանակը - Բեռնարկերի համարները - Քանակը եւ առանձնահատկությունները

Վանդակում նշվում են հայտարարագրվող ապրանքի մասին այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են մաքսային եւ այլ վճարների հաշվարկման եւ գանձման համար, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին, արգելքների ու սահմանափակումների կիրառումն ապահովելու, մաքսային մարմինների կողմից մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցներ ընդունելու, նույնականացման, ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ տասանիշ ծածկագրին դասելու համար, ինչպես նաեւ բեռնատեղիների մասին:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Տվյալ վանդակում հայտագրվող տեղեկությունները նշվում են նոր տողից՝ դրանց հերթական համարը դնելով:

1-ին համարի տակ նշվում են՝

ապրանքի անվանումը (առետրային, կոմերցիոն կամ այլ ավանդական անվանում) եւ արտադրողի մասին տեղեկություններ (նրա մասին տեղեկությունների առկայության դեպքում), ապրանքային նշանների, մակնիշների, մոդելների, ապրանքատեսակների, տեսակների, ստանդարտների եւ տեխնիկական ու կոմերցիոն այլ բնութագրերի, ինչպես նաեւ հայտարարագրվող ապրանքի քանակական եւ որակական կազմի վերաբերյալ տեղեկություններ.

չափման հիմնական կամ լրացուցիչ միավորից տարբերվող (քանակը եւ պայմանական նշագիրը), այդ թվում՝ մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման ժամանակ օգտագործվող լրացուցիչ բնութագրերի եւ պարամետրերի

դասակարգչին համապատասխան ապրանքի բնութագրերի եւ պարամետրերի մասին տեղեկությունները՝ չափման միավորների տեսքով, ինչպես նաեւ ապրանքի թողարկման (արտադրման) ամսաթիվն այն դեպքում, եթե այդ տեղեկություններն անհրաժեշտ են մաքսատուրքերի, հարկերի, ինչպես նաեւ վերաներմուծման ժամանակ վճարման ենթակա այլ վճարների հաշվարկման ու գանձման եւ (կամ) արգելքների ու սահմանափակումների կիրառումն ապահովելու համար.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Նավթի, նավթամթերքների, գազի հայտարարագրման ժամանակ լրացուցիչ նշվում են այն ծագման վայրի վերաբերյալ տեղեկություններ, որտեղ դրանք արդյունահանվել են, եթե այդ տեղեկություններն ազդում են դասակարգման ծածկագիրն ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի որոշելու վրա:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

մտավոր սեփականության օբյեկտների մաքսային ռեեստրում ներառված մտավոր սեփականության օբյեկտներ պարունակող ապրանքների հայտարարագրման ժամանակ լրացուցիչ նշվում է մտավոր սեփականության օբյեկտի գրանցման համարն ըստ այդ ռեեստրի (առկայության դեպքում):

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի ապրիլի 24-ի որոշմամբ)

Ապրանքների առանձին կատեգորիաների նկատմամբ 1-ին համարի վանդակը լրացնելու ժամանակ, նշվում են տեղեկություններ՝ ըստ 2-4-րդ հավելվածների կազմված ցանկերի, այն դեպքում, եթե այդ տեղեկությունները նշված չեն եղել սույն ենթակետի չորրորդ-վեցերորդ պարբերություններին (աղյուսակից հետո) համապատասխան:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 133 որոշմամբ)

ԱՀ-ի 31-րդ վանդակում 1-ին համարի տակ հայտագրվող ապրանքների առանձին կատեգորիաների նկարագրությանը ներկայացվող լրացուցիչ պահանջները կարող են սահմանվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշմամբ եւ (կամ) Միության անդամ պետության օրենսդրությամբ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում՝ 1-ին կետի տակ՝

Ցանկի օգտագործմամբ ապրանքների հայտարարագրման ժամանակ կատարվում է գրառում. «Ապրանքները՝ համաձայն կից ներկայացվող թիվ _____ Ցանկի՝ _____թերթի վրա:», եւ նշվում է ցանկում թվարկված ապրանքների ընդհանուր քանակը՝ չափման հիմնական եւ լրացուցիչ (առկայության դեպքում) միավորներով.

չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ տեսքով ապրանքների հայտարարագրման ժամանակ 1-ին համարի տակ նշվում է ապրանքի անվանումը, փակագծերում թվարկվում են մեքենայի հայտարարագրվող բաղադրամասերի համարները (դիրքերը) այն ցանկի համաձայն, որը կցվում է մաքսային մարմնի՝ չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ տեսքով ապրանքի՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան դասակարգման մասին որոշմանը , որի ներմուծումը կամ արտահանումը սահմանված ժամկետում ենթադրվում է ապրանքային մի քանի խմբաքանակներով, եւ այնուհետեւ նշվում են մեքենայի հայտարարագրվող բաղադրամասերի անվանումների մասին տեղեկություններ՝ սույն վանդակի տվյալ համարի տակ տեղեկությունների հայտագրման ընդհանուր կանոններին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում 1-ին համարի տակ նաեւ կատարվում է գրառում՝ «Ապրանքները՝ համաձայն կից ներկայացվող ցանկի», եթե տարբեր անվանումներով ապրանքների հայտարարագրումը կատարվում է մեկ դասակարգման ծածկագրի նշումով՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

Ղազախստանի Հանրապետությունում եւ Ղրղզստանի Հանրապետությունում չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ տեսքով տեղափոխվող ապրանքների հայտարարագրման ժամանակ վանդակում 1-ին համարի տակ նշվում են մեքենայի անվանումը՝ չհավաքված տեսքով ապրանքի դասակարգման մասին որոշման հիման վրա, ինչպես նաեւ մեքենայի բաղադրամասի անվանումը (ապրանքային նշան, մակնիշ, մոդել, ապրանքատեսակ, տեսակ, ստանդարտներ եւ տեխնիկական ու կոմերցիոն այլ բնութագրեր, ինչպես նաեւ մեքենայի բաղադրամասի քանակական եւ որակական կազմի մասին տեղեկություններ՝ չափման լրացուցիչ միավորներով, եթե մեքենայի այդ բաղադրամասի նկատմամբ չափման լրացուցիչ միավոր է օգտագործվում) եւ դասակարգման տասանիշ ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի, չհավաքված տեսքով ապրանքների դասակարգման մասին որոշման հավելվածի համաձայն:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

2-րդ համարի տակ նշվում են՝

փաթեթվածք ունեցող ապրանքի համար ստորակետից հետո՝ ապրանքով զբաղեցված բեռնատեղիների ընդհանուր թիվը (եթե ապրանքը բեռնատեղիներն ամբողջությամբ չի զբաղեցնում, ապա փակագծերում լրացուցիչ նշվում է ապրանքով մասամբ զբաղեցված բեռնատեղիների քանակը՝ «/» նշանից հետո «տեղի մասը» գրառումը կատարելով), ապրանքի փաթեթվածքի տեսակների ծածկագրերը՝ բեռի, փաթեթվածքի եւ փաթեթավորման նյութերի տեսակների դասակարգչին համապատասխան՝ փաթեթվածքների քանակն ըստ յուրաքանչյուր տեսակի «/» նշանից հետո նշելով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Ընդ որում, «փաթեթվածք» ասելով ենթադրվում են ապրանքների փաթեթավորման, պաշտպանության, տեղաբաշխման եւ ամրացման կամ բաժանման համար ծառայող կամ նախատեսված ցանկացած արտադրատեսակ եւ նյութ՝ բացառությամբ խուռնաբեռն փոխադրվող փաթեթավորման նյութերի (ծղոտ, թուղթ, ապակեթեղք, տաշեղ եւ այլն)։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ)

տրանսպորտային միջոցի սարքավորված տարաներով՝ առանց փաթեթվածքի, սորուն, խուռնաբեռն, լցովի փոխադրվող ապրանքի համար նշվում է ծածկագիրը՝ բեռի տեսակների, փաթեթվածքի եւ փաթեթավորման նյութերի դասակարգչին համապատասխան։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

եթե հայտարարագրվող ապրանքը գտնվում է տակդիրների վրա՝ տակդիրների եւ դրանց քանակի մասին տեղեկություններ՝ տակդիրի ծածկագրի «/» բաժանիչ նշանի նշումով՝ բեռի, փաթեթվածքի եւ փաթեթավորման նյութերի տեսակների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Ընդ որում, «տակդիր» ասելով ենթադրվում է սարքվածքը, որի փովածքի վրա կարելի է միասին որոշ քանակի ապրանք տեղավորել, որպեսզի

մեխանիկական ապարատների օգնությամբ դրա տեղափոխման, բեռնման (բեռնաթափման) կամ դարսման նպատակով կազմվի տրանսպորտային փաթեթ: Այդ սարքվածքը կազմված է միմյանց պահանգներով միացած երկու փովածքներից կամ ոտքերի վրա հենված մեկ փովածքից: Սարքվածքը պետք է ունենա հնարավորինս քիչ ընդհանուր բարձրություն, որը թույլատրում է ժանիավոր բեռնիչների կամ տակդիրների փոխադրման սայլակների օգնությամբ դրա բեռնումը (բեռնաթափումը), ինչպես նաև կարող է վերնակառույց ունենալ կամ չունենալ:

Եթե ապրանքը սպառողական եւ (կամ) անհատական տարա ունի, ապա 2.1 համարի տակ լրացուցիչ՝ առանց միջակայքերի, ստորակետով անջատված, նշվում են այդ տարայի տեսակների ծածկագրերը՝ բեռի, փաթեթվածքի եւ փաթեթավորման նյութերի տեսակների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում 2-րդ համարի տակ նշվում են այն բեռնատեղիների տեսակն ու քանակը, որոնց մեջ այդ ապրանքը փաթեթավորված է:

Պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

3-րդ համարի տակ նշվում են՝

բեռնարկներում փոխադրվող ապրանքի համար՝ բեռնարկների տեսակը՝ բեռի, փաթեթվածքի եւ փաթեթավորման նյութերի տեսակների դասակարգչին համապատասխան, բեռնարկների քանակը՝ դրանց համարի «՝» նշանով: Եթե հայտարարագրվող ապրանքներն ամբողջ բեռնարկը չեն զբաղեցնում, համարից հետո կատարվում է գրառում՝ «մաս»:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում 3-րդ համարի տակ, ստորակետով անջատված, նշվում են բեռնարկների համարները:

4-րդ համարի տակ նշվում են՝

մակնշված ենթակցիզային ապրանքների համար՝ ակցիզային եւ (կամ) հատուկ մականշվածքների սերիան, համարները եւ քանակը՝ ըստ յուրաքանչյուր սերիայի:

Ակցիզային եւ (կամ) հատուկ մականշվածքների՝ անընդմեջ հաջորդող համարների մասին տեղեկությունները նշվում են համապատասխան տիրույթի առաջին եւ վերջին համարի «/» բաժանիչ նշանի նշումով:

Բելառուսի Հանրապետությունում 4-րդ համարի տակ նշվում է ակցիզային մականշվածքների քանակը:

5-րդ համարի տակ նշվում են՝

մատակարարման տարբեր պայմաններով տեղափոխվող ապրանքների համար (ԱՀ-ի 20-րդ վանդակում նշված է՝ «Տարբեր») «/» բաժանիչ նշանի նշումով, մատակարարման պայմանների դասակարգչին համապատասխան, նշվում են հայտարարագրվող ապրանքի մատակարարման պայմանների (բազիսային պայմանների) ծածկագրերը՝ մատակարարման յուրաքանչյուր պայմանի (բազիսային պայմանի) համար՝ «/» բաժանիչ նշանի նշումով, աշխարհագրական կետերի անվանումների թվարկմամբ՝ ստորակետով.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Ռուսաստանի Դաշնությունում, եթե տարբեր անվանումների ապրանքները հայտարարագրվում են ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ ծածկագրի նշումով, 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ համարների տակ հայտագրվող տեղեկությունները պետք է նշվեն մեկ ապրանքային խմբաքանակում ներառված բոլոր ապրանքների համար:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Ապրանքները «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս, եթե ԱՀ-ն օգտագործվում է որպես մաքսային տարածքում վերամշակման պայմանների մասին փաստաթուղթ, 6-րդ համարի տակ նշվում են՝

վերամշակման արդյունքների ելքի հայտագրվող չափաքանակը.

վերամշակման արդյունքների անվանումը եւ քանակը.

վերամշակման արդյունքների մեջ ներմուծված ապրանքների նույնականացման եղանակները.

թափոնների ու մնացորդների անվանումը եւ ծածկագիրը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

օտարերկրյա ապրանքները համարժեք ապրանքներով փոխարինելու մասին տեղեկություններ:

Ապրանքների հայտարարագրման առանձնահատկությունների կիրառման ժամանակ (պարբերական, ժամանակավոր, կողմնորոշիչ տեղեկությունների հայտագրում եւ այլն) Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերով ու ակտերով եւ (կամ) Միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված ժամկետներին համապատասխան՝ 7-րդ համարի տակ նշվում է՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

«XX.XX.XXXX-ից մինչեւ XX.XX.XXXX-ն ընկած ժամանակահատվածում մատակարարում», որտեղ թվային նիշերով նշվում են ապրանքների մատակարարման ժամանակահատվածի սկզբի «օրը, ամիսը, տարին» եւ ավարտի «օրը, ամիսը, տարին»:

Պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի հունվարի 31-ի թիվ 16 որոշում:

Քառասուներկուերորդ-քառասուներեքերորդ պարբերությունները հանվել են 2015 թվականի հուլիսի 1-ից. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

10-րդ համարի տակ նշվում են՝

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի հունվարի 26-ի թիվ 8 որոշմամբ)

հսկիչ (նույնականացման) նշաններով մակնշման ենթակա ապրանքների՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 70 որոշմամբ հաստատված ցանկում (այսուհետ՝ հսկիչ նշաններով մակնշման ենթակա ապրանքների ցանկ) ներառված եւ «վերաներմուծում» կամ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպվող ապրանքների համար՝ զետեղված հսկիչ

(նույնականացման) նշանների քանակը եւ «,» բաժանիչ նշանից հետո՝ առանց միջակայքի՝ դրանց նույնականացման համարները (նույնականացուցիչները):

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի հունվարի 26-ի թիվ 8 որոշմամբ)

Անընդմեջ հաջորդող զետեղված հսկիչ (նույնականացման) նշանների նույնականացման համարները (նույնականացուցիչները) նշվում են համապատասխան տիրույթի առաջին եւ վերջին համարի «/» բաժանիչ նշանի նշումով:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի հունվարի 26-ի թիվ 8 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի հուլիսի 18-ի թիվ 91 որոշման խմբագրությամբ)

Այն դեպքում, եթե «վերաներմուծում» եւ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպվող ապրանքների՝ հսկիչ (նույնականացման) նշաններով մակնշումը իրականացվելու է Միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ապրանքների բացթողումից հետո, զետեղված հսկիչ (նույնականացման) նշանների քանակի եւ դրանց նույնականացման համարների (նույնականացուցիչների) փոխարեն նշվում է «ПВ» երկնիշ թվային ծածկագիրը.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի հունվարի 26-ի թիվ 8 որոշմամբ)

30) 32-րդ վանդակ. «Ապրանք»

32. Ապրանք

Վանդակում թվային նիշերով նշվում է ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի 31-րդ վանդակներում նշված հայտարարագրվող ապրանքի հերթական համարը՝ սկսած մեկ՝ «1» թվից:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է՝

միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների հայտարարագրման ժամանակ՝ «ՄՓԱ» տառային կրճատ հապավումը.

էքսպրես բեռների հայտարարագրման ժամանակ՝ «ԷՔԲ» տառային կարճ հապավումը:

Ռուսաստանի Դաշնությունում, եթե տարբեր անվանումների ապրանքների հայտարարագրումը կատարվում է ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ ծածկագրի նշումով, ԱՀ-ի հիմնական թերթի վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է «1» թիվը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

31) 33-րդ վանդակ. «Ապրանքի ծածկագիրը»

33. Ապրանքի ծածկագիրը

Վանդակի առաջին ենթաբաժնում առանց միջակայքերի նշվում է ապրանքի դասակարգման տասանիշ ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է՝

«Դ» տառը, եթե հայտարարագրվող ապրանքները ներառված են հսկիչ նշաններով մակնշման ենթակա ապրանքների ցանկում, սակայն հսկիչ (նույնականացման) նշաններով մակնշման մասով պահանջները, ««Հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ եւ այլ արտադրատեսակներ՝ բնական մորթուց» ապրանքային դիրքի համաձայն՝ հսկիչ (նույնականացման) նշաններով ապրանքների մակնշման ներդրման փորձնական ծրագիրը 2015 - 2016 թվականներին իրականացնելու մասին» 2015 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրի 3-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան, դրանց վրա չեն տարածվում.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի հունվարի 26-ի թիվ 8 որոշմամբ)

«Ա» տառը (արգելքների եւ սահմանափակումների կիրառումից ազատ), եթե ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման ծածկագրի եւ (կամ) անվանման հայտարարագրվող ապրանքների նկատմամբ, Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերին եւ ակտերին եւ (կամ) Միության այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի մաքսային մարմին ներկայացվում է ԱՀ-ն, մաքսային տարածք ներմուծելիս կիրառվում են արգելքներ ու սահմանափակումներ, բայց ըստ իրենց բնութագրերի եւ (կամ) կիրառման ոլորտի չեն համապատասխանում այն ապրանքներին, որոնց նկատմամբ կիրառվում են այդ միջոցները.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Ղազախստանի Հանրապետությունում նշվում է արգելքների եւ սահմանափակումների պահպանման տառային ծածկագիրը՝ Ղազախստանի Հանրապետությունում կիրառվող դասակարգչի համաձայն.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

«Մտ» տառերը (մտավոր սեփականության), եթե հայտարարագրվող ապրանքները պարունակում են մտավոր սեփականության օբյեկտներ եւ (կամ) մտավոր սեփականության օբյեկտների մաքսային ռեեստրի մեջ ներառված օբյեկտների նշաններ.

Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ ծածկագրի նշումով տարբեր անվանումների ապրանքների հայտարարագրման ժամանակ՝ «Մե» տառերը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

Եթե հայտարարագրվող ապրանքները միաժամանակ համապատասխանում են նշված մի քանի պայմաններին, համապատասխան տառերը նշվում են հերթականությամբ՝ առանց միջակայքերի:

Ութերորդից տասներորդ պարբերությունները հանվել են. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշում

Վանդակի երրորդ ենթաբաժնում առանց միջակայքերի նշվում է ծածկագրի չորս նշան՝ մաքսային լրացուցիչ տեղեկատվության՝ Միության անդամ պետություններում օգտագործվող դասակարգչին համապատասխան, եթե նշված դասակարգիչը պարունակում է վանդակի առաջին ենթակետում նշված ապրանքի ծածկագիրն ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Ղազախստանի Հանրապետությունում այն ապրանքների հայտարարագրման ժամանակ, որոնց նկատմամբ Օրենսգրքի 372-րդ հոդվածին համապատասխան դրույթներ են կիրառվում, վանդակի երրորդ ենթաբաժնում նշվում է Ղազախստանի Հանրապետության օրենսդրությամբ կիրառվող ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան ապրանքի դասակարգման ծածկագիրը, որի գործողության սկիզբը սահմանված է ԱՀ 44-րդ վանդակում նշված փաստաթղթում (պայմանագրում)՝ «03998» ծածկագրի տակ.

32) 34-րդ վանդակ. «Ծագման երկրի ծածկագիրը»

34. Ծագման երկրի ծածկագիրը			
a		b	

Վանդակի «ա» ենթաբաժնում նշվում է հայտարարագրվող ապրանքի ծագման երկրի ծածկագիրը, որի մասին տեղեկությունները նշվում են ԱՀ 31-րդ վանդակում՝ աշխարհի երկրների դասակարգչի համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշումների խմբագրությամբ)

Եթե ապրանքի վրա զետեղված մականշվածքը կամ առետրային, տրանսպորտային (փոխադրման) եւ այլ փաստաթղթեր չեն նշում ապրանքների ծագման կոնկրետ երկիրը, այլ տեղեկություններ են պարունակում Եվրոպական միության տարածքից ապրանքների ծագման մասին, լատինական տառերով նշվում է «EU» երկնիշ թվային ծածկագիրը:

Եթե ապրանքի ծագման երկիրն անհայտ է, ծածկագրի փոխարեն դրվում է երկու զրո՝ «00»:

Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման, մեկ ծածկագրի նշումով տարբեր

անվանումների ապրանքների հայտարարագրման ժամանակ վանդակի «ա» ենթաբաժնում նշվում է այն երկրի ծածկագիրը, որտեղից ծագում են ապրանքները, որոնց դասակարգման ծածկագիրն ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի նշված է ԱՀ 33-րդ վանդակում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

Վանդակի «բ» ենթաբաժինը չի լրացվում.

33) 35-րդ վանդակ. «Համաքաշը (կգ)»

35. Համաքաշը (կգ)

Վանդակում կիլոգրամներով նշվում է ապրանքի «համախառն» զանգվածը, որի մասին տեղեկությունները նշվում են ԱՀ 31-րդ վանդակում: «Համախառն» զանգված ասելով ենթադրվում է ապրանքի ընդհանուր զանգվածը, ներառյալ՝ մինչեւ շրջանառության մեջ դրվելը դրա անփոփոխ վիճակն ապահովելու համար անհրաժեշտ փաթեթավորման բոլոր տեսակները՝ բացառությամբ բեռնարկղերի եւ տրանսպորտային սարքավորումների:

Նշվող արժեքը ստորակետից հետո կլորացվում է մինչեւ երեք նիշ, իսկ եթե ապրանքի ընդհանուր զանգվածը կազմում է 1 գրամից պակաս, ապա ստորակետից հետո մինչեւ վեց նիշ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 167 որոշման խմբագրությամբ)

Երրորդ եւ չորրորդ պարբերությունները հանվել են: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 167 որոշում:

Պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Ռուսաստանի Դաշնությունում ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ ծածկագրի նշումով տարբեր անվանումների ապրանքների հայտարարագրման ժամանակ նշվում է ցանկում բերված բոլոր ապրանքների «համախառն» զանգվածը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Վանդակը չի լրացվում ապրանքների իրացման հետ կապված օդանավերով, երկաթուղային եւ այլ տեսակի տրանսպորտով տեղափոխվող կանխիկ արժույթի (թղթադրամների եւ մետաղադրամների տեսքով հասույթի եւ փոխանակման արժույթի) հայտարարագրման դեպքում.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

34) 36-րդ վանդակ. «Առանձնաշնորհումը»

36. Առանձնաշնորհումը

Վանդակում, ըստ մաքսային վճարի յուրաքանչյուր տեսակի, նշվում է համապատասխան ծածկագիրը՝ մաքսային վճարների վճարման արտոնությունների դասակարգչին համապատասխան՝ ըստ ստորեւ բերված սխեմայի՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

1-ին տարր՝ ըստ մաքսավճարների.

2-րդ տարր՝ ըստ մաքսատուրքի.

3-րդ տարր՝ ըստ ակցիզի (ակցիզների).

4-րդ տարր՝ ըստ ավելացված արժեքի հարկի: Եթե հայտարարագրվող ապրանքների համար մաքսային վճարի դրույքաչափը սահմանված չէ, կամ այլ դեպքերում, երբ մաքսային վճարի պարտավորություն չի առաջանում, մաքսային վճարի տվյալ տեսակին համապատասխանող տարրի յուրաքանչյուր կարգում նշվում է՝

Հայաստանի Հանրապետությունում, Բելառուսի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում՝ «-» նշանը (գիծը).

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Ղազախստանի Հանրապետությունում եւ Ղրղզստանի Հանրապետությունում՝ «Z» տառը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ)

35) 37-րդ վանդակ. «Ընթացակարգ»

37. ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է բաղադրիչ ծածկագիրը, որը կազմվում է հետեւյալ սխեմայով՝

$\frac{XX}{1} \frac{XX}{2}$, որտեղ՝

1-ին տարրը՝ հայտագրվող մաքսային ընթացակարգի երկնիշ ծածկագիրն է՝ մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգչին համապատասխան.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

2-րդ տարրը՝ նախորդող մաքսային ընթացակարգի երկնիշ ծածկագիրը՝ մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգչին համապատասխան, եթե հայտարարագրվող ապրանքները նախկինում ձեւակերպված են եղել այլ մաքսային ընթացակարգով՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգչին համապատասխան՝ այն մաքսային ընթացակարգի երկնիշ ծածկագիրը, որով նախկինում ձեւակերպվել են այն ապրանքները, որոնցից ստացվել (արտադրվել) է հայտարարագրվող ապրանքը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

երկու զրո՝ «00», եթե հայտարարագրվող ապրանքները նախկինում չեն ձեւակերպվել այլ մաքսային ընթացակարգով:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է հայտարարագրվող ապրանքների տեղափոխման առանձնահատկության եռանիշ ծածկագիրը՝ ապրանքների տեղափոխման առանձնահատկությունների դասակարգչին համապատասխան.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

36) 38-րդ վանդակ. «Զտաքաշը (կգ)»

Վանդակում կիրառվածներով նշվում է հայտարարագրվող ապրանքի «զուտ» զանգվածը՝

փաթեթավորված տեսքով տեղափոխվող ապրանքի համար՝

հայտարարագրված ապրանքի զանգվածը՝ հաշվի առնելով միայն առաջնային փաթեթվածքը, եթե այդ փաթեթվածքում, ելնելով սպառողական հատկություններից, ապրանքները տրամադրվում են մանրածախ առևտրի համար, եւ (կամ) ապրանքի վաճառքի ժամանակ դրա պահպանմանը նպաստող առաջնային փաթեթվածքը չի կարող ապրանքից առանձնացվել մինչեւ դրա օգտագործումը՝ առանց ապրանքի սպառողական հատկությունների խախտման.

հայտարարագրված ապրանքի զանգվածը՝ առանց որեւէ փաթեթվածք հաշվի առնելու՝ մնացած դեպքերում.

առանց փաթեթվածքի (սորուն, խուռնաբեռն, լցովի) տեղափոխվող ապրանքի համար՝ ապրանքի ընդհանուր զանգվածը:

Նշվող արժեքը ստորակետից հետո կլորացվում է մինչեւ երեք նիշ, իսկ եթե ապրանքի ընդհանուր զանգվածը կազմում է 1 գրամից պակաս, ապա ստորակետից հետո մինչեւ վեց նիշ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 167 որոշման խմբագրությամբ)

Յոթերորդ եւ ութերորդ պարբերությունները հանվել են: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 167 որոշում:

Բաժանիչ «/» նշանով նշվում է հայտարարագրվող ապրանքի «զուտ» զանգվածը՝ առանց բոլոր տեսակի փաթեթվածքները հաշվի առնելու՝ տրանսպորտային (փոխադրման), առևտրային, այլ փաստաթղթերում կամ ապրանքի փաթեթվածքի վրա այդ տեղեկությունների առկայության դեպքում:

Բելառուսի Հանրապետությունում, եթե, առանց բոլոր տեսակի փաթեթվածքները հաշվի առնելու, «զուտ» զանգվածի մասին տեղեկությունները հայտնի չեն, վանդակում «/» բաժանիչ նշանով նշվում է հայտարարագրվող ապրանքի «զուտ» զանգվածը:

Պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ ծածկագրի նշումով տարբեր անվանումների ապրանքների հայտարարագրման ժամանակ նշվում է ցանկում բերված բոլոր ապրանքների «զուտ» զանգվածը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

Վանդակը չի լրացվում ապրանքների իրացման հետ կապված օդանավերի հարթակներին, երկաթուղային եւ այլ տեսակի տրանսպորտով տեղափոխվող կանխիկ արժույթի (թղթադրամների եւ մետաղադրամների տեսքով հասույթի եւ փոխանակման արժույթի) հայտարարագրման դեպքում.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

37) 39-րդ վանդակ. «Քվոտան»

39. Քվոտան

Վանդակը լրացվում է, եթե Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերին եւ ակտերին համապատասխան՝ հայտարարագրվող

ապրանքների նկատմամբ սահմանված են քանակական կամ արժեքային սահմանափակումներ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Վանդակում նշվում են լիցենզիայում նշված չափման միավորներով հատկացված քվոտայի մնացորդի մասին տեղեկություններ՝ հաշվի առնելով, որ քվոտայի մնացորդը որոշելիս հայտարարագրվող ապրանքները հաշվի չեն առնվում:

Օրինակ՝

հատկացված քվոտան՝ ըստ լիցենզիայի՝ 10000 խոր. մ. ապրանքների հայտարարագրվող առաջին խմբաքանակը՝ 4000 խոր. մ: 39-րդ վանդակում նշվում է՝ «10000 խոր. մ»:

Ապրանքների հաջորդ խմբաքանակի հայտարարագրման ժամանակ տվյալ լիցենզիայով հատկացված քվոտայի հաշվին 39-րդ վանդակում նշվում է քվոտայի մնացորդը՝ «6000 խոր. մ»:

Ղազախստանի Հանրապետությունում լրացուցիչ կերպով «/» բաժանիչ նշանով նշվում է հայտարարագրվող ապրանքի քանակն այն չափման միավորով, որն անհրաժեշտ է քվոտան հանելու համար:

Բելառուսի Հանրապետությունում ապրանքի հայտարարագրման ժամանակ վանդակում թվային նիշերով նշվում են այն հայտարարագրվող ապրանքի քանակը, որի նկատմամբ քվոտայի հատկացման դեպքում լիցենզիայում սահմանված չափման միավորով սահմանված է այնպիսի քվոտավորում (լիցենզավորում), որը սահմանված է տեխնիկական կանոնակարգերին եւ (կամ) ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերին եւ (կամ) օրենսդրական այլ ակտերի համապատասխան, եւ ստորակետից հետո կլորացված է մինչեւ երեք նիշ ճշտությամբ, եւ «/» բաժանիչ նշանով՝ նշված ապրանքի՝ քվոտայի հատկացման

դեպքում սահմանված չափման միավորի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ում կիրառվող չափման միավորներին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Այն դեպքերում, երբ ապրանքի նկատմամբ քանակական սահմանափակումները սահմանված են քաշի միավորներով, վանդակում նշվում է ապրանքի «զտաքաշը»՝ առանց փաթեթվածքի բոլոր տեսակները հաշվի առնելու, ապրանքի «զտաքաշի» մասին տեղեկատվության բացակայության դեպքում, առանց փաթեթվածքի բոլոր տեսակները հաշվի առնելու՝ ապրանքի «զտաքաշը»՝ փաթեթվածքով.

38) 40-րդ վանդակ. Ընդհանուր հայտարարագիրը/Նախորդող փաստաթուղթը

40. Ընդհանուր հայտարարագիրը/Նախորդող փաստաթուղթը

Վանդակում նշվում են ապրանքն ԱՀ-ի ներկայացմանը նախորդող մաքսային ընթացակարգով ձեւակերպելու ժամանակ տրված ԱՀ-ի գրանցման համարը՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի, եւ «/» բաժանիչ նշանով՝ այդ ապրանքի հերթական համարը՝ նախորդող ԱՀ-ի 32-րդ վանդակի առաջին ենթաբաժնից:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի ապրիլի 24-ի թիվ 35 որոշման խմբագրությամբ)

Եթե ապրանքային խմբաքանակը բաղկացած է մի քանի ապրանքներից, որոնցից յուրաքանչյուրը նախկինում առանձին ԱՀ-ներով ձեւակերպվել է նախորդող մաքսային ընթացակարգով, վանդակում նոր տողից «/» բաժանիչ նշանով նշվում են տողի հերթական համարը, նախորդող ԱՀ-ի գրանցման

համարը եւ ապրանքի հերթական համարը՝ այդ նախորդող ԱՀ-ի 32-րդ վանդակի առաջին ենթաբաժնից:

Եթե ապրանքների բացթողումը, Օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան, կատարվել է մինչեւ ԱՀ-ն ներկայացնելը, վանդակում նշվում է պարտավորության գրանցման համարը:

Վանդակը չի լրացվում, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառման ժամանակ համարժեք ապրանքների վերամշակումից ստացված՝ վերամշակման արդյունքների արտահանումն իրականացվում է նախքան օտարերկրյա ապրանքների ներմուծումը:

Ղազախստանի Հանրապետությունում ամբողջական ԱՀ ներկայացնելու ժամանակ վանդակում նշվում են պարբերական, ոչ ամբողջական կամ ժամանակավոր ԱՀ-ի հերթական համարը, ինչպես նաեւ ԱՀ-ների գրանցման համարներն այն ապրանքների համար, որոնք տեղափոխվում են չհավաքված կամ կազմատված տեսքով, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ տեսքով, եւ «/» բաժանիչ նշանով՝ այդ ապրանքի հերթական համարը՝ նախորդող ԱՀ-ի 32-րդ վանդակի առաջին ենթաբաժնից:

Ղրղզստանի Հանրապետությունում ամբողջական ԱՀ ներկայացնելու ժամանակ վանդակում նշվում են պարբերական կամ ժամանակավոր ԱՀ-ի հերթական համարը, ինչպես նաեւ ԱՀ-ների գրանցման համարներն այն ապրանքների համար, որոնք տեղափոխվում են չհավաքված կամ կազմատված տեսքով, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ տեսքով, եւ «/» բաժանիչ նշանով՝ այդ ապրանքի հերթական համարը՝ նախորդող ԱՀ-ի 32-րդ վանդակի առաջին ենթաբաժնից:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշմամբ)

Ռուսաստանի Դաշնությունում՝

ապրանքների ժամանակավոր պարբերական հայտարարագրման ժամանակ վանդակում նշվում է ԱՀ-ի ժամանակավոր (լրացուցիչ ժամանակավոր) գրանցման համարը.

վանդակը չի լրացվում Կալինինգրադի եւ Մագադանի մարզերում հատուկ տնտեսական գոտիների տարածքում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների նկատմամբ, որոնք նախկինում ձեւակերպված են եղել «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով, եթե այդ ապրանքների մասով չեն կարող ներկայացվել դրանց՝ որպես Միության ապրանքների կարգավիճակը հաստատող փաստաթղթեր:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում՝

նախկինում մաքսային ընթացակարգով ձեւակերպված՝ մի քանի ապրանքներից ստացված (արտադրված) ապրանքների հայտարարագրման ժամանակ, ի լրումն ԱՀ-ի գրանցման համարի եւ ապրանքի հերթական համարի, այսուհետ «/» բաժանիչ նշանով նշվում է՝

հայտարարագրվող ապրանքի կազմի մեջ մտած ապրանքի «զուտ» զանգվածը՝ հաշվի առնելով նախորդող ԱՀ-ի 38-րդ վանդակում նշված ապրանքի քաշը (դրա սահմաններում).

հայտարարագրվող ապրանքի կազմի մեջ մտած այդ ապրանքի քանակը՝ նախորդող ԱՀ-ի 41-րդ վանդակում նշված ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան չափման լրացուցիչ միավորներով կամ նախորդող ԱՀ-ի 31-րդ վանդակում նշված չափման միավորներով, որոնց համապատասխան՝ ապրանքը հիմնական եւ լրացուցիչ չափման միավորներից տարբերվող միավորներով դրված է եղել հսկողության տակ.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

լրացուցիչ չափման միավորի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան, կամ չափման հիմնական կամ լրացուցիչ միավորներից տարբերվող չափման միավորի ծածկագիրը (պայմանանշանը, կրճատ անվանումը), որին համապատասխան՝ ապրանքը դրված է եղել հսկողության տակ.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

սահմանված ժամանակահատվածում տարբեր ապրանքային խմբաքանակներով տեղափոխվող՝ չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ տեսքով, ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ ծածկագրի նշումով ապրանքների հայտարարագրման ժամանակ վանդակում նշվում են ԱՀ գրանցման համարները՝ նախորդող ապրանքային խմբաքանակներում պարունակվող բոլոր բաղադրամասերը մաքսային ընթացակարգով ձեակերպելու դեպքում, իսկ ԱՀ յուրաքանչյուր գրանցման համարի համար՝ «/» բաժանիչ նշանով՝ ապրանքի հերթական համարը՝ նախորդող ԱՀ-ի 32-րդ վանդակի առաջին ենթաբաժնից.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

39) 41-րդ վանդակ. «Լրացուցիչ միավորները»

41. Լրացուցիչ միավորները

Վանդակում, առանց միջակայքերի, լրացուցիչ չափման միավորով նշվում է այն ապրանքի քանակը, որի վերաբերյալ տեղեկությունները նշված են ԱՀ-ի 31-րդ վանդակում, եթե ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան՝

հայտարարագրվող ապրանքի նկատմամբ կիրառվում է լրացուցիչ չափման միավոր: Այնուհետև «/» բաժանիչ նշաններով նշվում են պայմանանշանը եւ լրացուցիչ չափման միավորի ծածկագիրը՝ չափման միավորների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Ղազախստանի Հանրապետությունում չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ տեսքով տեղափոխվող ապրանքների հայտարարագրման ժամանակ վանդակում, առանց միջակայքերի, նշվում է մեքենայի քանակը «1», որի դասակարգման ծածկագիրը լրացուցիչ չափման միավորով ներկայացված է ԱՀ-ի 33-րդ վանդակում, եթե ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան՝ այդ մեքենայի նկատմամբ կիրառվում է լրացուցիչ չափման միավոր:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Ապրանքի քանակությունը լրացուցիչ չափման միավորով նշվում է ստորակետից հետո մինչեւ երկու նիշ ճշտությամբ:

Եթե լրացուցիչ չափման միավորով ապրանքի քանակը «0,01»-ից փոքր է, վանդակում ապրանքի քանակը լրացուցիչ չափման միավորով ստորակետից հետո նշվում է մինչեւ վեց նիշ ճշտությամբ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 167 որոշման խմբագրությամբ)

Ղազախստանի Հանրապետությունում ապրանքի քանակը լրացուցիչ չափման միավորով նշվում է ստորակետից հետո մինչեւ վեց նիշ ճշտությամբ:

Ռուսաստանի Դաշնությունում ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ ծածկագրի նշումով տարբեր անվանումների ապրանքների հայտարարագրման ժամանակ վանդակը չի լրացվում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում եւ Ղրղզստանի Հանրապետությունում չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ տեսքով տեղափոխվող ապրանքների առանձին բաղադրամասերի հայտարարագրման ժամանակ վանդակը չի լրացվում: Չհավաքված կամ կազմատված տեսքով տեղափոխվող ապրանքների առանձին բաղադրամասերի վերջին խմբաքանակի հայտարարագրման ժամանակ լրացուցիչ չափման միավորով նշվում է հավաքված, կոմպլեկտավորված կամ ավարտուն տեսքով ապրանքի քանակը, եթե ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան՝ հավաքված, կոմպլեկտավորված կամ ավարտուն տեսքով ապրանքի նկատմամբ կիրառվում է լրացուցիչ չափման միավոր, այնուհետեւ «/» բաժանիչ նշաններով նշվում են լրացուցիչ չափման միավորի պայմանանշանը եւ ծածկագիրը՝ չափման միավորների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

40) 42-րդ վանդակ. «Ապրանքի գինը»

42. Ապրանքի գինը

Վանդակում թվային նիշերով նշվում է փաստացի վճարված կամ վճարման ենթակա կամ այլ հանդիպակաց երաշխիքներով փոխհատուցվող ապրանքի գինը (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխանցման ձեռով)՝ փոխհատուցելի արտաքին տնտեսական գործարքի (պայմանագրի)

պայմաններին համապատասխան, իսկ Բելառուսի Հանրապետությունում եւ Ղրղզստանի Հանրապետությունում անհատույց մատակարարումների եւ առանց արտաքին տնտեսական գործարքի (պայմանագրի) ապրանքի մատակարարման դեպքում՝ ապրանքի գնահատված արժեքը՝ ԱՀ-ի 22-րդ վանդակի առաջին ենթաբաժնում նշված արժույթով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ)

Կանխիկ արժույթի հայտարարագրման ժամանակ վանդակում նշվում է տեղափոխվող արժույթի գումարը, իսկ անվանական արժեք ունեցող արժեթղթերի հայտարարագրման ժամանակ՝ արժեթղթերի անվանական արժեքը:

Ապրանքի արժեքի ստացված մեծությունը մաթեմատիկական կանոններով կլորացվում է ստորակետից հետո մինչեւ երկու նիշ ճշտությամբ:

Հայաստանի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում անհատույց մատակարարումների (փոխհատուցելի եւ անհատույց պայմանագրերի շրջանակներում), ինչպես նաեւ առանց արտաքին տնտեսական գործարք (պայմանագիր) կնքելու ապրանքների մատակարարումների դեպքում վանդակում նշվում է «0» թիվը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Ռուսաստանի Դաշնությունում ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ ծածկագրի նշումով տարբեր անվանումների ապրանքների հայտարարագրման ժամանակ վանդակը չի լրացվում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում վերամշակման արդյունքների համար ապրանքի գնահատված արժեքը նշվում է՝ հաշվի առնելով վերամշակման ծառայությունների արժեքը.

41) 43-րդ վանդակ. «ԱՈՄ ծածկագիրը»

43. ԱՈՄ ծածկագիրը

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է հայտարարագրվող ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդի ծածկագիրը՝ մաքսային արժեքի որոշման մեթոդների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Պարբերությունը հանվել է. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշում:

42) 44-րդ վանդակ. «Լրացուցիչ տեղեկատվությունը/Ներկայացված փաստաթղթերը»

44. Լրացուցիչ տեղեկատվությունը/ Ներկայացված փաստաթղթերը		

Վանդակում նշվում են ԱՀ-ի 31-րդ վանդակում նշված յուրաքանչյուր ապրանքի մասին հայտագրված տեղեկությունները հաստատող այն փաստաթղթերի մասին տեղեկություններ, որոնց հիման վրա լրացված է ԱՀ-ն:

Յուրաքանչյուր փաստաթղթի մասին տեղեկությունները նշվում են նոր տողից փաստաթղթերի եւ տեղեկությունների դասակարգչին համապատասխան նշելով դրա ծածկագիրը, եւ «/» բաժանիչ նշանով՝ ԱՀ-ի տրամադրման ժամանակ փաստաթուղթ ներկայացնելը կամ չներկայացնելը հաստատող հատկանիշը (այսուհետ՝ հատկանիշ)։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127, 2018 թվականի հունվարի 16-ի թիվ 5 որոշումների խմբագրությամբ)

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

«0»՝ ԱՀ-ի ներկայացման ժամանակ փաստաթուղթը չի տրամադրվել։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

«01193/0 750005283852՝ 2014 թվականի փետրվարի 11-ից մինչեւ 2014 թվականի մարտի 11-ը»։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

«1»՝ ԱՀ-ի ներկայացման ժամանակ փաստաթուղթը տրամադրվել է։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

«02017/1 172MAD00118241՝ 2014 թվականի մարտի 3-ից».

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

«2»՝ փաստաթուղթը չի ներկայացվել՝ Օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ մասին համապատասխան: Այդ դեպքում հատկանիշը նշելուց հետո միջակայքով նշվում են փաստաթղթի համարը եւ ամսաթիվը եւ այնուհետեւ միջակայքով՝ ԱՀ-ի կամ այլ մաքսային փաստաթղթի գրանցման համարը, որին կցված է եղել այդ փաստաթուղթը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

«03011/2 4187-65 2014 թվականի հունվարի 25-ից 55102/110314/0000123».

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

«3»՝ փաստաթուղթը ներկայացվել է (ներկայացվելու է) ապրանքների բացթողումից հետո: Տվյալ դեպքում, եթե Միության անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված է ապրանքների բացթողումից հետո առանձին փաստաթղթեր ներկայացնելու հնարավորություն, հատկանիշը նշելուց հետո միջակայքով կատարվում է բացակայող փաստաթղթերը ներկայացնելու հայտարարատուի պարտավորության մասին գրառում՝ ամսաթվի նշումով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Օրինակ՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

«01999/3 ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՄԻՆՉԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 24-Ը»:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

Պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Վանդակում յուրաքանչյուր (առանձին) փաստաթղթի համար նոր տողից, համապատասխան ծածկագրով, փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչի համաձայն, նշվում են՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2018 թվականի հունվարի 16-ի թիվ 5 որոշումների խմբագրությամբ)

արգելքների եւ սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթի համարը, ամսաթիվը եւ գործողության ժամկետը (այն դեպքում, եթե գործողության ժամկետը սահմանափակ է).

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

այն ապրանքների հայտարարագրման ժամանակ, որոնց նկատմամբ սահմանված է լիցենզավորում (այն դեպքում, եթե լիցենզիան հավելված է պարունակում)՝ լիցենզիայի համարը եւ «/» բաժանիչ նշանով՝ ապրանքի հերթական համարը՝ ըստ այդ հավելվածի, իսկ գլխավոր լիցենզիայի առկայության դեպքում՝ գլխավոր լիցենզիայի համարից հետո «/» բաժանիչ նշանով՝ գլխավոր լիցենզիայի մասով ապրանքների ցանկի հերթական համարը, եւ այնուհետեւ «/» բաժանիչ նշանով՝ ապրանքի հերթական համարը՝ ըստ նշված ցանկի.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշմամբ)

տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի համարները (գրանցման համարները) եւ ամսաթվերը (ամսաթվերի առկայության դեպքում), որոնցով իրականացվել է միջազգային փոխադրում կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառմամբ մաքսային հսկողության ներքո փոխադրում, եթե հայտարարագրվող ապրանքների նկատմամբ նախքան հայտագրվող մաքսային ընթացակարգով դրանց ձեւակերպումը կամ ավելի վաղ հայտագրված մաքսային ընթացակարգի ավարտն իրականացվել է միջազգային փոխադրում, կամ ապրանքները փոխադրվել են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշման խմբագրությամբ)

ապրանքների մասին հայտարարագրի գրանցման համարն ավելի վաղ ներմուծված նույնական ապրանքների նկատմամբ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի մարտի 27-ի թիվ 42 որոշմամբ հաստատված՝ «Ապրանքների մաքսային արժեքի հսկողության առանձնահատկությունների մասին» հիմնադրույթի 6-րդ կետով նախատեսված դեպքում.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի մարտի 27-ի թիվ 42 որոշման խմբագրությամբ)

տարանցման հայտարարագրի գրանցման համարը կամ որպես տարանցման հայտարարագիր օգտագործվող այլ փաստաթղթերի համարները (գրանցման համարները), եթե հայտարարագրվող ապրանքները նախքան ԱՀ-ում հայտագրվող մաքսային ընթացակարգով ձեւակերպելը, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, փոխադրվել են Մաքսային միության մաքսային տարածքով: Տվյալ համարները նշվում են պարտադիր կարգով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հայտարարագրվող ապրանքները ձեւակերպվում են «մաքսային տարանցում» ընթացակարգից տարբերվող այլ մաքսային ընթացակարգերով, ապրանքների՝ մաքսային տարածք ժամանելու վայրերում կամ մաքսային սահմանին մոտեցված այլ վայրերում, եթե այդ վայրերը սահմանված են Միության անդամ պետությունների օրենսդրությամբ.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

արտաքին տնտեսական գործարքի կատարումը հաստատող փաստաթղթի համարն ու ամսաթիվը կամ արտաքին տնտեսական գործարքի շրջանակներից դուրս՝ ապրանքների տիրապետման, օգտագործման եւ (կամ) տնօրինման իրավունքը հաստատող այլ փաստաթղթեր.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշման խմբագրությամբ)

հայտարարատուի ունեցած առետրային փաստաթղթերի համարները եւ ամսաթվերը (ապրանքների վճարման եւ մատակարարման հաշիվը, հաշիվ-ապրանքագիրը (ինվոյս), նախնական հաշիվ-ապրանքագիրը (պրոֆորմա ինվոյս) եւ այլն).

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան՝ ապրանքի դասակարգման մասին մաքսային մարմնի կողմից տրված փաստաթղթի համարն ու ամսաթիվը, եթե հայտարարատուն այդպիսի փաստաթուղթ ունի.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

որոշակի հանքավայրերում նշված ֆիզիկաքիմիական հատկանիշներ ունեցող հում նավթի արդյունահանման փաստը հաստատող փաստաթղթի համարն ու ամսաթիվը.

ապրանքների նպատակային նշանակությունը հաստատող փաստաթղթի համարն ու ամսաթիվը.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշմամբ)

ապրանքների ծագման հավաստագրի համարը եւ տրամադրման ամսաթիվը, երկրի ծածկագիրը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, եթե Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերին եւ ակտերին համապատասխան՝ պահանջվում է ապրանքների ծագման երկիրը հաստատող փաստաթղթի տրամադրում՝ ապրանքների ծագման հավաստագրի տեսքով.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)մաքսային վճարների վճարման արտոնությունների կամ առանձնահատկությունների առկայությունը հաստատող փաստաթղթի անվանումը, համարը (դրա առկայության դեպքում), ամսաթիվը եւ գործողության ժամկետը (այն դեպքում, եթե գործողության ժամկետը սահմանափակ է), ինչպես նաեւ վճարման տեսակի ծածկագիրն այն հարկերի, գանձումների եւ այլ վճարների տեսակների դասակարգչին համապատասխան, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթի համարը եւ ամսաթիվը, եթե ապրանքների բացթողումը կատարվում է այդ ապահովումը տրամադրելու պայմանով.

ենթակցիզային (մակնշող) ապրանքների մակնշման համար ակցիզային (հատուկ) մակնշվածքների ստացումը հաստատող փաստաթղթի համարն ու ամսաթիվը.

արժույթային հսկողության ոլորտում ներկայացվող պահանջների կատարումը հաստատող փաստաթղթի համարը՝ Միության անդամ պետությունների արժույթային օրենսդրությանը համապատասխան.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

որպես ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտու (այսուհետ՝ ԱՏԳ (ԱՀՏԳ)) ռեզիդենտ (մասնակից)՝ անձի գրանցումը հավաստող փաստաթղթի համարը, ամսաթիվը եւ գործողության ժամկետը (դրա առկայության դեպքում).

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշման խմբագրությամբ)

անձին Ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկելու մասին վկայող փաստաթղթի համարն ու ամսաթիվը.

Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու մասին վկայող փաստաթղթի համարն ու ամսաթիվը, եւ «/» բաժանիչ նշանով նշվում է հատուկ պարզեցումների տեսակի ծածկագիրը՝ հատուկ պարզեցումների տեսակների դասակարգչին համապատասխան.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

«մաքսային տարածքում վերամշակում», «ներքին սպառման համար վերամշակում» կամ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգերով ապրանքների ձեւակերպման ժամանակ, ինչպես նաեւ վերամշակման արդյունքների, վերամշակման գործողությունների չենթարկված ապրանքների, ապրանքների թափոնների եւ մնացորդների հայտարարագրման ժամանակ՝ մաքսային տարածքում ապրանքների վերամշակման, ներքին սպառման համար ապրանքների վերամշակման կամ մաքսային տարածքից դուրս վերամշակման պայմանների մասին փաստաթղթի համարն ու տրամադրման ամսաթիվը, իսկ Բելառուսի Հանրապետությունում լրացուցիչ կերպով նշվում են նշված փաստաթղթի գործողության ժամկետը եւ ապրանքների վերամշակման հայտագրվող ժամկետը (XX.XX.XXXX՝ օր, ամիս, տարի)։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

Եթե ԱՀ-ն օգտագործվում է որպես ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթ՝ ապրանքների վերամշակման հարցվող ժամկետը, ապրանքների վերամշակման գործողություններ իրականացնող անձի անվանումը, վերամշակման գործողություններ անցկացնելու վայրը։

«մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված՝ մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքների վերամշակման արդյունքների, ինչպես նաեւ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ վերամշակման գործողությունների չենթարկված ապրանքների հայտարարագրման ժամանակ՝ մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթի տրամադրման համարն ու ամսաթիվը, ինչպես նաեւ դրա գործողության ժամկետը (XX.XX.XXXX՝ օր, ամիս, տարի) կամ ԱՀ-ի համարը, եթե ԱՀ-ն օգտագործվել է որպես ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթ. եթե վերամշակման արդյունքները ներմուծվում են նախքան

ապրանքները մաքսային տարածքից դուրս վերամշակման համար արտահանելը, «/» բաժանիչ նշանով կատարվում է «Նախօրոք կատարված մատակարարում» գրառումը.

«Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» կամ «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգերով ապրանքների ձեւակերպման ժամանակ՝ ժամանակավոր ներմուծման կամ ժամանակավոր արտահանման հայտագրված ժամկետը (XX.XX.XXXX՝ օր, ամիս, տարի), իսկ «/» բաժանիչ նշանով՝ նշվում է «1» թիվը, եթե ժամանակավոր ներմուծման (ժամանակավոր արտահանման) ժամկետը մեկ տարուց պակաս է, կամ «2» թիվը, եթե ժամանակավոր ներմուծման (ժամանակավոր արտահանման) ժամկետը մեկ տարի եւ ավելի է.

«Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» կամ «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտման ժամանակ նշվում է «1» թիվը, եթե ժամանակավոր ներմուծման (ժամանակավոր արտահանման) փաստացի ժամկետը մեկ տարուց պակաս է, կամ «2» թիվը, եթե ժամանակավոր ներմուծման (ժամանակավոր արտահանման) փաստացի ժամկետը մեկ տարի եւ ավելի է.

«մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման ժամանակ՝ ապրանքների պահպանման հայտագրված ժամկետը (XX.XX.XXXX՝ օր, ամիս, տարի)՝ այս մաքսային ընթացակարգին համապատասխան.

այլ փաստաթղթերի համարները եւ ամսաթվերը եւ (կամ) պարտավորությունների մասին տեղեկությունները, որոնց տրամադրումը նախատեսված է մաքսային ընթացակարգերի պայմաններին համապատասխան, ինչպես նաեւ այլ փաստաթղթերի համարները եւ ամսաթվերը եւ (կամ) ԱՀ-ում նշման ենթակա այլ տեղեկություններ.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշման խմբագրությամբ)

սահմանված ժամանակահատվածում նշված ապրանքների նախատեսվող մատակարարումների (հայտարարագրման թույլտվության) մասին մաքսային մարմինն ծանուցման ներկայացմամբ՝ չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ տեսքով տեղափոխվող ապրանքների հայտարարագրման ժամանակ՝ այդ փաստաթղթի համարն ու ամսաթիվը:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 237 որոշմամբ)

Բելառուսի Հանրապետությունում վանդակում ապրանքների հայտարարագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին նաեւ լրացուցիչ տեղեկատվություն է նշվում՝ փաստաթղթերի մասին լրացուցիչ տեղեկատվության ծածկագրերի՝ Բելառուսի Հանրապետությունում կիրառվող դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Ռուսաստանի Դաշնությունում անտառանյութերի հայտարարագրման ժամանակ լրացուցիչ նշվում են փայտանյութի հետ կապված գործարքների մասին հայտարարագրի համարը եւ այն ներկայացնելու ամսաթիվը:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի ապրիլի 24-ի թիվ 35 որոշմամբ)

Պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Պարբերությունը հանվել է. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 237 որոշում:

Ռուսաստանի Դաշնությունում ԱՄԳ մաքսային ընթացակարգով ապրանքների հայտարարագրման ժամանակ վանդակում լրացուցիչ կերպով նշվում են՝

Դաշնային օրենքի համարն ու ամսաթիվը, որին համապատասխան ստեղծվել է գործում է ԱՏԳ-ն (ԱՀՏԳ-ն)։

ԱՏԳ-ի (ԱՀՏԳ-ի) տարածքում գործունեության իրականացման մասին հայտարարագրի համարը, ամսաթիվն ու գործողության ժամկետը կամ Կալինինգրադի մարզում ԱՏԳ (ԱՀՏԳ) ռեզիդենտների համար ներդրումային հայտարարագրի համարը, ամսաթիվն ու գործողության ժամկետը։

Էթիլային սպիրտի, ալկոհոլային եւ սպիրտ պարունակող արտադրանքի արտադրության եւ շրջանառության ծավալի հաշվառման միասնական պետական ավտոմատացված համակարգում տեղեկությունների սահմանման մասին հաստատման համարն ու ամսաթիվը։

Պարբերությունը հանվել է. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշում։

Ռուսաստանի Դաշնությունում «ներքին սպառման համար բացթողում» կամ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով այն ապրանքների ձեւակերպման ժամանակ, որոնք Ռուսաստանի Դաշնության տնտեսական զարգացման նախարարության եւ ռուսաստանյան իրավաբանական անձի հետ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8701 - 8705 ապրանքային դիրքերում ընդգրկված շարժիչավոր տրանսպորտային միջոցների, դրանց հանգույցների եւ ագրեգատների արդյունաբերական հավաքման համար նախատեսված ապրանքների ներմուծման մասին կնքված համաձայնագրերի առարկա են հանդիսանում, որոնց նկատմամբ կիրառվում են սակագնային արտոնություններ, վանդակում լրացուցիչ կերպով տեղեկություններ են նշվում հաստատող փաստաթղթերի մասին՝ փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչին համապատասխան։

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2018 թվականի հունվարի 16-ի թիվ 5 որոշումների խմբագրությամբ)

43) 45-րդ վանդակ. «Մաքսային արժեքը»

45. Մաքսային արժեքը

Վանդակում թվային նիշերով նշվում է հայտարարագրվող ապրանքի՝ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան սահմանվող մաքսային արժեքը Միության այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին ներկայացվում է ԱՀ-ն:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Մաքսային արժեքի ստացված մեծությունը կլորացվում է մաթեմատիկական կանոններով՝ ստորակետից հետո մինչեւ երկու նիշ ճշտությամբ:

Հայաստանի Հանրապետությունում նշվում է ընդհանուր մաքսային արժեքի ստացված մեծությունը՝ մաթեմատիկական կանոններով կլորացված մինչեւ ամբողջ թիվը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 77 որոշումների խմբագրությամբ)

Պարբերությունը հանվել է. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշում.

Ռուսաստանի Դաշնությունում ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ ծածկագրի նշումով տարբեր անվանումների ապրանքների հայտարարագրման ժամանակ վանդակը չի լրացվում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Վանդակը չի լրացվում Միության անդամ պետությունների ազգային արժույթի, արտարժույթի (բացի դրամագիտական նպատակներով օգտագործվող արժույթից), ինչպես նաև շրջանառության մեջ դրված արժեթղթերի հայտարարագրման ժամանակ.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշմամբ. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

44) 46-րդ վանդակ. «Վիճակագրական արժեքը»

46. Վիճակագրական արժեքը

Վանդակում թվային նշաններով, առանց բաժանիչների եւ միջակայքերի, նշվում է ապրանքի վիճակագրական արժեքը՝ ԱՄՆ դոլարով՝ մաթեմատիկական կանոններով ստորակետից հետո մինչեւ երկու նիշ ճշտությամբ կլորացված:

Ապրանքի վիճակագրական արժեքը հաշվարկվում է ԱՀ-ի 45-րդ վանդակում նշված ապրանքի մաքսային արժեքի հիման վրա՝ բացառությամբ սույն ենթակետի հինգերորդ եւ վեցերորդ պարբերություններում նշված դեպքերի:

Ռուսաստանի Դաշնությունում ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ ծածկագրի նշմամբ տարբեր անվանումներով ապրանքների հայտարարագրման ժամանակ ապրանքների վիճակագրական արժեքը հաշվարկվում է ԱՀ-ի 12-րդ վանդակում նշված ապրանքների ընդհանուր մաքսային արժեքի հիման վրա:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Այն դեպքում, երբ սույն Հրահանգին համապատասխան ԱՀ-ի 45-րդ վանդակը չի լրացվում, ապրանքի վիճակագրական արժեքը հաշվարկվում է ԱՀ-ի 42-րդ վանդակում նշված ապրանքի գնի հիման վրա:

Ապրանքի վիճակագրական արժեքը հաշվարկվում է ապրանքի մաքսային արժեքը, իսկ սույն ենթակետի վեցերորդ պարբերությունում նշված դեպքերում՝ ապրանքի գինը CIF՝ ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության տարածք ժամանման առաջին նավահանգիստ (CIP՝ ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության սահմանի հատման վայր) մատակարարման բազիսային պայմանին համապատասխանեցնելու միջոցով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

Ապրանքի մաքսային արժեքը մատակարարման բազիսային պայմանին համապատասխանեցնելու ժամանակ CIF՝ ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության տարածք ժամանման առաջին նավահանգիստ (CIP՝ ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության սահմանի հատման վայր), այն դեպքում, երբ մաքսային տարածք ապրանքի ժամանման վայրը գտնվում է ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության տարածքից դուրս, ապրանքի մաքսային արժեքին ավելացվում են մաքսային տարածք ապրանքի ժամանման վայրից մինչև ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության սահմանի հատման վայր ապրանքի փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ծախսերը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Ապրանքի մաքսային արժեքը մատակարարման բազիսային պայմանին համապատասխանեցնելու ժամանակ CIF՝ ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության տարածք ժամանման առաջին նավահանգիստ (CIP՝ ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության սահմանի հատման վայր)։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

այնպիսի պայմաններով մատակարարված ապրանքի համար, որոնց համապատասխան նշանակման կետը գտնվում է ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության տարածքից դուրս, ապրանքի գնին ավելացվում են նշանակման կետից մինչև ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության սահմանի հատման վայրն ապրանքի առաքմանն առնչվող ծախսերը։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

այնպիսի պայմաններով մատակարարված ապրանքի համար, որոնց համապատասխան նշանակման կետը գտնվում է ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության տարածքում, ապրանքի գնից հանվում են ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության սահմանի հատման վայրից մինչև նշանակման կետն ապրանքի առաքմանն առնչվող ծախսերը։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

CIF՝ ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության տարածք ժամանման առաջին նավահանգիստ (CIP՝ ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության սահմանի հատման վայր), մատակարարման բազիսային պայմանին

համապատասխանեցված ապրանքի մաքսային արժեքը կամ ապրանքի գինն ԱՄՆ դոլարի վերահաշվարկելիս կիրառվում է մաքսային մարմնի կողմից ԱՀ-ի գրանցման ամսաթվի դրությամբ Միության անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կողմից սահմանված արժույթի փոխարժեքը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

CIF՝ ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության տարածք ժամանման առաջին նավահանգիստ (CIP՝ ապրանքի նշանակման երկիր հանդիսացող անդամ պետության սահմանի հատման վայր), մատակարարման բազիսային պայմանին համապատասխանեցված մաքսային արժեքի վերահաշվարկն ԱՄՆ դոլարի իրականացվում է դա ԱՄՆ դոլարի փոխարժեքին բաժանելու միջոցով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

CIF՝ ապրանքի նշանակման երկիր հանդիսացող Միության անդամ պետության տարածք ժամանման առաջին նավահանգիստ (CIF՝ ապրանքի նշանակման երկիր հանդիսացող անդամ պետության սահմանի հատման վայր) մատակարարման բազիսային պայմանին համապատասխանեցված ապրանքի գնի (այսուհետ սույն ենթակետում՝ ապրանքի համապատասխանեցված արժեքը) վերահաշվարկն ԱՄՆ դոլարի իրականացվում է հետեւյալ բանաձեւով.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

$$C_{\$}=(C_{iv} \times K_{iv})/(E_{iv} \times K_{\$}),$$

որտեղ՝

$C_{\$}$ -ն ապրանքի վիճակագրական արժեքն է՝ ԱՄՆ դոլարով.

C_{iv}-ն ապրանքի համապատասխանեցված արժեքն է՝ պայմանագրի գնի արժույթով.

K_{iv}-ն արժույթի փոխարժեքն է, որով հաշվարկված է ապրանքի համապատասխանեցված արժեքը՝ մաքսային մարմնի կողմից ԱՀ-ի գրանցման ամսաթվի դրությամբ.

E_{iv}-ն արժույթների փոխարժեքով նշված այն արժույթի միավորների քանակն է, որով հաշվարկված է ապրանքի համապատասխանեցված արժեքը.

K_s-ն մաքսային մարմնի կողմից ԱՀ-ի գրանցման ամսաթվի դրությամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքն է:

Այսպես, օրինակ՝ 120 000 000 ճապոնական իեն կազմող ապրանքի համապատասխանեցված արժեքի վերահաշվարկն ԱՄՆ դոլարի կատարվում է հետևյալ կերպ.

$C_s = (120\ 000\ 000 \times 32,0049) / (100 \times 31,6144) = 1\ 214\ 822,36$ ԱՄՆ դոլար, որտեղ՝

C_{iv}՝ 120 000 000 ճապոնական իեն.

K_{iv}՝ 32,0049 ռուսական ռուբլի.

E_{iv}՝ 100 ճապոնական իեն.

K_s՝ 31,6144 ռուսական ռուբլի:

Վանդակում նշված տեղեկություններն օգտագործվում են արտաքին առևտրի մաքսային վիճակագրության վարման նպատակներով:

(44-րդ ենթակետը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշման խմբագրությամբ)

45) 47-րդ վանդակ. «Վճարների հաշվարկումը»

47. Վճարների հաշվարկումը	Տեսակը	Հաշվեգրման հիմքը	Դրույքաչափը	Գումարը	ՎԵ (վճարման եղանակը)
Ընդամենը.					

Վանդակում նշվում են այն մաքսային վճարների, այլ վճարների հաշվարկման մասին տեղեկություններ, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին, ինչպես նաև այն մաքսային վճարների եւ այլ վճարների վճարման առանձնահատկությունների դասակարգչին համապատասխան վճարման առանձնահատկությունների մասին տեղեկություններ, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Այն մաքսային վճարների, այլ վճարների գումարների հաշվարկումը, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին, կատարվում է հիմնական տողում (հիմնական տողերում) առանձին՝ ըստ վճարման յուրաքանչյուր տեսակի, այդ թվում՝ պայմանականորեն հաշվեգրված վճարման:

Հայաստանի Հանրապետությունում, Բելառուսի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում մաքսավճարների գումարների հաշվարկումը կատարվում է ԱՀ-ի հիմնական թերթում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

Ղազախստանի Հանրապետությունում մաքսավճարների գումարների հաշվարկումն ապրանքի յուրաքանչյուր անվանման համար կատարվում է ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի վրա՝ հետեւյալ բանաձեւով՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի հունիսի 20-ի թիվ 68 որոշման խմբագրությամբ)

$$(Z + N * B) / Kol_tov, որտեղ՝$$

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի հունիսի 20-ի թիվ 68 որոշման խմբագրությամբ)

«Z»-ը՝ մաքսավճարի դրույքաչափի սահմանված չափն է՝ ԱՀ-ի հիմնական թերթի համար, «B»-ն՝ մաքսավճարի դրույքաչափի սահմանված չափը՝ ԱՀ-ի լրացուցիչ թերթի համար.

«N»-ը՝ ԱՀ-ի լրացուցիչ թերթերի քանակը.

«Kol_tov»-ը՝ հայտարարագրվող ապրանքների քանակը՝ ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի 32-րդ վանդակներին համապատասխան.

պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի հունիսի 20-ի թիվ 68 որոշում.

Այն մաքսային վճարների, այլ վճարների գումարների հաշվարկումը, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին, կատարվում է հետեւյալ առանձնահատկությունները հաշվի առնելով՝

վանդակում չեն մուտքագրվում այն մաքսային վճարի, այլ վճարի տեսակի մասով տեղեկությունները, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին, եթե Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերին եւ ակտերին եւ (կամ) Միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ հայտարարագրվող ապրանքների համար վճարի այդ տեսակի համար դրույքաչափի սահմանված չէ, կամ սահմանված է գրոյական դրույքաչափ, ինչպես նաեւ եթե հայտագրվող մաքսային ընթացակարգի պայմաններին համապատասխան՝ վճարի այդ տեսակի վճարման պարտավորություն չի առաջանում.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

վանդակը չի լրացվում Միության անդամ պետությունների ազգային արժույթի, արտարժույթի (բացի դրամագիտական նպատակներով օգտագործվող արժույթից), ինչպես նաև շրջանառության մեջ դրված արժեթղթերի հայտարարագրման ժամանակ.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշմամբ. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

ադվալորային եւ առանձնահատուկ բաղադրիչների գումարում կամ մեկ բաղադրիչից մյուսի հանում նախատեսող մաքսային վճարի համակցված դրույքաչափի կիրառման դեպքում

մաքսային վճարների գումարների հաշվարկումն ըստ վճարման համապատասխան տեսակի կատարվում է առանձին երկու տողով՝ ըստ յուրաքանչյուր բաղադրիչի: Ընդ որում, ըստ վճարի տվյալ տեսակի վճարված կամ վճարման ենթակա մաքսային վճարների գումարներն ԱՀ-ի «B» վանդակում նշվում են մեկ տողով.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի ապրիլի 24-ի թիվ 35 որոշման խմբագրությամբ)

վանդակի սյունակներում թվային եւ պայմանանշանային արժեքները մուտքագրվում են առանց բաժանիչների (միջակայքերի):

«Տեսակը» սյունակում նշվում է մաքսային մարմինների գանձմանը վերապահված մաքսային վճարի, այլ վճարի տեսակի ծածկագիրը՝ հարկերի, գանձումների եւ այլ վճարների տեսակների դասակարգչին համապատասխան, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

«Հաշվեգրման հիմքը» սյունակում նշվում է մաքսային մարմինների գանձմանը վերապահված մաքսային վճարի, այլ վճարի հաշվարկման բազան, որը սահմանվում է Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերին եւ ակտերին եւ (կամ) Միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Եթե մաքսային մարմինների գանձմանը վերապահված մաքսային վճարի, այլ վճարի հաշվարկման բազան արտահայտված է դրամական միավորներով, սյունակում արժեքը նշվում է այնպիսի միավորներով, որոնց նկատմամբ սահմանված է վճարի դրույքաչափ, եւ մաթեմատիկական կանոններով կլորացվում է ճշտությամբ մինչեւ՝

Հայաստանի Հանրապետությունում՝ ամբողջ թիվը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 77 որոշումների խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում՝ ստորակետից հետո երկու նիշ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129, 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 77 որոշումների խմբագրությամբ)

Եթե մաքսային մարմինների գանձմանը վերապահված մաքսային վճարի, այլ վճարի հաշվարկման բազան դրամական միավորներից տարբերվող ձեւով է արտահայտված, սյունակում արժեքը նշվում է այնպիսի միավորներով, որոնց նկատմամբ սահմանված է վճարի դրույքաչափ, եւ մաթեմատիկական կանոններով կլորացվում է ճշտությամբ մինչեւ՝

Հայաստանի Հանրապետությունում եւ Բելառուսի Հանրապետությունում՝ ստորակետից հետո մինչեւ երկու նիշ: Եթե հաշվարկման՝ դրամական միավորներից տարբերվող ձեով արտահայտված բազայի արժեքի մասին տեղեկությունները ստորակետից հետո մինչեւ երկու նիշ ճշտությամբ բացակայում են, ստորակետից հետո զրոներ են դրվում: Այն դեպքում, երբ մաքսային մարմինների կողմից գանձվող մաքսային կամ այլ վճարի հաշվարկման բազայի արժեքի կլորացումը բերում է «0,10»-ից փոքր արժեքի, եւ ընդ որում, առկա են ավելի ճշգրիտ տեղեկություններ այնպիսի միավորներով ապրանքի քանակի մասին, որոնց նկատմամբ սահմանված է այդ վճարի դրույքաչափ, վճարի հաշվարկման բազայի արժեքի կլորացումն իրականացվում է ստորակետից հետո մինչեւ չորս նիշ ճշտությամբ: Եթե հաշվարկման՝ դրամական միավորներից տարբերվող ձեով արտահայտված բազայի արժեքի մասին տեղեկությունները ստորակետից հետո մինչեւ չորս նիշ ճշտությամբ բացակայում են, չորրորդ կարգում ստորակետից հետո զրո է դրվում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշման խմբագրությամբ)

Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում՝ անկախ ապրանքների ընդհանուր զանգվածից՝ ստորակետից հետո վեց նիշ, այլ դեպքերում՝ ստորակետից հետո մինչեւ երկու նիշ: Այն դեպքում, երբ հաշվեգրման՝ դրամական միավորներից եւ զանգվածից տարբերվող ձեով արտահայտված հիմքի արժեքի մասին տեղեկությունները ստորակետից հետո մինչեւ երկու նիշ ճշտությամբ բացակայում են, ստորակետից հետո զրոներ են դրվում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ)

Ռուսաստանի Դաշնությունում մաքսային գործառնությունների համար մաքսավճարների հաշվարկման ժամանակ, եթե այդ մաքսավճարների դրույքաչափերը սահմանված են՝ կախված ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի ապրանքների

դասակարգումից, «Հաշվեգրման հիմքը» սյունակում նշվում է խմբի համարը (խմբերի համարները)՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան: Այդ դեպքում մաքսային գործառնությունների համար մաքսավճարների հաշվարկումն իրականացվում է ԱՀ-ում նշված ապրանքների յուրաքանչյուր խմբի (ապրանքների խմբերի) համար՝ առանձին:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

«Դրույքաչափը» սյունակում նշվում է այն մաքսային վճարի, այլ վճարի դրույքաչափի սահմանված չափը, որի գանձումը վերապահված է մաքսային մարմիններին: Տոկոսների եւ տուժանքների հաշվարկման ժամանակ սյունակում նշվում է վերաֆինանսավորման դրույքաչափի չափը՝ ստորակետից հետո մինչեւ երկու նիշ ճշտությամբ, եւ «x» նշանով՝ օրերի քանակն այն ժամանակահատվածում, որի ընթացքում տոկոսներ կամ տուժանքներ են հաշվեգրվում:

Այն դեպքում, երբ կիրառվում է մաքսային վճարի համակցված դրույքաչափ, որով նախատեսվում է մեկ բաղադրիչի հանում մյուսից, մաքսային վճարի գումարն ըստ հանվող բաղադրիչի հաշվելիս «Դրույքաչափը» սյունակում նշվում է վճարի դրույքաչափը՝ «-» նշանով:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի ապրիլի 24-ի թիվ 35 որոշմամբ)

«Գումարը» սյունակում նշվում է մաքսային վճարի, այլ վճարի գումարը, որի գանձումը վերապահված է մաքսային մարմիններին: Սյունակում արժեքը մաթեմատիկական կանոններով կլորացվում է ճշտությամբ մինչեւ՝

Հայաստանի Հանրապետությունում՝ ամբողջ թիվը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 77, 2017 թվականի հունիսի 20-ի թիվ 68 որոշումների խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում՝ ստորակետից հետո երկու նիշ.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129, 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 77, 2017 թվականի հունիսի 20-ի թիվ 68 որոշումների խմբագրությամբ)

Այն դեպքում, երբ կիրառվում է մաքսային վճարի համակցված դրույքաչափ, որով նախատեսվում է մեկ բաղադրիչի հանում մյուսից, մաքսային վճարի գումարն ըստ հանվող բաղադրիչի հաշվելիս «Գումարը» սյունակում նշվում է վճարի գումարը՝ «-» նշանով:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի ապրիլի 24-ի թիվ 35 որոշմամբ) «ՎԱ» (վճարման առանձնահատկությունը) սյունակում նշվում է այն մաքսային եւ այլ վճարների վճարման առանձնահատկությունների դասակարգչին համապատասխան ծածկագիրը, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Եթե հայտարարագրվող ապրանքների մասով վճարը վճարվում է լրիվ չափով՝ մինչեւ ապրանքների բացթողումը, ինչպես նաեւ մինչեւ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված ժամկետի լրանալը, ապրանքների՝ նախքան մաքսային հայտարարագիր ներկայացնելը բացթողման դեպքում, կամ Ղազախստանի Հանրապետությունում ավելացված արժեքի հարկը վճարվում է հաշվանցման մեթոդով, «ՎԱ» սյունակում համապատասխանաբար նշվում է «ИУ» կամ «ЗН» ծածկագիրը.

Եթե հայտարարագրվող ապրանքների մասով տրամադրվել է (տրամադրվում է) վճարի ամբողջ գումարի վճարումը հետաձգելու հնարավորություն, ապա վճարման տվյալ տեսակի վերաբերյալ «ՎԱ» սյունակում նշվում է «ՕՈ» ծածկագիրը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

Եթե ապրանքների հայտարարագրումը կատարվում է դրանք այնպիսի մաքսային ընթացակարգով ձեւակերպելու դեպքում, որն այդ տեսակի վճարի վճարման պարտավորության առաջացում է նախատեսում, բայց վճարի այդ տեսակը մինչեւ հայտարարագրված մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը վճարման ենթակա չէ, «ՎԱ» սյունակում նշվում է «ՄՔ» ծածկագիրը.

Եթե հայտարարագրվող ապրանքների նկատմամբ հարկը նվազեցված դրույքաչափով հաշվարկվում եւ վճարվում է մինչեւ ապրանքների բացթողումը, սյունակում նշվում է «ՆՄ» ծածկագիրը:

Այլ դեպքերում, ըստ մաքսային վճարի համապատասխան տեսակի, հետեւյալ կարգով լրացվում է լրացուցիչ տող (լրացուցիչ տողեր)՝

տուրքի դրույքաչափի նվազեցման տեսքով տուրքի վճարման արտոնությունների օգտագործման դեպքում (այդ թվում՝ համապատասխան սակագնային առանձնաշնորհման կիրառման դեպքում) հիմնական տողում (հիմնական տողերում) հաշվարկումը կատարվում է առանց արտոնությունները հաշվի առնելու վճարման ենթակա մաքսատուրքի չափով: «ՎԱ» սյունակում նշվում է «ՄԻ» ծածկագիրը: Լրացուցիչ տողում (լրացուցիչ տողերում)՝ «Հաշվեգրման հիմքը» սյունակում, նշվում է վճարի հաշվարկման բազան, «Դրույքաչափը» սյունակում նշվում է վճարի նվազեցված դրույքաչափը. «Գումարը» սյունակում՝ փաստացի վճարված (վճարվող,

վճարման ենթակա, բռնագանձված) վճարի գումարը: Լրացուցիչ տողի (լրացուցիչ տողերի) «ՎԱ» սյունակում նշվում է վճարման առանձնահատկությունների ծածկագիրը (ՄՄ, ՕՍ, ՕԿ, ՔՍ, ՄՔ):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

վճարի վճարումից ազատման տեսքով դրա վճարման արտոնությունների օգտագործման, վճարի վճարումից լրիվ ազատում նախատեսող սակագնային առանձնաշնորհման կիրառման դեպքում հիմնական տողում (հիմնական տողերում) հաշվարկումը կատարվում է առանց արտոնությունները հաշվի առնելու վճարման ենթակա մաքսային վճարների չափով: «ՎԱ» սյունակում նշվում է «ՄԻ»: Լրացուցիչ տողում՝ «Գումարը» սյունակում, նշվում է «Օ» (զրո) թիվը: Լրացուցիչ տողի «Հաշվեգրման հիմքը» եւ «Դրույքաչափը» սյունակները չեն լրացվում: «ՎԱ» սյունակում դրվում է «ՄՄ» ծածկագիրը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

Եթե հայտարարագրվող ապրանքների մասով տրամադրվել է (տրամադրվում է) վճարի գումարի մասի վճարումը հետաձգելու հնարավորություն, ապա այն վճարի գումարի հաշվարկման ժամանակ, որի համար տրամադրվում է վճարումը հետաձգելու հնարավորություն, հիմնական (հիմնական տողերում) տողում վճարման տվյալ տեսակի մասով «ՎԱ» սյունակում նշվում է «ՕԿ» ծածկագիրը: Առաջին լրացուցիչ տողում եւ երկրորդ լրացուցիչ տողում՝ «Գումարը» սյունակում, համապատասխանաբար նշվում են վճարի վճարվող եւ հետաձգված վճարմամբ գումարը՝ «ՎԱ» սյունակում համապատասխանաբար նշելով «ՄԿ» եւ «ՕՍ» ծածկագրերը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

վճարի տարաժամկետ վճարում օգտագործելու դեպքում հիմնական տողում (հիմնական տողերում)՝ «ՎԱ» սյունակում, նշվում է «ՔՈ» ծածկագիրը: Լրացուցիչ տողում՝ «Հաշվեգրման հիմքը» սյունակում, նշվում է վճարի այն գումարը, որի համար տրամադրվել է (տրամադրվում է) տարաժամկետ վճարում կատարելու հնարավորություն. «Դրույքաչափ» սյունակում, վճարման ժամանակացույցին համապատասխան, նշվում է այն ժամանակահատվածների քանակը, որոնց ընթացքում կատարվել է վճարումը (բռնագանձումը). «Գումարը» սյունակում՝ փաստացի վճարված (բռնագանձված) վճարի գումարը. «ՎԱ» սյունակում՝ «ՄՄ» ծածկագիրը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի պայմանական ազատմամբ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ապրանքների ձեակերպման համար ապրանքների հայտարարագրման ժամանակ հիմնական տողում (հիմնական տողերում) հաշվարկվում են այն գումարները, որոնք ենթակա կլինեին վճարման ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեակերպելու դեպքում: «ՎԱ» սյունակում նշվում է «ՄՔ» ծածկագիրը: Լրացուցիչ տողում՝ «Հաշվեգրման հիմքը» սյունակում, նշվում է վճարի՝ լրիվ չափով հաշվարկված գումարը, «Դրույքաչափը» սյունակում նշվում է դրույքաչափը՝ 3 (երեք) տոկոսի չափով, եւ «x» նշանով՝ ժամանակավոր ներմուծման (թույլտվության) ժամկետի լրիվ եւ ոչ լրիվ օրացուցային ամիսների քանակը, որոնց ընթացքում կատարվել է մաքսային վճարի վճարումը. «Գումարը» սյունակում՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան փաստացի վճարված (վճարվող, բռնագանձված) վճարի գումարը՝ մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի պայմանական ազատմամբ: «ՎԱ» սյունակում նշվում է «ԵԵ» ծածկագիրը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատմամբ կամ մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի պայմանական ազատմամբ եւ դրանց վճարման արտոնությունների կիրառմամբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ապրանքների ձեւակերպման համար ապրանքների հայտարարագրման ժամանակ հիմնական տողում (հիմնական տողերում) հաշվարկվում են այն գումարները, որոնք ենթակա կլինեին վճարման ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու դեպքում՝ առանց դրանց վճարման արտոնությունների կիրառման: «ՎԱ» սյունակում նշվում է «ՄՔ» ծածկագիրը: Լրացուցիչ տողում՝ «Հաշվեգրման հիմքը» սյունակում, նշվում է վճարի՝ լրիվ չափով հաշվարկված գումարը. «Դրույքաչափը» սյունակում նշվում է դրույքաչափը՝ 3 (երեք) տոկոսի չափով, եւ «x» նշանով՝ ժամանակավոր ներմուծման (թույլտվության) ժամկետի լրիվ եւ ոչ լրիվ օրացուցային ամիսների քանակը. «Գումարը» սյունակում՝ վճարի գումարը, որը հաշվարկված է այնպես, ինչպես ժամանակավոր ներմուծման ամբողջ ժամկետի ընթացքում մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի պայմանական ազատման դեպքում. «ՎԱ» սյունակում՝ «ՄԻ» ծածկագիրը:

Պարբերությունն ուժը կորցրել է 2014 թվականի հուլիսի 1-ից. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշում:

մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի պայմանական ազատմամբ նախկինում «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս հիմնական տողում (հիմնական տողերում) մաքսատուրքերը, հարկերը

հաշվարկվում են այն չափերով, որոնք ենթակա կլինեին վճարման հայտարարագրվող ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս՝ առանց այն մաքսատուրքերի,

հարկերի գումարները հանելու, որոնք վճարվել են մաքսատուրքերից, հարկերից մասնակի պայմանական ազատման դեպքում՝ «ՎԱ» սյունակում նշելով «ՄԻ» ծածկագիրը: Լրացուցիչ տողում՝ «Գումարը» սյունակում, նշվում է հայտարարագրվող ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս վճարման ենթակա վճարի գումարը՝ հանած այն վճարի գումարները, որոնք վճարվել են մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի պայմանական ազատման ժամանակ: Վճարումը հետաձգելու կամ այն տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրելու դեպքում «ՎԱ» սյունակում համապատասխանաբար նշվում է «ՄԿ» կամ «ՕՓ», «ՕԿ» կամ «ՐՓ» ծածկագիրը:

Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող եւ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակման գործողությունների կատարման արդյունքում գոյացած վերամշակման արդյունքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքի, ավելացված արժեքի հարկի հաշվարկման ժամանակ, հիմնական տողում (հիմնական տողերում) հաշվարկվում են ներմուծման մաքսատուրքը, ավելացված արժեքի հարկը, որոնք վճարման ենթակա կլինեին վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս՝ առանց հաշվի առնելու վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու առանձնահատկությունները՝ «ՎԱ» սյունակում «ՄՐ» ծածկագրի նշումով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ)

լրացուցիչ տողում նշվում են՝

վերամշակման արդյունքների նկատմամբ մաքսատուրքի առանձնահատուկ դրույքաչափի կիրառման ժամանակ՝

«Դրույքաչափը» սյունակում՝ վերամշակման գործողությունների արժեքի՝ ստորակետից հետո մաթեմատիկական կանոններով մինչեւ չորս նիշ ճշտությամբ կլորացվող հարաբերակցությունը վերամշակման արդյունքների մաքսային արժեքին.

«Գումարը» սյունակում՝ առաջին տողում նշված մաքսատուրքի գումարի արտադրյալը՝ երկրորդ տողի «Դրույքաչափը» սյունակում նշված հարաբերակցությանը.

«ՎԱ» սյունակում՝ «ИУ» կամ «ОП» կամ «РП» ծածկագիրը՝ համապատասխանաբար վճարը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրելու դեպքում.

վերամշակման արդյունքների նկատմամբ մաքսատուրքի ադվալորային դրույքաչափի կիրառման ժամանակ՝

«Հաշվեգրման հիմքը» սյունակում նշվում է վերամշակման գործողությունների արժեքը.

«Դրույքաչափը» սյունակում՝ մաքսատուրքի ադվալորային դրույքաչափը.

«Գումարը» սյունակում՝ լրացուցիչ տողի «Հաշվեգրման հիմքը» սյունակում նշված արժեքի արտադրյալը լրացուցիչ տողի «Դրույքաչափը» սյունակում նշված արժեքին.

«ՎԱ» սյունակում՝ «ИУ» կամ «ОП» կամ «РП» ծածկագիրը՝ համապատասխանաբար վճարը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրելու դեպքում.

«ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված վերամշակման արդյունքների եւ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակման գործողությունների կատարման արդյունքում գոյացած արդյունքների նկատմամբ ավելացված արժեքի հարկի հաշվարկման ժամանակ հիմնական տողում նշվում է՝

«Հաշվեգրման հիմքը» սյունակում նշվում է ապրանքների վերամշակման գործողությունների արժեքը.

«Դրույքաչափը» սյունակում՝ ավելացված արժեքի հարկի դրույքաչափը.

«Գումարը» սյունակում՝ հիմնական տողի «Հաշվեգրման հիմքը» սյունակում նշված արժեքի արտադրյալը հիմնական տողի «Դրույքաչափը» սյունակում նշված արժեքին.

«ՎԱ» սյունակում՝ «ՈՄ» կամ «ՕՍ» կամ «ՐՍ» ծածկագիրը՝ համապատասխանաբար վճարը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրելու դեպքում.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող եւ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների վերամշակման գործողությունների կատարման արդյունքում գոյացած վերամշակման արդյունքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքի եւ ավելացված արժեքի հարկի հաշվարկման ժամանակ (պայմանով, որ այդ տուրքերի, հարկերի գումարները հավասար են Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար նախատեսված կարգում ապրանքների նշված կատեգորիայի համար հաշվարկված տուրքերի, հարկերի գումարներին) հիմնական տողերում հաշվարկվում են ներմուծման մաքսատուրքը եւ ավելացված արժեքի հարկը, որոնք վճարման ենթակա կլինեին վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս՝ առանց վերամշակման գործողությունների արժեքի հարաբերակցությունը վերամշակման արդյունքների մաքսային արժեքով բազմապատկելու՝ «ՎԱ» սյունակում նշելով «ՄՐ» ծածկագիրը. Ընդ որում,

ավելացված արժեքի հարկի հաշվարկման ժամանակ հիմնական տողի «Հաշվեգրման հիմքը» սյունակում նշվում է 45-րդ վանդակից հայտարարագրվող ապրանքի մաքսային արժեքը.

լրացուցիչ տողում նշվում են՝

«Դրույքաչափը» սյունակում՝ վերամշակման գործողությունների արժեքի՝ ստորակետից հետո մաթեմատիկական կանոններով մինչև վեց նիշ ճշտությամբ կլորացվող հարաբերակցությունը վերամշակման արդյունքների մաքսային արժեքին.

«Գումարը» սյունակում՝ հիմնական տողում նշված մաքսատուրքի գումարի արտադրյալը՝ լրացուցիչ տողի «Դրույքաչափը» սյունակում նշված հարաբերակցությանը.

«ՎԱ» սյունակում՝ «ИУ» կամ «ОП» կամ «РП» ծածկագիրը՝ համապատասխանաբար վճարը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրելու դեպքում:

Այն դեպքում, երբ Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերին եւ ակտերին համապատասխան՝ մաքսատուրքերի, հարկերի հաշվարկումը կատարվում է այն ապրանքների նկատմամբ, որոնք որպես հումք (նյութեր, լրակազմող մասեր, պահեստամասեր) օգտագործվում են հայտարարագրվող այն ապրանքների արտադրության ժամանակ, որոնց մասին տեղեկությունները նշված են ԱՀ-ի 31-րդ վանդակում, ԱՀ-ի 47-րդ վանդակում առանձին տողերով հաշվարկվում են այդ հումքի (նյութերի, լրակազմող մասերի, պահեստամասերի) նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը: Ընդ որում, «Տեսակը» սյունակում վճարման ծածկագրից հետո «/» բաժանիչ նշանով նշվում է ԱՀ-ի 40-րդ վանդակի տողի հերթական համարը, որտեղ նշված են նախորդող ԱՀ-ի գրանցման համարը եւ նախորդող ԱՀ-ում այն ապրանքի հերթական համարը, որի նկատմամբ հաշվարկվում է վճարը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

46) «B» վանդակ: «Հաշվարկի մանրամասներ»

Գ. ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Վանդակում նշվում են ԱՀ-ում հայտարարագրվող բոլոր ապրանքների համար մաքսային վճարների, այլ վճարների մասին տեղեկություններ, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին՝ հաշվի առնելով հետեյալ առանձնահատկությունները՝

մաքսային մարմինների գանձմանը վերապահված մաքսային վճարի, այլ վճարի յուրաքանչյուր տեսակի մասով տեղեկությունները վճարի վճարումը հաստատող (արտացոլող) փաստաթղթերի կտրվածքով նշվում են առանձին տողով (առանձին տողերով)։

բոլոր տարրերը միմյանցից բաժանվում են գիծ նշանով՝ «-», տարրերի միջև միջակայքեր չեն թույլատրվում։

մաքսային վճարի, այլ վճարի գումարը, որի գանձումը վերապահված է մաքսային մարմիններին, մաթեմատիկական կանոններով կլորացվում է մինչև՝

Հայաստանի Հանրապետությունում եւ Ղազախստանի Հանրապետությունում՝ ամբողջ թիվը։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 77 որոշումների խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում՝ ստորակետից հետո երկու նիշ։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129, 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 77 որոշումների խմբագրությամբ)

Մաքսային մարմինների գանձմանը վերապահված մաքսային վճարի, այլ վճարի վճարման մասին տեղեկությունները ձեւավորվում են հետեւյալ սխեմայով՝

1-ին տարր՝ վճարի տեսակի ծածկագիրը՝ մաքսային եւ այլ վճարների տեսակների դասակարգչին համապատասխան, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

2-րդ տարր՝ վճարված մաքսային վճարի, այլ վճարի գումարը, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին.

3-րդ տարր՝ վճարման արժույթի թվային ծածկագիրը՝ արժույթների դասակարգչի համաձայն.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

4-րդ տարր՝ մաքսային վճարի, այլ վճարի վճարումը հաստատող (արտացոլող) փաստաթղթի (փաստաթղթերի) համարը, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին.

5-րդ տարր՝ Հայաստանի Հանրապետությունում, Ռուսաստանի Դաշնությունում եւ Ղազախստանի Հանրապետությունում՝ մաքսային վճարի, այլ վճարի վճարումը հաստատող (արտացոլող) փաստաթղթի (փաստաթղթերի) ամսաթիվը, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին (XX.XX.XXXX՝ օր, ամիս, տարի). Բելառուսի Հանրապետությունում՝ վճարման ամսաթիվը (այն մաքսային վճարի, այլ վճարի վճարման պարտավորությունը կատարելու ամսաթիվը, որի գանձումը վերապահված է մաքսային մարմիններին)

(XX.XX.XXXX՝ օր, ամիս, տարի)՝ ըստ այն մաքսային վճարի, այլ վճարի վճարումը հաստատող (արտացոլող) փաստաթղթի, որի գանձումը վերապահված է մաքսային մարմիններին.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

6-րդ տարր՝ մաքսային վճարի, այլ վճարի վճարման եղանակը, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին՝ մաքսային եւ այլ վճարների վճարման եղանակների դասակարգչին համապատասխան, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

7-րդ տարր՝ Բելառուսի Հանրապետությունում եւ Ղազախստանի Հանրապետությունում այն անձի մասին տեղեկություններ, որը վճարել է, կամ որի դրամական միջոցների (փողի) հաշվին բռնագանձվել են մաքսային վճարների, այլ վճարների գումարները, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին: Ընդ որում, այդպիսի տեղեկություններ են՝

Բելառուսի Հանրապետությունում՝ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ)՝ բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, կամ առկայության դեպքում՝ ֆիզիկական անձի նույնականացման համարը.

Ղազախստանի Հանրապետությունում՝ կազմակերպության (մասնաճյուղի եւ ներկայացուցչության) եւ համատեղ ձեռնարկատիրության տեսքով գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար՝ բիզնես նույնականացման համարը (ԲՆՀ) կամ ֆիզիկական անձի, այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրության տեսքով գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անհատական նույնականացման համարը (ԱՆՀ):

Եթե որպես անձ, որը վճարել է, կամ որի դրամական միջոցների (փողի) հաշվին բռնագանձվել են մաքսային վճարների, այլ վճարների գումարները, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին, հանդես է գալիս օտարերկրյա անձը, ինչպես նաև այն անձը, որը գրանցված է Միության այն անդամ պետությունում, որը տարբերվում է Միության այն անդամ պետությունից, որի մաքսային մարմին է ներկայացվում ԱՀ-ն, 7-րդ տարրը չի լրացվում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Այն մաքսային վճարի, այլ վճարի վճարման դեպքում, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին, ապրանքների հայտարարագրի գրանցումից հետո 4-7-րդ տարրերը լիազորված անձի կողմից մուտքագրվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշմամբ հաստատված կարգով՝ մաքսային վճարի, այլ վճարի վճարումը հաստատող (արտացոլող) ներկայացված փաստաթղթերի հիման վրա, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ)

Այն դեպքում, երբ Միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան կիրառվում է այն մաքսային վճարների, այլ վճարների վճարման կենտրոնացված կարգ, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին, 4-7-րդ տարրերը չեն լրացվում.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

47) 48-րդ վանդակ: «Վճարումների հետաձգում»

48. Վճարումների հետաձգում

Վանդակում նշվում են վերաներմուծման դեպքում մաքսային վճարի կամ այլ վճարի տեսակի ծածկագիրն այն հարկերի, գանձումների եւ այլ վճարների տեսակների դասակարգչին համապատասխան, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին, նորմատիվ իրավական ակտի համարն ու ամսաթիվը, որով սահմանված է մաքսային վճարի կամ վերաներմուծման ժամանակ վճարի կատարման հետաձգումը, տարաժամկետ վճարումը, ինչպես նաեւ վճարման վերջին օրվան համապատասխանող ամսաթիվը (XX.XX.XXXX՝ օր, ամիս, տարի):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Բոլոր տարրերը միմյանցից բաժանվում են գիծ նշանով՝ «-», տարրերի միջեւ միջակայքեր չեն թույլատրվում:

Վանդակը չի լրացվում, եթե մաքսային վճարի կամ վերաներմուծման ժամանակ վճարման հետաձգման, տարաժամկետ վճարման հնարավորություն չի տրամադրվել:

48) 52-րդ վանդակ: «Երաշխիքն անվավեր է հետեւյալի համար՝»

52. ԵՐԱՇԽԻՔՆ ԱՆՎԱՎԵՐ Է ՀԵՏԵՎՅԱԼԻ ՀԱՄԱՐ՝

Բելառուսի Հանրապետությունում ապրանքների հայտարարագրման ժամանակ վանդակը լրացվում է մաքսատուրքերի, հարկերի եւ այլ մաքսային վճարների վճարման պարտավորության կատարումն ապահովելու եղանակի, այդ ապահովման չափի եւ ապահովումը տրամադրած անձի մասին տեղեկություններ նշելու համար:

Վանդակում նշվում են՝

մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարման ապահովման եղանակի ծածկագիրը՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարման ապահովման եղանակների դասակարգչի համաձայն.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2018 թվականի հունվարի 16-ի թիվ 5 որոշումների խմբագրությամբ)

գումարը, որով գրանցված է (գրանցված են) մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման հավաստագիրը (հավաստագրերը) (մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարման ապահովման եղանակների դասակարգչի «01», «02», «03», «04» ծածկագրերի համար), հավաստագրի գրանցման համարն ու ամսաթիվը, կամ այն դեպքում, երբ Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերին եւ ակտերին եւ (կամ) Բելառուսի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման հավաստագրի տրամադրում չի պահանջվում, նշվում են՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2018 թվականի հունվարի 16-ի թիվ 5 որոշումների խմբագրությամբ)

մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարումն ապահովելու եղանակների դասակարգչի «01» ծածկագրի համար՝ համապատասխան հաշվին մուտքագրված դրամական միջոցների (փողի) գումարը, մաքսատուրքերի, հարկերի ապահովման գումարների մուտքագրումը (փոխանցումը) արտացոլող վճարման փաստաթղթի համարն ու ամսաթիվը, ինչպես նաեւ դրամական միջոցները մուտք արած անձի ՎՀՀ-ն,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտականության կատարման ապահովման եղանակների դասակարգչի «02» ծածկագրի համար՝ բանկային երաշխիքում նշված գումարը, բանկային երաշխիքի ձեւակերպման համարն ու ամսաթիվը, ինչպես նաեւ բանկային երաշխիք տրամադրած բանկի կամ ոչ բանկային ֆինանսավարկային կազմակերպության բանկային նույնականացման ծածկագիրը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 167 որոշումների խմբագրությամբ)

մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտականության կատարման ապահովման եղանակների դասակարգչի «03» ծածկագրի համար՝ երաշխավորության պայմանագրի կնքման գումարը, երաշխավորության պայմանագրի համարը եւ կնքման ամսաթիվը, ինչպես նաեւ երաշխավորի ՎՀՀ-ն.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտականության կատարման ապահովման ձեւերի դասակարգչի «04» ծածկագրի համար՝ գրավի պայմանագրի կնքման գումարը, գրավի պայմանագրի համարը եւ կնքման ամսաթիվը, ինչպես նաեւ գրավառուի ՎՀՀ-ն.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Հայաստանի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում վանդակը չի լրացվում.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

49) 54-րդ վանդակ: «Վայր եւ ամսաթիվ»

54. Վայր եւ ամսաթիվ

Վանդակում նոր տողից՝ դնելով դրանց հերթական համարը, նշվում են ԱՀ-ն կազմած անձի վերաբերյալ տեղեկությունները:

1-ին համարի տակ՝ անձին Մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկման մասին վկայող փաստաթղթի համարը, եթե ապրանքների հայտարարագրումն իրականացվում է մաքսային ներկայացուցչի կողմից, ինչպես նաև՝ հայտարարատուի հետ կնքված պայմանագրի ամսաթիվը եւ համարը:

1-ին համարի տակ տեղեկությունները չեն լրացվում, եթե ապրանքների հայտարարագրումն իրականացվում է ԱՀ-ի 14-րդ վանդակում նշված հայտարարատուի կողմից:

Ի լրումն սույն ենթակետի չորրորդ պարբերությունում նշված տեղեկությունների՝ 1-ին համարի տակ նշվում է.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշմամբ)

Բելառուսի Հանրապետությունում՝ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ).

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշմամբ)

Ռուսաստանի Դաշնությունում՝ հարկ վճարողի նույնականացման համարը (ՀՎՆՀ) եւ «/» բաժանիչ նշանից հետո՝ մաքսային ներկայացուցչին հաշվառման կանգնեցնելու պատճառի ծածկագիրը (ՀԿՊԾ), ընդ որում, եթե մաքսային

ներկայացուցչի անունից ներկայանում է նրա առանձնացված ստորաբաժանումը, ապա նշվում է այն ՀԿՊԾ-ն, որը տրվել է ըստ առանձնացված ստորաբաժանման գտնվելու վայրի:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշմամբ)

2-րդ համարի տակ նշվում է ԱՀ-ն կազմած ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը, նրա անձը հաստատող փաստաթղթի համարը եւ տրամադրման ամսաթիվը (ինչպես նաեւ նման փաստաթղթի անվանումը՝ Ռուսաստանի Դաշնության համար), հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի հաստիքացուցակում տվյալ անձի զբաղեցրած պաշտոնը եւ կոնտակտային հեռախոսահամարը:

Բելառուսի Հանրապետությունում, եթե հայտարարատուի եւ մաքսային ներկայացուցչի միջեւ կնքված հանձնարարության պայմանագրի համաձայն ԱՀ-ն կազմվում է մաքսային ձեւակերպումների մասնագետ հանդիսացող, մաքսային ներկայացուցչի հաստիքացուցակում ընդգրկված՝ այդ մաքսային ներկայացուցչի աշխատողի կողմից, ապա ի լրումն սույն ենթակետի վեցերորդ պարբերությունում նշված տեղեկությունների, 2-րդ համարի տակ նշվում է այդ աշխատողի՝ մաքսային ձեւակերպումների մասնագետի որակավորման վկայականի համարը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշման խմբագրությամբ)

3-րդ համարի տակ նշվում են ԱՀ-ն կազմած անձի լիազորությունները հաստատող փաստաթղթի մասին տեղեկություններ՝

հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի ղեկավարի լիազորությունները հաստատող փաստաթղթի համարը եւ ամսաթիվը, եթե ԱՀ-ն լրացվել է նշված անձի ղեկավարի կողմից,

հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի անունից գործողություններ կատարելու լիազորագրի համարը եւ տրամադրման ամսաթիվը, ինչպես նաեւ լիազորագրի գործողության ժամկետը (եթե այդպիսի ժամկետ սահմանված է), եթե ԱՀ-ն լրացվում է հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի աշխատողի կողմից:

Ռուսաստանի Դաշնությունում մաքսային ներկայացուցչի՝ հայտարարատուի հետ կնքված պայմանագրի, ինչպես նաեւ ԱՀ-ն կազմած անձի ինքնությունը եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերի վավերապայմանների դիմաց, որոնց մասին տեղեկությունները նշվում են 1-3 համարների ներքո, «/» բաժանման նշանից հետո նշվում են հետեւյալ տեղեկությունները՝

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ)

ներկայացվող փաստաթղթի ծածկագիրը՝ փաստաթղթերի եւ տեղեկությունների տեսակների դասակարգչին համապատասխան.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի հունվարի 16-ի թիվ 5 որոշման խմբագրությամբ)

ԱՀ-ն ներկայացնելիս փաստաթղթի ներկայացնելը կամ չներկայացնելը հաստատող հատկանիշը՝

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ)

«1»՝ փաստաթուղթը ներկայացվել է ԱՀ-ն ներկայացնելիս.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ)

«2»՝ փաստաթուղթը չի ներկայացվել Օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ մասին համապատասխան: Այդ դեպքում փաստաթղթի վավերապայմաններից հետո միջակայքով նշվում են ԱՀ-ի կամ այլ մաքսային փաստաթղթի գրանցման համարը, որին կից ներկայացվել է այդ փաստաթուղթը (ԱՀ-ն գրավոր ձեռով ներկայացնելիս), կամ մաքսային մարմինների տեղեկատվական համակարգով տրված՝ փաստաթղթի նույնացուցիչը եւ «/» բաժանման նշանից հետո էլեկտրոնային փաստաթղթերի պահոցի նույնացուցիչը (ԱՀ-ն էլեկտրոնային փաստաթղթի ձեռով ներկայացնելիս):

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ)

Բելառուսի Հանրապետությունում 4-րդ համարի տակ նշվում է փաստաթղթերի գրանցման ելից համարը՝ հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի ելից փաստաթղթերի հաշվառման համակարգին (կանոնակարգին) համապատասխան:

ԱՀ հիմնական թերթի 54-րդ վանդակի եւ լրացուցիչ թերթերի վանդակների տակի տողում ԱՀ կազմած անձը ստորագրում է, նշում ԱՀ-ի կազմման ամսաթիվը եւ վավերացնում ԱՀ-ում հայտագրված տեղեկությունները հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կնիքով, եթե Միության անդամ պետության օրենսդրության համաձայն հայտարարատուն կամ մաքսային ներկայացուցիչը պետք է ունենան կնիք:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

ԱՀ-ն էլեկտրոնային փաստաթղթի ձեռով օգտագործելու դեպքում տեղեկությունները մուտքագրվում են վանդակ սույն ենթակետով սահմանված կարգով՝ հաշվի առնելով Միության անդամ-պետությունների օրենսդրությամբ սահմանված առանձնահատկությունները:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

III. Մաքսային տարածքից արտահանվող ապրանքների համար ԱՀ-ն լրացնելու կարգը

16. «Արտահանում», «մաքսային տարածքից դուրս վերամշակում», «ժամանակավոր արտահանում», «վերաարտահանում», «անմաքս առետուր» մաքսային ընթացակարգերով (Միության ապրանքների դեպքում), հատուկ մաքսային ընթացակարգով ապրանքների հայտարարագրման ժամանակ հայտարարատուի կողմից լրացվում են ԱՀ-ի հետեւյալ վանդակները.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 15 (a, b), 16-րդ, 17-րդ, 17 (a, b), 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, «B», 48-րդ, 54-րդ:

Երրորդ-չորրորդ պարբերությունները հանվել են: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Հայաստանի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում ԱՀ-ի 12-րդ, 43-րդ եւ 45-րդ վանդակները չեն լրացվում, եթե արտահանվող ապրանքների նկատմամբ սահմանված չեն դրանց մաքսային արժեքի հիման վրա հաշվարկվող մաքսատուրքեր եւ հարկեր:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127, 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշումների խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում 43-րդ վանդակը չի լրացվում:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ)

Բելառուսի Հանրապետությունում ԱՀ-ի 12-րդ եւ 45-րդ վանդակները չեն լրացվում ապրանքները «արտահանում» եւ «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպելիս, եթե այդպիսի ապրանքների նկատմամբ սահմանված չեն դրանց մաքսային արժեքի հիման վրա հաշվարկվող մաքսատուրքեր եւ հարկեր:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ)

17. 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 48-րդ եւ 54-րդ վանդակները լրացվում են սույն Հրահանգի II բաժնով նախատեսված՝ ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան:

18. 1-ին, 2-րդ, 8-րդ, 9-րդ, 15-րդ, 15 (a, b), 17-րդ, 17 (a, b), 18-րդ, 20-րդ, 21-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 40-րդ, 46-րդ, 47-րդ եւ «B» վանդակները հայտարարատուի կողմից լրացվում են հետեւյալ կարգով.

1) 1-ին վանդակ: «Հայտարարագիր»

1. ՀԱՅՏԱՐԱՐԱՐԱԳԻՐ		

Վանդակի առաջին ենթաբաժնում կատարվում է հետեւյալ գրառումը՝ «ՅԿ»:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է հայտագրվող մաքսային ընթացակարգի ծածկագիրը՝ մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

ԱՀ-ն էլեկտրոնային փաստաթղթի տեսքով օգտագործելու դեպքում վանդակի երրորդ ենթաբաժնում կատարվում է հետեւյալ գրառումը՝ «ՅԴ»,

2) 2-րդ վանդակ: «Ուղարկող/Արտահանող»

2. Ուղարկող/Արտահանող	N
-----------------------	---

Վանդակում նշվում են տրանսպորտային (փոխադրման) այն փաստաթղթերում որպես ապրանքներն ուղարկող նշված անձի վերաբերյալ տեղեկություններ, որոնց համապատասխան սկսվել է (սկսվում է) ապրանքների փոխադրումը.

կազմակերպության համար՝ կազմակերպության կրճատ անվանումը եւ գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան (մասնաշենքի, շինության), բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

««ՌՈՄԱՇԿԱ» ՍՊԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻ ԵՐԿՐԱՄԱՍ, ՔԱՂ. ՊՅԱՏԻԳՈՐՍԿ, ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ՓՈՂ., 27 Շ., 3-րդ ՄԱՍՆԱՇԵՆՔ».

Եթե կազմակերպության անունից հանդես է գալիս իրավաբանական անձ չհանդիսացող դրա առանձնացված ստորաբաժանումը, ապա ի լրումն վերոնշյալ տեղեկությունների նշվում են նաեւ տեղեկություններ առանձնացված ստորաբաժանման վերաբերյալ. դրա կրճատ անվանումը եւ գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան (մասնաշենքի, շինության), բնակարանի (սենյակի, գրասենյակի) համարը):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

««ՊՈԼԵՍՅԵ» ԲԲԸ

ԲԵԼԱՌՈՒՍ, ՔԱՂ. ՄԻՆՍԿ, ՅԱ. ԿՈԼԱՍԻ ՓՈՂ., 14 Շ.:

«ՊՈԼԵՍՅԵ» ԲԲԸ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԲԵԼԱՌՈՒՍ, ԲՐԵՍՏԻ ՄԱՐԶ, ՔԱՂ. ԿՈՐԻՆ, ՅԱ. ԿՈՒՊԱԼԱՅԻ ՓՈՂ., 8 Շ.»,

անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը եւ բնակության վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, վարչատարածքային միավորը, բնակավայրը, փողոցը, տան եւ բնակարանի համարը):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

«ԱԶ ՌԱԽԻՄՈՎ ԱՍԿԱՐ ՌՈՒՍԼԱՆԻ

ՂԱԶԱԽՍՏԱՆ, ՔԱՂ. ԱՍՏԱՆԱ, ԱԲԱՅԻ ՓՈՂ., Շ.12 ԲՆ. 234»,

անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի համար՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը եւ բնակության վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, վարչատարածքային միավորը (վարչատարածքային միավորի ծածկագիրը՝ վարչատարածքային եւ տարածքային միավորների օբյեկտների նշագրումների համակարգի պետական դասակարգչին համապատասխան (ՎՏՄՆՀ ՄԴ)՝ Ղրղզստանի Հանրապետության համար), բնակավայրը, փողոցը, տան եւ բնակարանի համարը), ինչպես նաեւ անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ տեղեկությունները (փաստաթղթի անվանումը (Ռուսաստանի Դաշնության համար), փաստաթղթի սերիան եւ համարը, տրամադրման ամսաթիվը, նույնականացման համարը՝ առկայության դեպքում կամ Հայաստանի Հանրապետության համար՝ հանրային ծառայության համարանիշը (ՀԾՀ) կամ այդ համարանիշի բացակայության վերաբերյալ տեղեկանքի համարը):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38,

2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

Օրինակ՝

«ԶԱԲՈԼՈՑԿԻ ԻՎԱՆ ՊԱՎԵԼԻ

ԲԵԼԱՌՈՒՍ, ԳՈՄԵԼԻ ՄԱՐԶ, ԿՐԻՆԻՑԱ ԱՎԱՆ, 2, N MP2663741, ՏՐՎԱԾ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-ԻՆ, 7140169C002PB8»:

Վանդակի վերին աջ անկյունում «N» նշանից հետո նշվում է՝

Հայաստանի Հանրապետությունում՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշմամբ)

Բելառուսի Հանրապետությունում՝ վճարողի հաշվառման համարը (ՎՀՀ), բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի,

Ղազախստանի Հանրապետությունում՝ բիզնես նույնականացման համարը (ԲՆՀ)՝ կազմակերպության (մասնաճյուղի եւ ներկայացուցչության) եւ համատեղ ձեռնարկատիրության տեսքով գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար, կամ անհատական նույնականացման համարը (ԱՆՀ)՝ ֆիզիկական անձի, այդ թվում՝ անձնական ձեռնարկատիրության տեսքով գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատիրոջ համար,

Ղրղզստանի Հանրապետությունում՝ հարկ վճարողի նույնականացման հարկային համարը (ՀՎՆՀՀ), որը տրամադրվում է ուղարկողին Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ եթե ուղարկողը Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան որպես անհատ ձեռնարկատեր գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձ է, կամ անձնական նույնականացման համարը (ԱՆՀ), եթե ուղարկողը Ղրղզստանի տարածքում առետրային գործունեություն իրականացնող եւ որպես անհատ ձեռնարկատեր չգրանցված ֆիզիկական անձ է,

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 20-ի թիվ 68 որոշման խմբագրությամբ)

Ռուսաստանի Դաշնությունում՝ հարկ վճարողի նույնականացման համարը (ՀՎՆՀ) եւ իրավաբանական անձի համար՝ «/» բաժանման նշանից հետո՝ հաշվառման կանգնեցնելու պատճառի ծածկագիրը (ՀԿՊԾ), ընդ որում, եթե որպես ապրանքների ուղարկող հանդես է գալիս իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումը, ապա նշվում է այն ՀԿՊԾ-ն, որը տրվել է ըստ առանձնացված ստորաբաժանման գտնվելու վայրի:

Վանդակի ստորին մասում նշվում է՝

Ղազախստանի Հանրապետությունում՝ ուղարկողի ՆՄՀ, այդ թվում՝ օտարերկրյա անձի համար՝ Ղազախստանի Հանրապետությունում կիրառվող նույնականացման մաքսային համարի ձեւավորման դասակարգչին համապատասխան,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Ղրղզստանի Հանրապետությունում՝ Ձեռնարկությունների եւ կազմակերպությունների համահանրապետական դասակարգչի ծածկագիրը (ՁԿՀԴ)՝ իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի համար,

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշմամբ)

Ռուսաստանի Դաշնությունում՝ պետական գրանցման հիմնական համարը (ՊԳՀՀ) կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վերաբերյալ գրառման պետական գրանցման հիմնական համարը (ԱՁՊԳՀՀ), բացառությամբ օտարերկրյա անձի, ինչպես նաեւ այն անձի, որը գրանցված է Միության այն անդամ պետությունում, որը տարբերվում է Միության այն անդամ պետությունից, որի մաքսային մարմին ներկայացվում է ԱՀ-ն:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Եթե որպես ապրանքների ուղարկող հանդես է գալիս օտարերկրյա անձը, ինչպես նաեւ այն անձը, որը գրանցված է Միության այն անդամ պետությունում, որը տարբերվում է Միության այն անդամ պետությունից, որի մաքսային մարմին ներկայացվում է ԱՀ-ն, ապա վանդակի վերին աջ անկյունը չի լրացվում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Եթե ավելի վաղ հայտագրված մաքսային ընթացակարգի փոփոխության դեպքում հայտարարագրվող ապրանքները չեն տեղափոխվում մաքսային սահմանով, ապա ապրանքներն ուղարկողի մասին տեղեկությունները նշվում են նախորդող ԱՀ-ից, որով ապրանքներն արտահանվել են մաքսային տարածքից:

Եթե սույն վանդակում հայտագրման ենթակա տեղեկությունները կրկնում են ԱՀ-ի 14-րդ վանդակում հայտագրման ենթակա տեղեկությունները, ապա այդ տեղեկությունները սույն վանդակ չեն մուտքագրվում, ընդ որում՝ կատարվում է հետեւյալ գրառումը՝ «տե՛ս ԱՀ-ի 14-րդ վանդակը»:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ)

Պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից: - Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Վանդակը չի լրացվում ապրանքների իրացման հետ կապված օդանավերով, երկաթուղային եւ այլ տեսակի տրանսպորտով տեղափոխվող կանխիկ արժույթի (թղթադրամների եւ մետաղադրամների տեսքով հասույթի եւ փոխանակման արժույթի) հայտարարագրման դեպքում.

3) 8-րդ վանդակ: «Ստացող»

8.	Ստացող	N
----	--------	---

Վանդակում նշվում են տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում որպես ապրանքներ ստացող նշված անձի վերաբերյալ տեղեկությունները:

Եթե տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում ներառված չեն տեղեկություններ ապրանքները վերջնական ստացող անձի վերաբերյալ, վանդակում նշվում են տեղեկություններ արտաքին տնտեսական գործարքի մասնակից օտարերկրյա անձի վերաբերյալ՝ ավելացնելով «կոնտրագենտ» գրառումը:

Եթե ապրանքների փոխադրումն իրականացվում է տրանսպորտի կամ տրանսպորտային միջոցների մի քանի տեսակների օգտագործմամբ (մաքսային միության տարածքում մեկ տրանսպորտային միջոցից մեկ այլ տրանսպորտային միջոց ապրանքների փոխաբեռնմամբ (վերաբեռնմամբ)) եւ ԱՀ-ի ներկայացման պահին հայտարարատուն չի կարող տրամադրել ապրանքների միջազգային փոխադրման պայմանագրի կնքումը հաստատելու նպատակով կազմվող վերջին տրանսպորտային (փոխադրման) փաստաթուղթը, ապա նշվում են տեղեկություններ արտաքին տնտեսական գործարքին մասնակից օտարերկրյա անձի վերաբերյալ՝ ավելացնելով «կոնտրագենտ» գրառումը:

Եթե ավելի վաղ հայտագրված մաքսային ընթացակարգի փոփոխության դեպքում հայտարարագրվող ապրանքները չեն տեղափոխվում մաքսային սահմանով, վանդակում նշվում են տեղեկություններ այն անձի վերաբերյալ, որի տիրապետմանը եւ (կամ) օգտագործմանն են փոխանցվում ապրանքները մաքսային տարածքից դուրս:

Վանդակում նշվում են՝

կազմակերպության համար՝ կազմակերպության կրճատ անվանումը եւ գտնվելու վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, եւ հասցեն),

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Ֆիզիկական անձի համար՝ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը եւ բնակության վայրը (երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, եւ հասցեն):

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

"RED" LTD

ԳԵՐՄԱՆԻԱ, ԲԵՌԼԻՆ, ԲԼՅՈՒՄԵՆՇՏՐԱՍՍԵ, 26",

կամ "BARTON BILL

ԻՏԱԼԻԱ, ROMA, ST. PETER, 12, 1":

Պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից: -Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Եթե ապրանքների տեղափոխումն իրականացվում է տրանսպորտի կամ տրանսպորտային միջոցների մի քանի տեսակների օգտագործմամբ (մեկ տրանսպորտային միջոցից մեկ այլ տրանսպորտային միջոց ապրանքների փոխաբեռնմամբ (վերաբեռնմամբ)) եւ ԱՀ-ի ներկայացման պահին հայտարարատուն չի կարող ներկայացնել ապրանքների միջազգային փոխադրման պայմանագրի կնքումը հաստատելու նպատակով կազմվող վերջին տրանսպորտային (փոխադրման) փաստաթուղթը, ապա նշվում են տեղեկություններ արտաքին տնտեսական գործարքին մասնակից օտարերկրյա անձի վերաբերյալ՝ անվանումը (ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը) եւ գտնվելու վայրը (հասցեն)՝ նշելով «Կոնտրագենտ»:

Վանդակը չի լրացվում ապրանքների իրացման հետ կապված օդանավերով, ինչպես նաեւ երկաթուղային եւ այլ տեսակի տրանսպորտով տեղափոխվող կանխիկ արժույթի (թղթադրամների եւ մետաղադրամների տեսքով հասույթի եւ փոխանակման արժույթի) հայտարարագրման դեպքում,

4) 9-րդ վանդակ: «Ֆինանսական կարգավորման համար պատասխանատու անձ»

9. Ֆինանսական կարգավորման համար պատասխանատու անձ	N
--	---

Վանդակում նշվում են տեղեկություններ հետեւյալ անձանցից մեկի վերաբերյալ.

Միության անդամ պետության այն անձի վերաբերյալ, որը կնքել է (կամ որի անունից կամ որի հանձնարարությամբ կնքվել է) պայմանագիր արտաքին տնտեսական գործարք իրականացնելիս, որին համապատասխան ապրանքներն արտահանվում են մաքսային տարածքից.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

օտարերկրյա անձի վերաբերյալ, որն ունի ապրանքների տնօրինման իրավունք մաքսային տարածքում արտաքին տնտեսական գործարքի շրջանակներից դուրս, որի կողմերից մեկը Միության անդամ պետության անձ է.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

ԱՀ-ի ներկայացման պահին հայտարարագրվող ապրանքների սեփականատեր հանդիսացող անձի վերաբերյալ, եթե հայտարարագրվող ապրանքներն արտահանվում են մաքսային տարածքից միակողմանի արտաքին տնտեսական գործարքի շրջանակներում.

մաքսային տարածքից կանխիկ արժույթ արտահանող անձի վերաբերյալ:

Նշված անձանց վերաբերյալ տեղեկությունները մուտքագրվում են սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 9-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

Եթե սույն վանդակում հայտագրման ենթակա տեղեկությունները կրկնում են ԱՀ-ի 14-րդ վանդակում հայտագրման ենթակա տեղեկությունները, այդպիսի տեղեկությունները սույն վանդակ չեն մուտքագրվում, ընդ որում կատարվում է հետեւյալ գրառումը՝ «տե՛ս ԱՀ-ի 14-րդ վանդակը».

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ)

5) 15-րդ վանդակ: «Ուղարկող երկիր»:

15. Ուղարկող երկիր

Վանդակում նշվում է ապրանքներն ուղարկող երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

6) 15-րդ վանդակ (a,b): «Ուղարկող երկրի ծածկագիր»

15. Ուղարկող երկրի ծածկագիր

a				b			
---	--	--	--	---	--	--	--

Վանդակի «a» ենթաբաժնում նշվում է ուղարկող երկրի ծածկագիրն՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշումների խմբագրությամբ)

7) 17-րդ վանդակ: «Նշանակման երկիր»

17. Նշանակման երկիր

Վանդակում նշվում է ԱՀ-ի ներկայացման օրվա դրությամբ որպես նշանակման երկիր հայտնի երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, որտեղ ապրանքները սպառվելու, օգտագործվելու կամ ենթարկվելու են հետագա վերամշակման:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Եթե այդպիսի երկիր հայտնի չէ, նշվում է հայտարարագրման պահին հայտնի այն երկրի կրճատ անվանումը, ուր պետք է առաքվեն ապրանքները:

Վանդակում նշվում է «ԱՅՏՆԻ ՉԷ».


«անմաքս առետուր» մաքսային ընթացակարգով ձեակերպվող արտահանվող ապրանքները հայտարարագրելիս,

Ղազախստանի Հանրապետությունում՝ ժամանակավոր կամ պարբերական ԱՀ ներկայացնելու միջոցով ապրանքները հայտարարագրելիս՝ պայմանով, որ նշանակման երկրի վերաբերյալ տեղեկությունները կներկայացվեն ամբողջական ԱՀ-ում,

Ռուսաստանի Դաշնությունում՝ ոչ ամբողջական կամ պարբերական ԱՀ ներկայացնելու միջոցով ապրանքները հայտարարագրելիս՝ պայմանով, որ բացակայող տեղեկությունները կներկայացվեն լրացուցիչ կերպով, մաքսային գործի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, ժամանակավոր (լրացուցիչ ժամանակավոր) ԱՀ ներկայացնելու միջոցով ապրանքները հայտարարագրելիս՝ պայմանով, որ նշանակման երկրի վերաբերյալ տեղեկությունները կներկայացվեն ամբողջական ԱՀ-ում:

Վանդակը չի լրացվում ապրանքների իրացման հետ կապված օդանավերով, ինչպես նաև երկաթուղային եւ այլ տեսակի տրանսպորտով տեղափոխվող կանխիկ արժույթի (թղթադրամների եւ մետաղադրամների տեսքով հասույթի եւ փոխանակման արժույթի) հայտարարագրման դեպքում,

8) 17-րդ վանդակ (a,b): «Նշանակման երկրի ծածկագիր»



Վանդակի «a» ենթաբաժնում նշվում է ԱՀ-ի ներկայացման օրվա դրությամբ որպես նշանակման երկիր հայտնի երկրի ծածկագիրն՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, որտեղ ապրանքները սպառվելու, օգտագործվելու կամ ենթարկվելու են հետագա վերամշակման:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշումների խմբագրությամբ)

Եթե այդպիսի երկիր հայտնի չէ, նշվում է հայտարարագրման պահին հայտնի երկրի ծածկագիրը, որտեղ պետք է առաքվեն ապրանքները՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Եթե ԱՀ-ի 17-րդ վանդակում նշվել է «ՀԱՅՏՆԻ ՉԷ», ապա վանդակի «a» ենթաբաժնում նշվում է երկու հատ զրո՝ «00»:

Վանդակը չի լրացվում ապրանքների իրացման հետ կապված օդանավերով, երկաթուղային եւ այլ տեսակի տրանսպորտով տեղափոխվող կանխիկ արժույթը (թղթադրամների եւ մետաղադրամների տեսքով հասույթը եւ փոխանակման արժույթը) հայտարարագրելիս:

Բելառուսի Հանրապետությունում՝

ապրանքներ հայտարարագրելիս վանդակի «b» ենթաբաժնում նշվում է նշանակման երկրի վարչատարածքային բաժանման ծածկագիրը՝ Բելառուսի Հանրապետությունում կիրառվող՝ երկրների վարչատարածքային բաժանման դասակարգչին համապատասխան,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

սույն վանդակի «a» ենթաբաժնում նշված ծածկագրի երկրի վարչատարածքային բաժանման համապատասխան եռանիշ թվային ծածկագիրը բացակայելու դեպքում՝ նշվում է «000» եռանիշ ծածկագիրը,

9) 18-րդ վանդակ. «Տրանսպորտային միջոցի նույնականացում եւ գրանցման երկիր՝ ուղարկման/ժամանման պահին»

18. Տրանսպորտային միջոցի նույնականացում եւ գրանցման երկիր ուղարկման/ժամանման պահին
--

Վանդակը լրացվում է, եթե ապրանքների հայտարարագրումն իրականացվում է ոչ դրանց՝ մաքսային տարածքի սահմաններից դուրս մեկնման վայրում:

Վանդակում նշվում են տեղեկություններ այն տրանսպորտային միջոցների մասին, որոնց վրա բեռնված են ապրանքները՝ մինչև մաքսային տարածքից դուրս մեկնման վայր դրանք փոխադրելու նպատակով:

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է տրանսպորտային միջոցների ընդհանուր թիվը՝ եւ միջակետից հետո ", " բաժանման նշանով եւ առանց միջակայքի.

ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրելիս՝ տրանսպորտային միջոցների գրանցման համարներն,

օրինակ՝

«4:A770AE,A771BC,A772MH,A773AB»,

«4:A880AE199,A881BC199,A882MH99,A883EH199»,

Եթե ապրանքները փոխադրվում են ավտոտրանսպորտային միջոցների շարժակազմով՝ բոլոր տրանսպորտային միջոցների գրանցման համարները՝ սկսած ակտիվ տրանսպորտային միջոցից, եւ, «/» բաժանման նշանից հետո՝ կցորդների, կիսակցորդների եւ այլնի համարներից,

օրինակ՝

«C225BH163/AB1971163»,

«2:3571AA-7/A4171A-7»,

Երկաթուղային տրանսպորտով փոխադրելիս՝ երկաթուղային վագոնների (կառամատույցների, ցիստեռնների եւ այլնի) համարները,

ծովային (գետային) տրանսպորտով ապրանքները փոխադրելիս՝ նավերի անվանումները,

օդային տրանսպորտով ապրանքները փոխադրելիս՝ չվերթների համարները:

Տասնհինգերորդ-տասնվեցերորդ պարբերությունները հանվել են 2015 թվականի հուլիսի 1-ից: - Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է տրանսպորտային միջոցի գրանցման երկրի ծածկագիրը, իսկ եթե փոխադրումն իրականացնելիս օգտագործվել է տրանսպորտային միջոցների շարժակազմ, ապա՝ այն երկրի ծածկագիրը, որտեղ գրանցվել է այն տրանսպորտային միջոցը, որը շարժման մեջ է դնում մյուս տրանսպորտային միջոցը (տրանսպորտային միջոցները)՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշումների խմբագրությամբ)

Եթե հայտարարագրման պահին հայտնի չէ տրանսպորտային միջոցի գրանցման երկիրը (երկրները), վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է երկու հատ զրո «00»:

Եթե ապրանքները փոխադրվել են տարբեր երկրներում գրանցված մի քանի տրանսպորտային միջոցներով, վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է երկու հատ ինը՝ «99»:

Երկաթուղային տրանսպորտով ապրանքները փոխադրելիս՝ վանդակի երկրորդ ենթաբաժինը չի լրացվում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

«Արտահանում» մաքսային ընթացակարգից տարբեր մաքսային ընթացակարգերով հայտարարագրվող ապրանքները ձեւակերպելիս, որոնք նախատեսում են ապրանքների արտահանումը մաքսային տարածքից, վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է տրանսպորտային միջոցների ընդհանուր թիվը, այլ տեղեկություններ վանդակ չեն մուտքագրվում:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշմամբ)

Վանդակը չի լրացվում՝

մաքսային ընթացակարգի փոփոխության դեպքում, եթե հայտարարագրվող ապրանքները գտնվում են մաքսային տարածքի սահմաններից դուրս,

միջազգային փոստային առաքումներով ուղարկվող ապրանքների փոխադրման դեպքում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշման խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքները հայտարարագրելիս, եթե ԱՀ-ն ներկայացնելու պահին հայտարարատուն չունի հստակ տեղեկություններ տրանսպորտային միջոցների մասին, եւ ապրանքների մեկնումն իրականացվելու է Բելառուսի Հանրապետության տարածքից.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ)

Պարբերությունը հանվել է: -Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 213 որոշում.

Ռուսաստանի Դաշնությունում՝ ոչ ամբողջական, պարբերական, ժամանակավոր ԱՀ ներկայացնելու միջոցով երկաթուղային տրանսպորտով փոխադրվող ապրանքները հայտարարագրելիս.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշմամբ)

10) 20-րդ վանդակ: «Մատակարարման պայմաններ»

20. Մատակարարման պայմաններ

Վանդակում նշվում են մատակարարման պայմանների վերաբերյալ տեղեկությունները, եթե հայտարարագրվող ապրանքներն արտահանվում են մաքսային տարածքից կամ փոփոխվում կամ ավարտվում է մաքսային ընթացակարգի գործողությունն ավելի վաղ արտահանված ապրանքների նկատմամբ՝ արտաքին տնտեսական գործարք կատարելիս կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման դիմաց:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում են մատակարարման պայմանների ծածկագիրը՝ մատակարարման պայմանների դասակարգչին համապատասխան, եւ աշխարհագրական կետի անվանումը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Երրորդ-չորրորդ պարբերությունները հանվել են 2015 թվականի հուլիսի 1-ից:
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Եթե ԱՀ-ում հայտարարագրվող ապրանքների մասով մատակարարման պայմանները (բազիսային պայմանները) տարբեր են կամ, եթե մատակարարման պայմանները (բազիսային պայմանները) վերաբերում են ԱՀ-ում հայտարարագրվող բոլոր ապրանքներին, բայց միեւնույն ժամանակ մատակարարումն իրականացվում է տարբեր աշխարհագրական կետեր, վանդակի երկրորդ ենթաբաժնում կատարվում է հետեւյալ գրառումը՝ «ՏԱՐԲԵՐ ԵՆ»:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշման խմբագրությամբ)

Վանդակի առաջին ենթաբաժինը չի լրացվում:

Բելառուսի Հանրապետությունում ապրանքները հայտարարագրելիս երրորդ ենթաբաժնում նշվում է ապրանքների մատակարարման տեսակի երկնիշ թվային ծածկագիրը՝ Բելառուսի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.

11) 21-րդ վանդակ: «Ակտիվ տրանսպորտային միջոցի նույնականացումը եւ գրանցման երկիրը՝ սահմանին»

21. Ակտիվ տրանսպորտային միջոցի նույնականացումը եւ գրանցման երկիրը՝ սահմանին

Վանդակում նշվում են այն տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկություններ, որոնցում գտնվում են (գտնվելու են) հայտարարագրվող ապրանքները մաքսային տարածքից մեկնման ժամանակ:

Եթե մաքսային տարածքից ապրանքների մեկնման ժամանակ օգտագործվում է (օգտագործվելու է) տրանսպորտային միջոցների շարժակազմ, ապա նշվում են տեղեկություններ ակտիվ տրանսպորտային միջոցի վերաբերյալ, որը շարժման մեջ է դնում մյուս տրանսպորտային միջոցը (տրանսպորտային միջոցները):

Եթե մաքսային տարածքից ապրանքների մեկնման դեպքում իրականացվելու է դրանց փոխաբեռնում (վերաբեռնում) այլ տրանսպորտային միջոց, եւ հայտարարատուն չի կարող ներկայացնել վերոնշյալ տրանսպորտային միջոցների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները (փաստաթղթային հաստատմամբ), վանդակում նշվում է տրանսպորտի տեսակի (տեսակների) անվանումը, որում գտնվելու են ապրանքները մաքսային տարածքից դրանց մեկնման վայրում՝ տրանսպորտային միջոցների եւ ապրանքների փոխադրման տեսակների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է տրանսպորտային միջոցների ընդհանուր թիվը եւ միջակետից հետո "," բաժանման նշանով եւ առանց միջակայքի.

ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրելիս՝ տրանսպորտային միջոցների գրանցման համարներն,

օրինակ՝

"4:A770AE, A771BC, A772MH, A773AB",

"4:A880AE99, A881BC99, A882MH99, A883EH99",

ծովային (գետային) տրանսպորտով ապրանքները փոխադրելիս՝ նավերի անվանումները.

օդային տրանսպորտով ապրանքները փոխադրելիս՝ չվերթների համարները:

Տասնմեկերորդ-տասներկուերորդ պարբերությունները հանվել են 2015 թվականի հուլիսի 1-ից: -Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է այն երկրի ծածկագիրը, որտեղ գրանցված է տրանսպորտային միջոցը, իսկ եթե փոխադրումն իրականացնելիս օգտագործվում է տրանսպորտային միջոցների շարժակազմ, ապա՝ այն երկրի ծածկագիրը, որտեղ գրանցվել է այն տրանսպորտային միջոցը, որը շարժման մեջ է դնում մյուս տրանսպորտային միջոցը (տրանսպորտային միջոցները)՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2018 թվականի հունվարի 31-ի թիվ 16 որոշումների խմբագրությամբ)

Եթե հայտարարագրման պահին հայտնի չէ այն երկիրը, որտեղ գրանցված է տրանսպորտային միջոցը, վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է երկու հատ գրո՝ «00»:

Եթե ապրանքները փոխադրվում են տարբեր երկրներում գրանցված մի քանի տրանսպորտային միջոցներով, վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է երկու հատ ինը՝ «99»:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի հունվարի 31-ի թիվ 16 որոշման խմբագրությամբ)

Պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից: -Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

«Արտահանում» մաքսային ընթացակարգից տարբեր մաքսային ընթացակարգերով հայտարարագրվող ապրանքները ձեակերպելիս, որոնք նախատեսում են ապրանքների արտահանումը մաքսային տարածքից, վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է տրանսպորտային միջոցների ընդհանուր թիվը, այլ տեղեկություններ վանդակ չեն մուտքագրվում:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշմամբ)

Վանդակը չի լրացվում՝

արտահանման համար նախատեսված ապրանքները «ազատ պահեստ» եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգերով ձեակերպելու դեպքում,

մաքսային ընթացակարգի փոփոխության դեպքում, եթե հայտարարագրվող ապրանքները գտնվում են մաքսային տարածքի սահմաններից դուրս,

«անմաքս առետուր» մաքսային ընթացակարգով ապրանքները ձեակերպելու դեպքում,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

միջազգային փոստային առաքումներով ուղարկվող ապրանքների փոխադրման դեպքում.

երկաթուղային տրանսպորտով ապրանքների փոխադրման դեպքում.

Պարբերությունը հանվել է: -Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 213 որոշում,

12) 29-րդ վանդակ: «Մուտքի (ելքի) մարմին»

29. Մուտքի (ելքի) մարմին

Վանդակում նշվում է մաքսային տարածքից ապրանքների մեկնման տեղում գտնվող մաքսային մարմնի ծածկագիրը՝ Միության անդամ պետություններում կիրառվող՝ մաքսային մարմինների դասակարգիչներին համապատասխան, սույն Հրահանգի II բաժնում նշված ԱՀ-ի 29-րդ վանդակի համար սահմանված կարգով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Եթե հայտարարագրվող ապրանքները մաքսային տարածքից արտահանվում են տարբեր անցակետերով, վանդակում նշվում են մաքսային տարածքից ապրանքների մեկնման տեղերում տեղակայված բոլոր մաքսային մարմինների ծածկագրերը՝ Միության անդամ պետություններում կիրառվող մաքսային մարմինների դասակարգիչներին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Վանդակը չի լրացվում՝

արտահանման համար նախատեսված ապրանքները «անմաքս առետուր» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու դեպքում,

մաքսային ընթացակարգի փոփոխության դեպքում, եթե հայտարարագրվող ապրանքները գտնվում են մաքսային տարածքի սահմաններից դուրս.

պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից: - Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում,

Հայաստանի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող եւ արտահանման մաքսատուրքերով չհարկվող ապրանքները հայտարարագրելիս, որոնց մեկնումն իրականացվելու է Միության այդ անդամ պետությունների տարածքներից (բացառությամբ դեպքերի, երբ այդպիսի ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) մինչեւ մաքսային տարածքից մեկնման վայր իրականացվելու է Միության անդամ չհանդիսացող պետության տարածքով).

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ)

Բելառուսի Հանրապետությունում «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքները հայտարարագրելիս, որոնց մեկնումն իրականացվելու է Բելառուսի Հանրապետության տարածքից.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշմամբ)

Ռուսաստանի Դաշնությունում՝ եթե հայտարարագրման պահին մաքսային տարածքից ապրանքների մեկնման վայրը հայտնի չէ:

Պարբերությունը հանվել է: -Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 213 որոշում.

13) 30-րդ վանդակ: «Ապրանքների գտնվելու վայր»

30. Ապրանքների գտնվելու վայր

Սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 30-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով վանդակում նշվում են ԱՀ-ն ներկայացնելու պահին ապրանքների գտնվելու վայրի մասին տեղեկությունները եւ կարող են ներկայացվել մաքսային մարմին՝ դրանց նկատմամբ մաքսային տեսազննում եւ (կամ) մաքսային զննում անցկացնելու համար:

Վանդակը չի լրացվում՝

երբ «մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակում» եւ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգերն ավարտվում են ապրանքները «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու միջոցով՝ առանց ապրանքները մաքսային մարմին փաստացի ներկայացնելու.

Միության ապրանքներ հանդիսացող միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների ժամանակավոր արտահանումն ավարտելու դեպքում՝ «արտահանում» կամ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու միջոցով, առանց այդպիսի տրանսպորտային միջոցները մաքսային մարմին փաստացի ներկայացնելու.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից: -Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում,

Օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում (մաքսային տարածքից արտահանվող ապրանքների նկատմամբ ոչ ամբողջական, պարբերական, ժամանակավոր, լրացուցիչ ժամանակավոր կամ ամբողջական ԱՀ-ի ներկայացման դեպքում, եթե ԱՀ-ի 7-րդ վանդակում նշված է ապրանքների հայտարարագրման առանձնահատկության համապատասխան ծածկագիրը՝ ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունների դասակարգչին համապատասխան) Միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված ապրանքների հայտարարագրման առանձնահատկությունների կիրառման ժամանակ, եթե Միության անդամ պետությունների օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ.

(13-րդ ենթակետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

14) 31-րդ վանդակ: «Բեռնատեղիներ եւ ապրանքների նկարագրություն»

31. Բեռնատեղիներ եւ ապրանքների նկարագրություն	Մակնշում եւ քանակ. Բեռնարկղերի համարներ. Քանակ եւ առանձնահատկություններ
---	---

Տեղեկությունները մուտքագրվում են վանդակ Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 31-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները:

«Արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող եւ արտահանման մաքսատուրքերով չհարկվող ապրանքները հայտարարագրելիս՝

2.1 համարի տակ չեն նշվում սպառողական եւ (կամ) անհատական տարայի տեսակների ծածկագրերը՝ բեռի, փաթեթվածքի եւ փաթեթավորման նյութերի դասակարգիչներին համապատասխան.

3 համարի տակ չեն նշվում այն բեռնարկղերի մասին տեղեկությունները, որոնցում փոխադրվում են (փոխադրվելու են) ապրանքները:

Ապրանքները «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելիս, եթե ԱՀ-ն օգտագործվում է որպես մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթ, 6-րդ համարի տակ նշվում են.

վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների հայտագրվող չափաքանակը.

վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների անվանումը եւ քանակությունը.

վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներում արտահանված ապրանքների նույնականացման եղանակները.

վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներն օտարերկրյա ապրանքներով փոխարինելու վերաբերյալ տեղեկությունները,

Ռուսաստանի Դաշնությունում 10 համարի տակ նշվում են հսկիչ նշաններով մակնշման ենթակա ապրանքների ցանկում ներառված, եւ «արտահանում», «ժամանակավոր արտահանում» եւ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված ապրանքների համար, եթե այդ ապրանքների վրա զետեղված են հսկիչ (նույնականացման) նշաններ՝ զետեղված հսկիչ (նույնականացման) նշանների քանակը եւ միջակետից հետո՝ «,» բաժանիչ նշանով՝ առանց միջակայքի՝ դրանց նույնականացման համարները (նույնացուցիչները):

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2017 թվականի հուլիսի 18-ի թիվ 91 որոշմամբ)

Ձեւտեղված անընդմեջ հաջորդող հսկիչ (նույնականացման) նշանների նույնականացման համարները (նույնացուցիչները) նշվում են համապատասխան

տիրույթի առաջին եւ վերջին համարները դնելու միջոցով՝ տարանջատելով «-» բաժանիչ նշանով.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի հուլիսի 18-ի թիվ 91 որոշմամբ)

(14-րդ ենթակետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 146 որոշման խմբագրությամբ)

15) 40-րդ վանդակ: Ընդհանուր հայտարարագիր/Նախորդող փաստաթուղթ

40. Ընդհանուր հայտարարագիր/Նախորդող փաստաթուղթ

Վանդակը չի լրացվում, եթե «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգը կիրառելիս՝ որպես վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներին համարժեք օտարերկրյա ապրանքների ներմուծումն իրականացվում է մինչեւ Միության ապրանքները նշված մաքսային ընթացակարգին համապատասխան արտահանելը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Այլ դեպքերում վանդակը լրացվում է սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 40-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

16) 46-րդ վանդակ: «Վիճակագրական արժեք»

46. Վիճակագրական արժեք

Վանդակում թվային նիշերով առանց բաժանիչ նշանների եւ միջակայքերի նշվում է ապրանքի վիճակագրական արժեքը ԱՄՆ դոլարով՝ ստորակետից հետո մինչեւ երկու նիշ ճշգրտությամբ մաթեմատիկական կանոններով կլորացված:

Ապրանքի վիճակագրական արժեքը հաշվարկվում է ԱՀ-ի 45-րդ վանդակում նշված ապրանքի մաքսային արժեքի հիման վրա՝ բացառությամբ սույն ենթակետի հինգերորդ-յոթերորդ պարբերություններում նշված դեպքերի:

Ռուսաստանի Դաշնությունում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգման մեկ ծածկագրի նշմամբ տարբեր անվանումներով ապրանքների հայտարարագրելիս, ապրանքների վիճակագրական արժեքը հաշվարկվում է ԱՀ-ի 12-րդ վանդակում նշված ապրանքների ընդհանուր մաքսային արժեքի հիման վրա:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Այն դեպքերում, երբ սույն Հրահանգին համապատասխան, ԱՀ-ի 45-րդ վանդակը չի լրացվում, ապրանքի վիճակագրական արժեքը հաշվարկվում է ԱՀ-ի 42-րդ վանդակում նշված ապրանքի գնի հիման վրա:

Ռուսաստանի Դաշնությունում՝ այն դեպքում, երբ սույն Հրահանգին համապատասխան չեն լրացվում ԱՀ-ի 42-րդ եւ 45-րդ վանդակները, կամ երբ ԱՀ-ի 42-րդ վանդակում նշվում է «0» թիվը, ԱՀ-ի 46-րդ վանդակում նշվում է առետրային փաստաթղթերում նշված ապրանքի համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա արժեքը, իսկ դրա բացակայության դեպքում՝ նույնանման կամ համանման ապրանքների արժեքը:

Ապրանքի վիճակագրական արժեքը հաշվարկվում է ապրանքի մաքսային արժեքի, իսկ սույն ենթակետի վեցերորդ պարբերությունում նշված դեպքերում՝ ապրանքի գնի FOB՝ ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության տարածքից մեկնման վերջին նավահանգստի (DAP՝ ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության սահմանի հատման վայր), մատակարարման բազիսային պայմանին համապատասխանեցման միջոցով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

Ապրանքի մաքսային արժեքը FOB՝ ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության տարածքից մեկնման վերջին նավահանգիստ (DAP՝ ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության սահմանի հատման վայր), մատակարարման բազիսային պայմանին համապատասխանեցնելիս.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

այնպիսի պայմաններով մատակարարված ապրանքի համար, որոնց համապատասխան նշանակման կետը գտնվում է ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության տարածքում, ապրանքի մաքսային արժեքին ավելացվում են ապրանքի փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ծախսերը՝ մինչև ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության սահմանի հատման վայրը, եթե նման ծախսերը հաշվի չեն առնվել ապրանքի մաքսային արժեքը որոշելիս,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

այնպիսի պայմաններով մատակարարված ապրանքի համար, որոնց համապատասխան նշանակման կետը գտնվում է ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության տարածքից դուրս, ապրանքի մաքսային արժեքից հանվում են ապրանքի փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ծախսերը՝ ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության սահմանի հատման վայրից մինչև նշանակման կետը, եթե նման ծախսերը հաշվի են առնվել ապրանքի մաքսային արժեքը որոշելիս:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Ապրանքի մաքսային արժեքը FOB՝ ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության տարածքից մեկնման վերջին նավահանգիստ (DAP՝ ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության սահմանի հատման վայր), մատակարարման բազիսային պայմանին համապատասխանեցնելիս.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

այնպիսի պայմաններով մատակարարված ապրանքի համար, որոնց համապատասխան նշանակման կետը գտնվում է ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության տարածքում, ապրանքի գնին ավելացվում են ապրանքի առաքման ծախսերը՝ մինչև ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության սահմանի հատման վայրը,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

այնպիսի պայմաններով մատակարարված ապրանքի համար, որոնց համապատասխան նշանակման կետը գտնվում է ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության տարածքից դուրս, ապրանքի գնից հանվում են ապրանքի առաքման ծախսերը՝ ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության սահմանի հատման վայրից մինչև նշանակման կետ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

FOB՝ ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության տարածքից մեկնման վերջին նավահանգիստ (DAP՝ ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության սահմանի հատման վայր), մատակարարման բազիսային պայմանին համապատասխանեցված ապրանքի մաքսային արժեքը կամ գինը ԱՄՆ դոլարի

վերահաշվարկելիս, կիրառվում է մաքսային մարմնի կողմից ԱՀ-ի գրանցման ամսաթվի դրությամբ Միության անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի կողմից սահմանված փոխարժեքը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

FOB՝ ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության տարածքից մեկնման վերջին նավահանգիստ (DAP՝ ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող անդամ պետության սահմանի հատման վայր), մատակարարման բազիսային պայմանին համապատասխանեցված ապրանքի մաքսային արժեքի վերահաշվարկն ԱՄՆ դոլարի իրականացվում է ԱՄՆ դոլարի փոխարժեքին դրա բաժանման միջոցով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

FOB՝ ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության տարածքից մեկնման վերջին նավահանգիստ (DAP՝ ապրանքի ուղարկման երկիր հանդիսացող՝ Միության անդամ պետության սահմանի հատման վայր), մատակարարման բազիսային պայմանին համապատասխանեցված ապրանքի գնի (այսուհետ սույն ենթակետում՝ ապրանքի համապատասխանեցված արժեք) վերահաշվարկն ԱՄՆ դոլարի իրականացվում է հետեւյալ բանաձեւով.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

$$C_{\$}=(C_{iv} \times K_{iv})/(E_{iv} \times K_{\$}),$$

որտեղ՝

$C_{\$}$ -ն ապրանքի վիճակագրական արժեքն է ԱՄՆ դոլարով.

C_{IV}-ն ապրանքի համապատասխանեցված արժեքն է՝ արտահայտված պայմանագրի գնի արժույթով.

K_{iv}-ն արժույթի փոխարժեքն է, որով հաշվարկված է ապրանքի համապատասխանեցված գինը մաքսային մարմնի կողմից ԱՀ-ի գրանցման ամսաթվի դրությամբ.

E_{iv}-ն արժույթների փոխարժեքով նշված այն արժույթի միավորների քանակն է, որով հաշվարկված է ապրանքի համապատասխանեցված արժեքը.

K_{\$}-ն մաքսային մարմնի կողմից ԱՀ-ի գրանցման ամսաթվի դրությամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքն է:

Այսպես, օրինակ՝ 120 000 000 ճապոնական իեն կազմող ապրանքի համապատասխանեցված արժեքի վերահաշվարկն ԱՄՆ դոլարի կատարվում է հետևյալ կերպ.

$C_{\$} = (120\ 000\ 000 \times 32,0049) / (100 \times 31,6144) = 1\ 214\ 822,36$ ԱՄՆ դոլարի,
որտեղ՝

C_{IV}՝ 120 000 000 ճապոնական իեն.

K_{iv}՝ 32,0049 ռուսական ռուբլի.

E_{iv}՝ 100 ճապոնական իեն.

K_{\$}՝ 31,6144 ռուսական ռուբլի:

Վանդակում նշված տեղեկություններն օգտագործվում են արտաքին առևտրի մաքսային վիճակագրության վարման նպատակով:

(16-րդ ենթակետը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշման խմբագրությամբ)

17) 47-րդ վանդակ: «Վճարների հաշվարկում»

47. Վճարների հաշվարկում	Տեսակ	Հաշվերգրման հիմք	Դրույքաչափ	Գումար	Վճարման եղանակ
Ընդամենը.					

Բելառուսի Հանրապետությունում արտահանման մաքսատուրքի հաշվարկման ժամանակ, որի հաշվարկումը եւ վճարումը կատարվում է ԱՄՆ դոլարով, «Գումար» սյունակում արտահանման մաքսատուրքի արժեքը կլորացվում է մաթեմատիկական կանոններով՝ ստորակետից հետո մինչեւ երկու նիշ ճշգրտությամբ:

Այլ տեղեկություններ մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 47-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում վանդակը լրացվում է Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 47-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

Պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում.

18) «B» վանդակ. «Հաշվարկի մանրամասներ»

B. ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Բելառուսի Հանրապետությունում վճարված արտահանման մաքսատուրքի գումարների վերաբերյալ տեղեկությունները, որի հաշվարկումը եւ վճարումը

կատարվում է ԱՄՆ դոլարով, «B» վանդակում կլորացվում են մաթեմատիկական կանոններով՝ ստորակետից հետո մինչեւ երկու նիշ ճշգրտությամբ:

Այլ տեղեկություններ մուտքագրվում են «B» վանդակ սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի «B» վանդակի լրացման համար սահմանված կարգով:

Ղազախստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում վանդակը լրացվում է Հրահանգի II բաժնի ԱՀ-ի «B» վանդակի լրացման համար սահմանված կարգով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ)

IV. ԱՀ-ի լրացումն ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով Միության ապրանքները հայտարարագրելիս (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

19. ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով Միության ապրանքները հայտարարագրելիս հայտարարատուի կողմից լրացվում են ԱՀ-ի հետեւյալ վանդակները. 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ (Բելառուսի Հանրապետության համար), 12-րդ, 14-րդ, 15-րդ, 15 (a, b), 19-րդ (Ղազախստանի Հանրապետության համար), 22-րդ, 23-րդ, 24-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, «B», 54-րդ.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

20. 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 11-րդ (Բելառուսի Հանրապետության համար), 12-րդ, 14-րդ, 15 (a, b), 19-րդ (Ղազախստանի Հանրապետության

համար), 22-րդ, 23-րդ, 24-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ (Բելառուսի Հանրապետության համար), 43-րդ, 44-րդ, 45-րդ, 47-րդ, «B», 54-րդ վանդակները լրացվում են սույն Հրահանգի II բաժնով նախատեսված՝ ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան:

Բելառուսի Հանրապետությունում 12-րդ, 43-րդ եւ 45-րդ վանդակները չեն լրացվում:

21. ԱՀ-ի 1-ին, 2-րդ, 9-րդ, 15-րդ, 42-րդ (Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար), 46-րդ վանդակները հայտարարատուի կողմից լրացվում են հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները.

1) 1-ին վանդակ: «Հայտարարագիր»

Վանդակի առաջին ենթաբաժնում կատարվում է հետեւյալ գրառումը. «ՅԿ»:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է մաքսային ընթացակարգի երկնիշ թվային ծածկագիրը՝ մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգչին համապատասխան,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

2) 2-րդ վանդակ: «Ուղարկող/Արտահանող»

ԱՄԳ մաքսային ընթացակարգով Միության ապրանքները հայտարարագրելիս վանդակում նշվում են տեղեկություններ այն անձի մասին, ով կնքել է ԱՏԳ (ԱՀՏԳ) ռեզիդենտի (մասնակցի) հետ գործարք, համաձայն որի Միության ապրանքները ներմուծվում են (ներմուծվել են) ԱՏԳ (ԱՀՏԳ) տարածք հայտարարատուի մոտ առկա առետրային փաստաթղթերին համապատասխան, նման գործարքի բացակայության դեպքում՝ տեղեկություններ ԱՏԳ (ԱՀՏԳ) ռեզիդենտի (մասնակցի) վերաբերյալ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով Միության ապրանքները հայտարարագրելիս վանդակում նշվում են տեղեկություններ այն անձի մասին, որը կնքել է գործարք ազատ պահեստի տիրապետողի հետ, որի համաձայն Միության ապրանքները ներմուծվում են (ներմուծվել են) ազատ պահեստի տարածք՝ հայտարարատուի մոտ առկա առետրային փաստաթղթերին համապատասխան, իսկ նման գործարքի բացակայության դեպքում՝ տեղեկություններ ազատ պահեստի տիրապետողի վերաբերյալ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Նշված անձանց վերաբերյալ տեղեկությունները մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի III բաժնի ԱՀ-ի 2-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով,

3) 9-րդ վանդակ: «Ֆինանսական կարգավորման համար պատասխանատու անձ»

ԱՄԳ մաքսային ընթացակարգով Միության ապրանքները հայտարարագրելիս վանդակում նշվում են տեղեկություններ ԱՏԳ (ԱՀՏԳ) ռեզիդենտի (մասնակցի) մասին:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով Միության ապրանքները հայտարարագրելիս վանդակում նշվում են տեղեկություններ ազատ պահեստի տիրապետողի մասին:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Նշված անձանց վերաբերյալ տեղեկությունները մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 9-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով,

4) 15-րդ վանդակ: «Ուղարկող երկիր»:

ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով Միության ապրանքները հայտարարագրելիս վանդակում նշվում է Միության ապրանքների ուղարկման այն երկրի կրճատ անվանումը (Բելառուսի Հանրապետություն, Ղազախստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն)՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, որի տարածքից Միության ապրանքները ներմուծվում են (ներմուծվել են) ԱՏԳ (ԱՀՏԳ) կամ ազատ պահեստի տարածքներ համապատասխանաբար,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

5) 42-րդ վանդակ: «Ապրանքի գին»

Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում վանդակը լրացվում է, եթե Միության ապրանքները ներմուծվում են (ներմուծվել են) ԱՏԳ (ԱՀՏԳ) կամ ազատ պահեստի տարածքներ ԱՏԳ (ԱՀՏԳ) ռեզիդենտի (մասնակցի) կամ ազատ պահեստի տիրապետողի եւ այլ անձի միջեւ կնքված գործարքի հիման վրա:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Ռուսաստանի Դաշնությունում՝ Միության ապրանքները ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով հայտարարագրելիս վանդակը լրացվում է, եթե Միության ապրանքները ներմուծվում են (ներմուծվել են) ԱՏԳ (ԱՀՏԳ) կամ ազատ պահեստի տարածք ԱՏԳ (ԱՀՏԳ) ռեզիդենտի (մասնակցի) կամ ազատ

պահեստի տիրապետողի եւ Միության այլ անդամ պետության անձի միջեւ կնքված գործարքի հիման վրա:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Տեղեկությունները մուտքագրվում են վանդակ Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 42-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով,

6) 46-րդ վանդակ: «Վիճակագրական արժեք»

Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում վանդակը լրացվում է, եթե Միության ապրանքները ներմուծվում են (ներմուծվել են) ԱՏԳ (ԱՀՏԳ) կամ ազատ պահեստի տարածքներ ԱՏԳ (ԱՀՏԳ) ռեգիոնների (մասնակցի) կամ ազատ պահեստի տիրապետողի եւ Միության այլ անդամ պետության անձի միջեւ կնքված գործարքի հիման վրա:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Վիճակագրական արժեքի հաշվարկի ժամանակ, Բելառուսի Հանրապետության համար՝ ԱՀ-ի 42-րդ վանդակում նշված Միության ապրանքի գնի, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար՝ չի իրականացվում ԱՀ-ի 45-րդ վանդակում նշված Միության ապրանքների մաքսային արժեքի համապատասխանեցում FOB եւ DAP մատակարարման բազիսային պայմանին:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Տեղեկությունները մուտքագրվում են վանդակ Հրահանգի III բաժնի ԱՀ-ի 46-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով:

**V. Ապրանքների առանձին կատեգորիաների համար
ԱՀ-ի լրացման առանձնահատկությունները «վերաներմուծում»
կամ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային
ընթացակարգերում ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային
ընթացակարգերի գործողությունն ավարտվելու դեպքում**

22. Հայտարարատուի կողմից լրացվում են ԱՀ-ի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ (Բելառուսի Հանրապետության համար), 12-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 17 (a, b), 19-րդ (Ղազախստանի Հանրապետության համար), 22-րդ, 23-րդ, 24-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, «B», 52-րդ, 54-րդ վանդակները հետևյալ ապրանքները հետևյալ մաքսային ընթացակարգերով հայտարարագրելիս.

1) «վերաներմուծում»՝

ապրանքներ, որոնք արտադրվել (ստացվել) են ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ, եթե այդպիսի ապրանքների համար տրված է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 437 որոշման 1-ին կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված եզրակացությունը,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

ապրանքներ, որոնք արտադրվել (ստացվել) են ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված բացառապես Միության ապրանքներից, կամ ապրանքները, որոնք արտադրվել (ստացվել) են ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված բացառապես Միության ապրանքներից՝ օգտագործելով համապատասխանաբար ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով չձեւակերպված Միության ապրանքները,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

2) «ներքին սպառման համար բացթողում»՝

ապրանքներ, որոնք արտադրվել (ստացվել) են ԱՄԳ մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ, եթե նման ապրանքների նկատմամբ իրականացվել է նույնականացում «Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի վերաբերյալ» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի (այսուհետ՝ «ԱՏԳ մասին» համաձայնագիր) 20-րդ հոդվածին համապատասխան,

ապրանքներ, որոնք արտադրվել (ստացվել) են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ, եթե նման ապրանքների նկատմամբ իրականացվել է նույնականացում «Ազատ պահեստների եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի 17-րդ հոդվածին համապատասխան (այսուհետ՝ «Ազատ պահեստների մասին» համաձայնագիր),

ապրանքներ, որոնք արտադրվել (ստացվել) են ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ, եթե նման ապրանքների նկատմամբ բացակայում է «ԱՏԳ մասին» համաձայնագրի 20-րդ հոդվածի կամ «Ազատ պահեստների մասին» համաձայնագրի 17-րդ հոդվածին համապատասխան իրականացված նույնականացումը,

ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ, եթե նման ապրանքները չեն ենթարկվել «ԱՏԳ մասին» համաձայնագրի 13-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով կամ «Ազատ պահեստների մասին» համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված գործառնությունների:

23. ԱՀ-ի 16-րդ եւ 34-րդ վանդակները լրացվում են միայն ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների հայտարարագրման դեպքում, եթե նման ապրանքները չեն ենթարկվել «ԱՄԳ մասին» համաձայնագրի 13-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով կամ «Ազատ պահեստների մասին» համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված գործառնությունների «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգում:

24. 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 11-րդ (Բելառուսի Հանրապետության համար), 12-րդ, 14-րդ, 16-րդ, 17 (a, b), 19-րդ (Ղազախստանի Հանրապետության համար), 22-րդ, 23-րդ, 24-րդ, 30-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 45-րդ, «B», 52-րդ, 54-րդ վանդակները լրացվում են սույն Հրահանգի II բաժնով նախատեսված՝ ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան:

25. ԱՀ-ի 9-րդ, 17-րդ, 31-րդ, 40-րդ, 44-րդ, 46-րդ, 47-րդ վանդակները հայտարարատուի կողմից լրացվում են հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները.

1) 9-րդ վանդակ: «Ֆինանսական կարգավորման համար պատասխանատու անձ»

Վանդակում նշվում են տեղեկություններ ԱՄԳ (ԱՀՏԳ) ռեզիդենտի (մասնակցի) կամ իրավաբանական այն անձի վերաբերյալ, որի պետական գրանցումն իրականացվել է Կալինինգրադի մարզում (Ռուսաստանի Դաշնություն), կամ ազատ պահեստի տիրապետողի վերաբերյալ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշման խմբագրությամբ)

Տեղեկությունները մուտքագրվում են վանդակ Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 9-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով,

2) 17-րդ վանդակ: «Նշանակման երկիր»

Վանդակում նշվում է ապրանքների նշանակման երկրի կրճատ անվանումը (Բելառուսի հանրապետություն, Ղազախստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն)՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, որի տարածք ապրանքները ներմուծվում են (ներմուծվել են) ԱՏԳ (ԱՀՏԳ) կամ ազատ պահեստի տարածքից՝ կնքված գործարքի շրջանակներում.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

3) 31-րդ վանդակ: «Բեռնատեղիներ եւ ապրանքների նկարագրություն»

Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում 11-րդ համարի վանդակում լրացուցիչ նոր տողից նշվում են տեղեկություններ հետեւյալի մասին.

ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ հայտարարագրվող ապրանքի արտադրման ժամանակ օգտագործված Միության ապրանքներ (հումք, նյութեր, համալրող (կոմպլեկտավորող) եւ պահեստամասեր եւ այլն)՝ նշելով դրանց անվանումը (առետրային, կոմերցիոն կամ այլ ավանդական անվանում), ապրանքների բնութագրերը եւ պարամետրերը (քանակությունը եւ չափման միավորները), եթե նման տեղեկություններն անհրաժեշտ են վերաներմուծման ժամանակ Միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան վճարման ենթակա վճարների հաշվարկման համար.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված եւ հայտարարագրվող ապրանքի արտադրման ժամանակ օգտագործված օտարերկրյա ապրանքներ (հումք, նյութեր, համալրող (կոմպլեկտավորող) եւ պահեստամասեր եւ այլն)՝ նշելով դրանց անվանումը (առետրային, կոմերցիոն

կամ այլ ավանդական անվանում), ապրանքների բնութագրերը եւ պարամետրերը (քանակությունը եւ չափման միավորները), որոնք անհրաժեշտ են հայտարարագրվող ապրանքի ներքին սպառման համար բացթողման ժամանակ մաքսատուրքերի եւ հարկերի հաշվարկման համար, եթե նման ապրանքների նկատմամբ իրականացվել է նույնականացում՝ «ԱՏԳ մասին» համաձայնագրի 20-րդ հոդվածին կամ «Ազատ պահեստների մասին» համաձայնագրի 17-րդ հոդվածին համապատասխան:

Սույն Հրահանգի 22-րդ կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերում նշված ապրանքների մասով վանդակի 11-րդ համարի տողը չի լրացվում.

4) 40-րդ վանդակ: «Ընդհանուր հայտարարագիր/նախորդող փաստաթուղթ»

Հետեւյալ ապրանքների համար.

ապրանքներ, որոնք արտադրվել (ստացվել) են ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ, եթե նման ապրանքների նկատմամբ իրականացվել է նույնականացում՝ «ԱՏԳ մասին» համաձայնագրի 20-րդ հոդվածին եւ «Ազատ պահեստների մասին» համաձայնագրի 17-րդ հոդվածին համապատասխան.

ապրանքներ, որոնք արտադրվել (ստացվել) են ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված բացառապես Միության ապրանքներից, կամ ապրանքներ, որոնք արտադրվել (ստացվել) են ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված բացառապես Միության ապրանքներից՝ օգտագործելով համապատասխանաբար ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով չձեւակերպված Միության ապրանքները, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում վանդակում նշվում են.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

ԱՀ-ի գրանցման համարները, որոնց համապատասխան հայտարարագրվող ապրանքի արտադրման ժամանակ օգտագործված, ինչպես նաև ԱՀ-ի 31-րդ վանդակում 11-րդ համարի տակ նշված ապրանքները Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում ձեւակերպվել են ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով՝ նշելով «/» բաժանիչ նշանից հետո ԱՀ-ի 32-րդ վանդակի առաջին ենթաբաժնից ապրանքի հերթական համարը, որին համապատասխան ապրանքը ձեւակերպվել է ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով, այնուհետեւ, «/» բաժանիչ նշանից հետո նշվում է.

նախորդող ԱՀ-ի 33-րդ վանդակում նշված՝ ապրանքի դասակարգման ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան (Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար).

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի ապրիլի 24-ի թիվ 35 որոշմամբ)

ապրանքի մաքսային արժեքը, որը նշված է նախորդող ԱՀ-ի 45-րդ վանդակում.

ապրանքի զուտ զանգվածը, որը նշված է նախորդող ԱՀ-ի 38-րդ վանդակում.

հայտարարագրվող ապրանքի արտադրման ժամանակ օգտագործված ապրանքի զուտ զանգվածը.

հայտարարագրվող ապրանքի արտադրման ժամանակ օգտագործված ապրանքի քանակությունը՝ արտահայտված ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ում կիրառվող լրացուցիչ չափման միավորով, «/» բաժանիչ նշանից հետո՝ լրացուցիչ չափման միավորի ծածկագիրը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Սույն Հրահանգի 22-րդ կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերում նշված ապրանքների մասով վանդակը լրացվում է Հրահանգի II բաժնով սահմանված կարգով.

Վանդակը չի լրացվում՝

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի հունիսի 20-ի թիվ 68 որոշման խմբագրությամբ)

Հայաստանի Հանրապետությունում, Բելառուսի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում այն ապրանքները հայտարարագրելիս, որոնք արտադրվել (ստացվել) են ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ, եթե նման ապրանքների նկատմամբ բացակայում է «ԱՏԳ մասին» համաձայնագրի 20-րդ հոդվածին եւ «Ազատ պահեստների մասին» համաձայնագրի 17-րդ հոդվածին համապատասխան իրականացված նույնականացումը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի հունիսի 20-ի թիվ 68 որոշման խմբագրությամբ)

Ռուսաստանի Դաշնությունում այն ապրանքները հայտարարագրելիս, որոնք արտադրվել (ստացվել) են ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ, որոնց մասով տրված է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 437 որոշման 1-ին կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված եզրակացությունը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2017 թվականի հունիսի 20-ի թիվ 68 որոշումների խմբագրությամբ)

5) 44-րդ վանդակ. «Լրացուցիչ տեղեկատվություն/Ներկայացված փաստաթղթեր»

ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ արտադրված (ստացված) ապրանքներում ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների նույնականացումն իրականացնելիս, վանդակում «08999» ծածկագրով լրացուցիչ կերպով նշվում են նույնականացման իրականացումը հաստատող փաստաթղթի վերաբերյալ տեղեկություններ, (առկայության դեպքում), իսկ Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար՝ նաեւ տեղեկություններ (հաշվարկման, մասնագրման) այն փաստաթղթի վերաբերյալ, որով հաստատվում է հայտարարագրվող ապրանքի արտադրման համար օգտագործված հումքային ապրանքների (բաղադրիչների) (օտարերկրյա ապրանքների, Միության ապրանքների) քանակությունը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի ապրիլի 24-ի թիվ 35 որոշման խմբագրությամբ)

Ռուսաստանի Դաշնությունում ԱՄԳ մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ արտադրված (ստացված) ապրանքները «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով հայտարարագրման դեպքում, վանդակում լրացուցիչ կերպով նշվում են հայտարարատուի կողմից 2006 թվականի ապրիլի 1-ի դրությամբ «Կալինինգրադի մարզում առանձնահատուկ տնտեսական գոտու մասին» 1996 թվականի հունվարի 22-ի թիվ 13-ՖՁ դաշնային օրենքի հիման վրա գործունեության իրականացումը հավաստող փաստաթղթի համարը եւ ամսաթիվը, եթե որպես ապրանքների հայտարարատու հանդես է գալիս Կալինինգրադի մարզում պետական գրանցում իրականացրած անձը, որը Կալինինգրադի մարզի Հատուկ տնտեսական գոտու ռեզիդենտ չէ:

Տեղեկությունները մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 44-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

6) 46-րդ վանդակ: «Վիճակագրական արժեք»

Վիճակագրական արժեքի հաշվարկի ժամանակ ԱՀ-ի 45-րդ վանդակում նշված ապրանքների վիճակագրական արժեքի համապատասխանեցում CIF կամ CIP մատակարարման բազիսային պայմանին չի իրականացվում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշման խմբագրությամբ)

Տեղեկությունները մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 46-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

7) 47-րդ վանդակ: «Վճարների հաշվարկում»

Ռուսաստանի Դաշնությունում վանդակում առանձին տողերով նշվում են վերաներմուծման ժամանակ վճարման ենթակա այլ վճարների հաշվարկման մասին տեղեկություններ՝ ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված եւ հայտարարագրվող ապրանքի արտադրման ժամանակ օգտագործված Միության ապրանքների մասով, որոնց վերաբերյալ տեղեկությունները նշված են ԱՀ-ի 31-րդ վանդակում 11-րդ համարի տակ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Ընդ որում, «Տեսակ» սյունակում վճարման ծածկագրից հետո «/» նշանից հետո նշվում է ԱՀ-ի 40-րդ վանդակի այն տողի հերթական համարը, որում նշված են նախորդող ԱՀ-ի գրանցման համարը եւ նախորդող ԱՀ-ում ապրանքի հերթական համարը, որի մասով վերաներմուծման ժամանակ հաշվարկվում է վճարը:

**VI. Ապրանքների առանձին կատեգորիաների համար
ԱՀ-ի լրացման առանձնահատկությունները «վերաարտահանում»
կամ «արտահանում» մաքսային ընթացակարգերում ԱՄԳ եւ
«ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերի
գործողությունն ավարտվելու դեպքում**

26. Հայտարարատուի կողմից լրացվում են ԱՀ-ի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 15 (a, b), 16-րդ, 17-րդ, 17 (a, b), 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, «B», 48-րդ, 54-րդ վանդակները՝ հետեւյալ ապրանքները հետեւյալ մաքսային ընթացակարգերով հայտարարագրելիս.

1) «վերաարտահանում»՝

ապրանքներ, որոնք արտադրվել (ստացվել) են ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ, եթե նման ապրանքների համար տրված է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 437 որոշման 1-ին կետի երրորդ պարբերությամբ նախատեսված եզրակացությունը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներ, եթե նման ապրանքներն արտահանվում են մաքսային տարածքի սահմաններից դուրս անփոփոխ վիճակում.

2) «արտահանում».

ապրանքներ, որոնք արտադրվել (ստացվել) են ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ, եթե նման ապրանքների համար տրված է Մաքսային միության

հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 437 որոշման 1-ին կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված եզրակացությունը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված Միության ապրանքներ կամ ապրանքներ, որոնք արտադրվել (ստացվել) են Միության ապրանքներից, այդ թվում՝ ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով չձեւակերպված Միության ապրանքներից:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

27. ԱՀ-ի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 15 (a, b), 16-րդ, 17-րդ, 17 (a, b), 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, «B», 48-րդ, 54-րդ վանդակները լրացվում են սույն Հրահանգի III բաժնով նախատեսված ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան:

ԱՀ-ի 40-րդ վանդակը լրացվում է սույն Հրահանգի II բաժնով նախատեսված ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան:

28. ԱՀ-ի 9-րդ եւ 40-րդ վանդակները լրացվում են հայտարարատուի կողմից՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները.

1) 9-րդ վանդակ: «Ֆինանսական կարգավորման համար պատասխանատու անձ»

Վանդակում նշվում են ԱՏԳ (ԱՀՏԳ) ռեզիդենտի (մասնակցի) կամ ազատ պահեստի տիրապետողի մասին տեղեկություններ:

Տեղեկությունները մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 9-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

2) 40-րդ վանդակ: «Ընդհանուր հայտարարագիր/նախորդող փաստաթուղթ»

Ռուսաստանի Դաշնությունում վանդակը չի լրացվում հետեւյալ ապրանքները հետեւյալ մաքսային ընթացակարգերով հայտարարագրելիս.

«արտահանում»՝ այն ապրանքների համար, որոնք արտադրվել (ստացվել) են ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ, եթե նման ապրանքների համար տրված է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 437 որոշման 1-ին կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված եզրակացությունը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

«վերաարտահանում».

այն ապրանքների համար, որոնք արտադրվել (ստացվել) են ԱՄԳ կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ, եթե նման ապրանքների համար տրված է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 437 որոշման 1-ին կետի երրորդ պարբերությամբ նախատեսված եզրակացությունը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

նավահանգստային ԱՏԳ (ԱՀՏԳ) տեղադրված օտարերկրյա ապրանքների համար, որոնք ձեւակերպվել են ԱՄԳ մաքսային ընթացակարգով առանց հայտարարագրման:

VI.1. Էլետրահաղորդման գծերով եւ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների հայտարարագրման ժամանակ ԱՀ-ի լրացման առանձնահատկությունները (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշմամբ)

28.1. Էլետրահաղորդման գծերով եւ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքները հայտարարագրելիս հայտարարատուի կողմից լրացվում են ԱՀ-ի հետեւյալ վանդակները՝

1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 15a, 16-րդ, 17-րդ, 17-րդ (a, b), 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, «B», 48-րդ, 52-րդ (Բելառուսի Հանրապետությունում), 54-րդ:

Բելառուսի Հանրապետությունում ԱՀ-ի 18-րդ, 21-րդ (ներմուծման ժամանակ) եւ 26-րդ վանդակները չեն լրացվում:

Ղազախստանի Հանրապետության տարածքից խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող բնական գազի հայտարարագրման դեպքում, ԱՀ-ի 12-րդ, 43-րդ եւ 45-րդ վանդակները չեն լրացվում, եթե նման բնական գազի նկատմամբ սահմանված չեն դրա մաքսային արժեքից էլնելով հաշվարկվող մաքսատուրքեր, հարկեր:

Բելառուսի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության տարածքից արտահանվող ապրանքները հայտարարագրելիս ԱՀ-ի 12-րդ, 43-րդ եւ 45-րդ վանդակները չեն լրացվում, եթե նման ապրանքների նկատմամբ սահմանված չեն դրանց մաքսային արժեքի հիման վրա հաշվարկվող մաքսատուրքեր եւ հարկեր:

28.2. ԱՀ-ի 1-ին վանդակը լրացվում է սույն Հրահանգի II բաժնով նախատեսված ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան՝ մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքները հայտարարագրելիս, կամ սույն Հրահանգի III բաժնով նախատեսված ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան՝

նման տարածքից արտահանվող ապրանքները հայտարարագրելիս:

28.3. ԱՀ-ի 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ (ներմուծման դեպքում), 11-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ (ներմուծման դեպքում), 15a (ներմուծման դեպքում), 16-րդ, 17-րդ (ներմուծման դեպքում), 17 (a, b) (ներմուծման դեպքում), 19-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 36-րդ, 37-րդ, 39-րդ, 40-րդ (ներմուծման դեպքում), 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ (ներմուծման դեպքում), «B» (ներմուծման դեպքում), 48-րդ, 52-րդ, 54-րդ վանդակները լրացվում են սույն Հրահանգի II բաժնով նախատեսված ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան:

28.4. 9-րդ (արտահանման դեպքում), 15-րդ (արտահանման դեպքում), 15a (արտահանման դեպքում), 17-րդ (արտահանման դեպքում), 17 (a, b) (արտահանման դեպքում), 40-րդ (արտահանման դեպքում), 46-րդ (արտահանման դեպքում), «B» (արտահանման դեպքում) վանդակները լրացվում են սույն Հրահանգի III բաժնով նախատեսված ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան:

28.5. ԱՀ-ի 2-րդ, 6-րդ, 8-րդ, 18-րդ, 20-րդ, 21-րդ, 31-րդ, 35-րդ, 38-րդ, 47-րդ վանդակները հայտարարատուի կողմից լրացվում են հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները.

1) 2-րդ վանդակ: «Ուղարկող/Արտահանող»

Մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքները հայտարարագրելիս վանդակում նշվում են տեղեկություններ ապրանքների մատակարարման պարտավորությունը ստանձնած անձի վերաբերյալ՝ սույն Հրահանգի II բաժնով ԱՀ-ի 2-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով:

Մաքսային տարածքից արտահանվող ապրանքները հայտարարագրելիս վանդակում նշվում են տեղեկություններ այն անձի մասին, որն արտաքին տնտեսական գործարքի կատարման ժամանակ կնքված պայմանագրի պայմաններին համապատասխան ստանձնում է ապրանքները մատակարարելու

(արտահանելու) պարտավորություն, կամ այն անձի վերաբերյալ, որը կնքել է պայմանագիր տրանսպորտային կազմակերպության հետ ապրանքների փոխադրման մասով ծառայությունների մատուցման վերաբերյալ՝ սույն Հրահանգի III բաժնով ԱՀ-ի 2-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով:

2) 6-րդ վանդակ. «Ընդամենը տեղեր»

Վանդակում նշվում է զրո թիվը՝ «0».

3) 8-րդ վանդակ. «Ստացող»

Ռուսաստանի Դաշնության տարածքից արտահանվող ապրանքները հայտարարագրելիս նշվում են տեղեկություններ այն անձի վերաբերյալ, որն արտաքին տնտեսական գործարքի կատարման ժամանակ կնքված պայմանագրի պայմաններին կամ ապրանքներն առանց արտաքին տնտեսական գործարք կատարելու արտահանման ժամանակ ներկայացրած այլ փաստաթղթին համապատասխան, պետք է ընդունի Ռուսաստանի Դաշնության տարածքից արտահանվող ապրանքները:

Նշված անձի վերաբերյալ տեղեկությունները մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի III բաժնով ԱՀ-ի 8-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով:

Այլ դեպքերում տեղեկությունները մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 8-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով՝ մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքները հայտարարագրելիս, կամ սույն Հրահանգի III բաժնի ԱՀ-ի 8-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով՝ նման տարածքից արտահանվող ապրանքները հայտարարագրելիս:

4) 18-րդ վանդակ. «Տրանսպորտային միջոցի նույնականացումը եւ գրանցման երկիրն ուղարկման/ժամանման պահին»

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է ապրանքների տրանսպորտային

փոխադրման եղանակը՝ «գազամուղ», «նավթամուղ», «նավթամթերքամուղ», «էլեկտրահաղորդման գծեր»:

Ղազախստանի Հանրապետությունում լրացուցիչ կերպով նշվում են օբյեկտների անվանումները, որոնցում տեղադրված են ապրանքների հաշվառքի սարքերը:

Վանդակի երկրորդ ենթաբաժինը չի լրացվում.

5) 20-րդ վանդակ. «Մատակարարման պայմաններ»

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում են մատակարարման պայմանների ծածկագիրը՝ մատակարարման պայմանների դասակարգչին համապատասխան, եւ ապրանքների փոխանցման վայրը՝ արտաքին տնտեսական գործարք կատարելիս կնքված պայմանագրի պայմաններին համապատասխան:

Օրինակ՝ «ՕՌՏ ԳԻՍ ԱԿԿՈԼ» կամ «ՕՌՏ Լիտվա-Բելառուս սահման», «ՕՌՏ ԳԻՍ Զարամագ» կամ «ՕՌՏ Ռուսաստան-Ուկրաինա սահման»:

Եթե ԱՀ-ում հայտարարագրվող ապրանքների մասով մատակարարման պայմանները (բազիսային պայմանները) տարբեր են կամ, եթե մատակարարման պայմանները (բազիսային պայմանները) վերաբերում են ԱՀ-ում հայտարարագրվող բոլոր ապրանքներին, բայց միեւնույն ժամանակ մատակարարումն իրականացվում է ապրանքների փոխանցման տարբեր վայրեր՝ արտաքին տնտեսական գործարք կատարելիս կնքված պայմանագրի պայմաններին համապատասխան, վանդակի երկրորդ ենթաբաժնում կատարվում է հետեւյալ գրառումը՝ «ՏԱՐԲԵՐ ԵՆ»:

Նշված տեղեկությունները, ինչպես նաև այլ տեղեկություններ մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 20-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով՝ մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքները հայտարարագրելիս, կամ սույն Հրահանգի III բաժնի ԱՀ-ի 20-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով՝ նման տարածքից արտահանվող ապրանքները հայտարարագրելիս.

6) 21-րդ վանդակ. «Ակտիվ տրանսպորտային միջոցի նույնականացումը եւ գրանցման երկիրը սահմանի վրա»

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է ապրանքների տրանսպորտային փոխադրման եղանակը՝ «գազամուղ», «նավթամուղ», «նավթամթերքամուղ», «էլեկտրահաղորդման գծեր»:

Ղազախստանի Հանրապետությունում լրացուցիչ կերպով նշվում են օբյեկտների անվանումները, որոնցում տեղադրված են ապրանքների հաշվառքի սարքերը՝ բացառությամբ Ռուսաստանի Դաշնության եւ Բելառուսի Հանրապետության տարածքներով բնական գազի արտահանման դեպքերի:

Վանդակի երկրորդ ենթաբաժինը չի լրացվում.

7) 31-րդ վանդակ. «Բեռնատեղիներ եւ ապրանքների նկարագրություն»

Նավթ, նավթամթերքներ եւ բնական գազ հայտարարագրելիս 1-ին համարի տակ նշվում են հանքավայրի վերաբերյալ տեղեկություններ, որտեղ դրանք արդյունահանվել են, եթե այդ տեղեկություններն ազդում են դասակարգման ծածկագիրն ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի որոշելու վրա:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

2-րդ համարի տակ տեղեկություններ չեն նշվում:

5-րդ համարի տակ ապրանքի մատակարարման պայմանի ծածկագրից հետո նշվում է ապրանքների փոխանցման վայրը (վայրերը)՝ արտաքին տնտեսական գործարք կատարելիս կնքված պայմանագրի պայմաններին համապատասխան:

Բելառուսի Հանրապետությունում 7-րդ համարի տակ տեղեկությունները մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 31-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով:

Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում 8-րդ համարի տակ նշվում են տեղեկություններ մատակարարման պայմաններին համապատասխան գնորդին փաստացի փոխանցված նավթի եւ նավթամթերքների քանակության վերաբերյալ:

9-րդ համարի տակ նշվում են տեղեկություններ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ընդունված եւ հաղորդված էլեկտրաէներգիայի քանակության վերաբերյալ հետեւյալ գրառման տեսքով՝ «Ընդունվել է _____ հազ.կՎտ.ժ, հաղորդվել է _____ հազ.կՎտ.ժ»՝ այն դեպքում, երբ էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում է որպես սալդո-փոխհոսք:

Այլ տեղեկություններ մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 31-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

8) 35-րդ վանդակ. «Համաքաշ (կգ)»

Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքները հայտարարագրելիս նշվում է ապրանքների ընդհանուր զանգվածը:

Վանդակը չի լրացվում էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքները կամ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող բնական գազը հայտարարագրելիս:

Տեղեկությունները մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 35-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

9) 38-րդ վանդակ. «Ձտաքաշ (կգ)»

Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքները հայտարարագրելիս նշվում է ԱՀ-ի 35-րդ վանդակում նշված ապրանքների ընդհանուր զանգվածը:

Վանդակը չի լրացվում էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքները կամ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող բնական գազը հայտարարագրելիս:

Տեղեկությունները մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 38-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

10) 47-րդ վանդակ. «Վճարների հաշվարկում»

Ռուսաստանի Դաշնությունում խողովակաշարային տրանսպորտով արտահանվող ապրանքների ժամանակավոր պարբերական հայտարարագրման դեպքում, ամբողջական ԱՀ-ում արտահանման մաքսատուրքերի գումարների հաշվարկման ժամանակ կիրառվում է մաքսային մարմնի կողմից ժամանակավոր ԱՀ-ի, որի գրանցման համարը նշվում է ամբողջական ԱՀ-ի 40-րդ վանդակում, գրանցման օրվա դրությամբ գործող արժույթների փոխարժեքը:

Այլ դեպքերում տեղեկությունները մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 47-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով՝ մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքները հայտարարագրելիս, կամ սույն Հրահանգի III բաժնի ԱՀ-ի 47-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով՝ նման տարածքից արտահանվող ապրանքները հայտարարագրելիս:

VII. ԱՀ-ի լրացման առանձնահատկությունները էլետրահաղորդման գծերով եւ խողովակաշարային տրանսպորտով մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան տեղափոխվող ապրանքների նկատմամբ որպես տարանցիկ հայտարարագիր այն օգտագործելիս

29. Էլետրահաղորդման գծերով եւ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքները հայտարարագրելիս հայտարարատուի կողմից լրացվում են ԱՀ-ի հետեւյալ վանդակները.

1-ին, 2-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 14-րդ, 15-րդ, 15a, 16-րդ, 17-րդ, 17 (a, b), 18-րդ, 21-րդ, 25-րդ, 26-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 37-րդ, 38-րդ, 40-րդ, 41-րդ, 44-րդ եւ 54-րդ:

30. Էլետրահաղորդման գծերով եւ խողովակաշարային տրանսպորտով ապրանքները տեղափոխվելիս.

ԱՀ-ի 2-րդ, 5-րդ, 7-րդ, 14-րդ, 15-րդ, 15a, 16-րդ, 18-րդ, 21-րդ, 25-րդ, 26-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 37-րդ, 38-րդ, 40-րդ, 41-րդ, 44-րդ, 54-րդ վանդակները լրացվում են սույն Հրահանգի II բաժնով նախատեսված՝ ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան:

ԱՀ-ի 17-րդ, 17 (a, b) վանդակները լրացվում են սույն Հրահանգի III բաժնով նախատեսված ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան:

31. ԱՀ-ի 1-ին, 8-րդ եւ 9-րդ վանդակները լրացվում են հայտարարատուի կողմից՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները.

1) 1-ին վանդակ. «Հայտարարագիր»

Վանդակի առաջին ենթաբաժնում կատարվում է հետեւյալ գրառումը՝ «IM»:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի երկնիշ թվային ծածկագիրը՝ մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգչին համապատասխան.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

2) 8-րդ վանդակ. «Ստացող»

Վանդակում նշվում են տեղեկություններ այն անձի վերաբերյալ, որը տրանսպորտային կազմակերպության հետ պայմանագրի պայմաններին համապատասխան հանդես է գալիս որպես ապրանքների ստացող:

Նշված անձի վերաբերյալ տեղեկությունները մուտքագրվում են սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 8-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով:

3) 9-րդ վանդակ. «Ֆինանսական կարգավորման համար պատասխանատու անձ»

Վանդակում նշվում են տեղեկություններ տրանսպորտային այն կազմակերպության մասին, որը կնքված պայմանագրի պայմաններին համապատասխան իրականացնում է (պատասխանատու է) մաքսային տարածքով հայտարարագրվող օտարերկրյա ապրանքների տրանսպորտային փոխադրման համար կամ Միության ապրանքների տրանսպորտային փոխադրման համար՝ արտահանման վայրից մինչև ներմուծման վայր Միության անդամ չհանդիսացող օտարերկրյա պետության տարածքով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Նշված անձի վերաբերյալ տեղեկությունները մուտքագրվում են սույն Հրահանգի II բաժնի ԱՀ-ի 9-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով:

VIII. ԱՀ-ի լրացման առանձնահատկությունները
Էլեկտրահաղորդման գծերով եւ խողովակաշարային
տրանսպորտով տեղափոխվող ապրանքների նկատմամբ որպես
տարանցիկ հայտարարագիր այն օգտագործելիս՝ արտահանման եւ
ներմուծման կետերի միջեւ, Միության անդամ չհանդիսացող
պետության տարածքով «մաքսային տարանցում» մաքսային
ընթացակարգին համապատասխան (Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ
38 որոշման խմբագրությամբ)

32. Էլեկտրահաղորդման գծերով եւ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքները հայտարարագրելիս հայտարարատուի կողմից լրացվում են ԱՀ-ի հետեւյալ վանդակները.

1-ին, 2-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 14-րդ, 15-րդ, 15a, 16-րդ, 17-րդ, 17 (a, b), 18-րդ, 21-րդ, 25-րդ, 26-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 37-րդ, 38-րդ, 40-րդ, 41-րդ, 44-րդ, 54-րդ:

33. Էլեկտրահաղորդման գծերով եւ խողովակաշարային տրանսպորտով ապրանքները տեղափոխվելիս, ԱՀ-ի հետեւյալ վանդակները.

5-րդ, 7-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 17 (a, b), 25-րդ, 26-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 37-րդ, 38-րդ, 40-րդ, 41-րդ, 44-րդ, 54-րդ՝ լրացվում են սույն Հրահանգի II բաժնով նախատեսված ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան.

2-րդ, 15-րդ, 15a, 18-րդ, 21-րդ՝ լրացվում են սույն Հրահանգի III բաժնով նախատեսված ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան.

8-րդ, 9-րդ՝ լրացվում են սույն Հրահանգի VII բաժնով նախատեսված ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան:

34. ԱՀ-ի 1-ին վանդակը լրացվում է հայտարարատուի կողմից՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները.

1-ին վանդակ. «Հայտարարագիր»

Վանդակի առաջին ենթաբաժնում կատարվում է «ՅԿ» գրառումը:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի երկնիշ թվային ծածկագիրը՝ մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

IX. ԱՀ-ի լրացման առանձնահատկությունները

Ռուսաստանի Դաշնությունում մի քանի արտաքին առևտրային պայմանագրերի համաձայն խողովակաշարային տրանսպորտով արտահանվող ապրանքների համար մեկ ժամանակավոր (լրացուցիչ ժամանակավոր) ԱՀ ներկայացնելու միջոցով ապրանքները հայտարարագրելիս

35. Ռուսաստանի Դաշնությունում մի քանի արտաքին առևտրային պայմանագրերով (այդ թվում՝ մատակարարման, գնագոյացման եւ վճարման տարբեր պայմաններով) սահմանված պարտավորությունների կատարման դիմաց, մեկ մաքսային ընթացակարգի պայմաններին համապատասխան խողովակաշարային տրանսպորտով միեւնույն անձի կողմից արտահանվող ապրանքների համար մեկ ժամանակավոր (լրացուցիչ ժամանակավոր) ԱՀ ներկայացնելու միջոցով ապրանքները հայտարարագրելիս, հայտարարատուի կողմից լրացվում են ԱՀ-ի հետեւյալ վանդակները՝

1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 15 (a, b), 16-րդ, 18-րդ, 19-րդ, 21-րդ, 25-րդ, 26-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, «B», 48-րդ, 54-րդ.

36. Մեկ ժամանակավոր ԱՀ-ում կարող են տեղեկություններ հայտագրվել մի քանի ապրանքային խմբաքանակներում պարունակվող ապրանքների մասին, որոնք տեղափոխվում են խողովակաշարային տրանսպորտով միեւնոյն անձի կողմից եւ ձեւակերպվում են միեւնոյն մաքսային ընթացակարգով:

Ընդ որում, մաքսային վճարների հաշվարկման համար օգտագործվում են արտաքին առետրային պայմանագրերի մասով լրացուցիչ տեղեկություններ:

Լրացուցիչ տեղեկությունները ներկայացվում են ցանկերի տեսքով, որոնցում յուրաքանչյուր արտաքին առետրային պայմանագրի մասով նշվում են հետեւյալ տեղեկությունները՝

- 1) ապրանքները ստացողի մասին.
- 2) հայտարարագրվող ապրանքների մասին՝ քանակը կիլոգրամներով եւ (կամ) չափման այլ միավորներով, պայմանական մաքսային արժեքը.
- 3) արտաքին տնտեսական գործարքի եւ դրա հիմնական պայմանների մասին՝ արտաքին առետրային պայմանագրի համարը եւ ամսաթիվը, մատակարարման պայմանները՝ արժութային կարգավորման եւ արժութային հսկողության մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, գործարքի անձնագրի (ներմուծման գործարքի անձնագրի, բարտերային գործարքի անձնագրի) համարը եւ ամսաթիվը:

Ցանկերը ժամանակավոր (լրացուցիչ ժամանակավոր) ԱՀ-ի անբաժանելի մասն են, կազմվում են A4 ձեւաչափով, որոնց վրա հայտարարատուն կատարում է հետեւյալ գրառումը՝ «Արտաքին առետրային պայմանագրերի մասով լրացուցիչ տեղեկություններ՝ թիվ _____ ժամանակավոր (լրացուցիչ ժամանակավոր) ԱՀ-ով մաքսային վճարների հաշվարկման համար (ցանկ)»:

Ցանկի օրինակների քանակը պետք է համապատասխանի ժամանակավոր (լրացուցիչ ժամանակավոր) ԱՀ-ի թերթերի (օրինակների) քանակին:

Ցանկում հայտագրված տեղեկությունները հավաստում է հայտարարատուն կամ մաքսային ներկայացուցիչը՝ սույն Հրահանգով սահմանված կարգով:

37. 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 15 (a, b), 18-րդ, 19-րդ, 21-րդ, 25-րդ, 26-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 43-րդ, 46-րդ, 47-րդ, «B», 48-րդ, 54-րդ վանդակները լրացվում են սույն Հրահանգի III բաժնով նախատեսված՝ ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան:

38. ԱՀ-ի 8-րդ, 11-րդ, 16-րդ, 34-րդ, 41-րդ, 44-րդ, 45-րդ վանդակները հայտարարատուի կողմից լրացվում են՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները՝

1) 8-րդ վանդակ. «Ստացող»

Եթե արտաքին առևտրային պայմանագրերում տեղեկություններ են պարունակվում ապրանքների մի քանի ստացողների վերաբերյալ, վանդակում կատարվում է հետեւյալ գրառումը՝ «ՏԱՐԲԵՐ՝ ԸՍՏ ՑԱՆԿԻ»:

Այլ դեպքերում վանդակը լրացվում է սույն Հրահանգի III բաժնով ԱՀ-ի 8-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

2) 11-րդ վանդակ. «Վաճառող երկիր»

Վանդակը չի լրացվում, եթե իրենց կողմից կատարված արտաքին տնտեսական գործարքների մասով որպես Միության անդամ պետության անձի կոնտրագենտներ հանդես եկող անձինք գրանցված են աշխարհի տարբեր երկրներում:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Այլ դեպքերում վանդակը լրացվում է սույն Հրահանգի II բաժնով ԱՀ-ի 11-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

3) 16-րդ վանդակ. «Ծագման երկիր»

Եթե մեկ ժամանակավոր (լրացուցիչ ժամանակավոր) ԱՀ-ում հայտարարագրվում է տարբեր երկրներից (միություններից կամ համայնքներից) ծագող ապրանք, վանդակում կատարվում է հետեւյալ գրառումը՝ «ՏԱՐԲԵՐ»:

Այլ դեպքերում ապրանքների ծագման երկրի վերաբերյալ տեղեկությունները վանդակ են մուտքագրվում սույն Հրահանգի II բաժնով ԱՀ-ի 16-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

4) 34-րդ վանդակ. «Ծագման երկրի ծածկագիր»

Վանդակը չի լրացվում, եթե հայտարարագրվող ապրանքների ծագման երկրները տարբեր են:

Այլ դեպքերում տեղեկությունները վանդակ են մուտքագրվում սույն Հրահանգի II բաժնով ԱՀ-ի 34-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

5) 41-րդ վանդակ. «Լրացուցիչ միավորներ»

Վանդակում առանց միջակայքերի նշվում է ցանկում լրացուցիչ չափման միավորով ներկայացրած յուրաքանչյուր արտաքին առեւտրային պայմանագրի մասով այն ապրանքի քանակությունների համապատասխան մեծությունների գումարային արժեքը, որի վերաբերյալ տեղեկությունները նշված են ԱՀ-ի 31-րդ վանդակում, եթե ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան, հայտարարագրվող ապրանքի նկատմամբ կիրառվում է լրացուցիչ չափման միավոր: Այնուհետեւ միջակայքից հետո նշվում է լրացուցիչ չափման միավորի ծածկագիրը՝ չափման միավորների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Ապրանքի քանակությունը լրացուցիչ չափման միավորով նշվում է ստորակետից հետո՝ մինչեւ երկու նիշ ճշտությամբ.

6) 44-րդ վանդակ. «Լրացուցիչ տեղեկատվություն/Ներկայացված փաստաթղթեր»

Վանդակում նշվում են՝

արտաքին տնտեսական գործարքի կատարումը հավաստող փաստաթղթի համարի եւ ամսաթվի փոխարեն՝ արտաքին առետրային պայմանագրերի ընդհանուր քանակը, որոնց համապատասխան տեղափոխվում են հայտարարագրվող ապրանքները, եւ կատարվում է գրառում՝ «ՑԱՆԿԻ ՀԱՄԱՁԱՅՆ».

Ռուսաստանի Դաշնության արժույթային օրենսդրության համապատասխան արժույթային վերահսկողության ոլորտում պահանջների պահպանումը հավաստող փաստաթղթի համարի փոխարեն՝ Ռուսաստանի Դաշնության արժույթային օրենսդրության համապատասխան արժույթային վերահսկողության ոլորտում պահանջների պահպանումը հավաստող փաստաթղթերի ընդհանուր քանակը, եւ կատարվում է գրառում՝ «ՑԱՆԿԻ ՀԱՄԱՁԱՅՆ»:

Եթե սույն վանդակում ներկայացման ենթակա այլ տեղեկություններ տարբեր են տարբեր արտաքին առետրային պայմանագրերի համար, այդ տեղեկությունների փոխարեն համապատասխան ծածկագրի ներքո կատարվում է «ՑԱՆԿԻ ՀԱՄԱՁԱՅՆ» գրառումը, իսկ համապատասխան տեղեկությունները ներկայացվում են ցանկում:

Այլ տեղեկություններ վանդակ են մուտքագրվում սույն Հրահանգի II բաժնով ԱՀ-ի 44-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

7) 45-րդ վանդակ. «Մաքսային արժեք»

Վանդակում թվային նիշերով նշվում է ցանկում հայտագրված յուրաքանչյուր արտաքին առետրային պայմանագրի մասով ապրանքի մաքսային արժեքի

համապատասխան մեծությունների գումարային արժեքը՝ արտահայտված Միության այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին ներկայացվում է ԱՀ-ն:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Մաքսային արժեքի ստացված մեծությունը կլորացվում է մաթեմատիկական կանոններով՝ ստորակետից հետո մինչեւ երկու նիշ ճշտությամբ:

X. ԱՀ-ի լրացման առանձնահատկությունները
Ղազախստանի Հանրապետությունում ապրանքների ցանկի
օգտագործմամբ ապրանքները հայտարարագրելիս

39. Ղազախստանի Հանրապետությունում մեկ ապրանքային խմբաքանակում ներառված, ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի մեկ դասակարգման ծածկագրի դասված, մեկ պետության կամ մեկ տնտեսական միության կամ համայնքի տարածքի ծագում ունեցող՝ տարբեր անվանումներով ապրանքների կամ այն ապրանքների, որոնց ծագման երկիրն անհայտ է, որոնց նկատմամբ կիրառվում են միատեսակ մաքսասակագնային կարգավորման եւ արգելքների ու սահմանափակումների պայմաններ, ինչպես նաեւ սույն Հրահանգի թիվ 1 հավելվածում նշված ապրանքների հայտարարագրման դեպքում հայտարարատուի կողմից ապրանքների ցանկի օգտագործմամբ լրացվում են ԱՀ-ի հետեւյալ վանդակները.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 15 (a, b), 16-րդ, 17-րդ, 17 (a, b), 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ,

25-րդ, 26-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, «B», 48-րդ, 54-րդ:

Մեկ ԱՀ-ում կարող են հայտարարագրվել տարբեր անվանումներով, մեկ ապրանքային խմբաքանակում ներառված ապրանքներ՝ օգտագործելով երկու եւ ավելի ապրանքների ցանկեր, որոնցից յուրաքանչյուրը ձեւակերպվում է երեք օրինակով:

Պարբերությունը հանվել է: -Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշում:

Ապրանքների ցանկում պետք է տեղեկություններ ներառվեն ապրանքների բոլոր անվանումների (ապրանքային նշանների, մակնիշների, մոդելների, ապրանքատեսակների (արտիկուլներ), տեսակների, ստանդարտների եւ այլ բնութագրերի) վերաբերյալ եւ տեղեկություններ յուրաքանչյուր ապրանքի քանակի (հիմնական եւ լրացուցիչ չափման միավորներով), յուրաքանչյուր ապրանքի արժեքի, քաշի եւ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման ծածկագրի վերաբերյալ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

Ապրանքների ցանկում ապրանքի յուրաքանչյուր անվանման վերաբերյալ տեղեկությունները նշվում են նոր տողից՝ նշելով հերթական համարը:

Ապրանքների ցանկում հայտագրված տեղեկությունները հաստատվում են հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կողմից՝ սույն Հրահանգով սահմանված կարգով:

40. 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 15 (a, b), 16-րդ, 17-րդ, 17 (a, b), 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 29-րդ, 30-րդ, 34-րդ, 36-րդ, 37-րդ, 39-րդ, 40-րդ, 43-րդ, 44-րդ, 46-րդ, 47-րդ, «B», 48-րդ, 54-րդ վանդակները լրացվում են սույն Հրահանգի II բաժնով նախատեսված՝ ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան:

41. ԱՀ-ի 4-րդ, 5-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 35-րդ, 38-րդ, 41-րդ, 42-րդ, 45-րդ վանդակները հայտարարատուի կողմից լրացվում են հաշվի առնելով հետեյալ առանձնահատկությունները.

1) 4-րդ վանդակ. «Բեռնառաքման մասնագրեր»

Վանդակում թվային նիշերով նշվում է ԱՀ-ի հետ ներկայացվող՝ ապրանքների ցանկերի ընդհանուր թիվը, իսկ «/» բաժանիչ նշանից հետո՝ ապրանքների ցանկի թերթերի ընդհանուր թիվը:

Օրինակ՝

ապրանքների երկու ցանկերի օգտագործմամբ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է երեք թերթից, տարբեր անվանումների ապրանքներ հայտարարագրելիս վանդակում նշվում է «2/6».

2) 5-րդ վանդակ. «Ընդամենը ապրանքներ»

Վանդակում թվային նիշերով նշվում է ԱՀ-ում հայտարարագրվող ապրանքների ընդհանուր թիվը, որը պետք է համապատասխանի ապրանքների ցանկում հայտագրված ապրանքների անվանումների ընդհանուր թվին եւ ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի՝ լրացվող 31 վանդակների քանակին՝ բացառությամբ ԱՀ-ի 31-րդ վանդակների, որոնցում կատարված է հետեյալ գրառումը. «Ապրանքներ՝ կից ներկայացվող ապրանքների ցանկի համաձայն»:

Օրինակ՝

Եթե մեկ ապրանքային խմբաքանակում ներառված են ապրանքների 8 անվանումներ, որոնցից մեկը հայտարարագրվում է ապրանքների ցանկի օգտագործմամբ, որում հայտագրված են մոտ 20 տարբեր առետրային անվանումներ, հայտարարագրվող ապրանքների ընդհանուր թիվը կհաշվարկվի՝ հաշվի առնելով ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի՝ 31-րդ վանդակներում հայտագրված ապրանքների քանակը՝ բացառությամբ ԱՀ-ի 31-րդ վանդակի, որում կատարված է «Ապրանքներ՝ կից ներկայացվող ապրանքների ցանկի համաձայն» գրառումը (7 ապրանք), ինչպես նաեւ՝ ապրանքների ցանկում նշված

ապրանքների անվանումների քանակը (20 անվանում), վանդակում նշվում է հայտարարագրվող ապրանքների ընդհանուր թիվը, որը հավասար է «27»-ի:

Ընդ որում, ապրանքների ցանկի եւ ԱՀ-ի լրացուցիչ թերթերի օգտագործմամբ հայտարարագրվող ապրանքների ընդհանուր թիվը չպետք է գերազանցի 999 ապրանքը.

3) 31-րդ վանդակ. «Բեռնատեղիներ եւ ապրանքների նկարագրություն»

Վանդակում 1-ին համարի տակ, կատարվում է հետեւյալ գրառումը. «Ապրանքներ՝ կից ներկայացվող ապրանքների ցանկի համաձայն»:

Ընդ որում, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ այլ համարների տակ հայտագրվող տեղեկությունները պետք է հայտագրվեն վանդակում՝ սույն Հրահանգի II բաժնով ԱՀ-ի 31-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով,

4) 32-րդ վանդակ. «Ապրանք»

ԱՀ-ի հիմնական թերթի վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է «1» թիվը՝ անկախ նրանից, թե ապրանքների քանի առետորային, կոմերցիոն անվանում է հայտարարագրվում ապրանքների ցանկում:

Եթե մեկ ԱՀ-ում հայտարարագրվում են ապրանքներ՝ օգտագործելով երկու եւ ավելի ապրանքների ցանկեր, առաջին ապրանքների ցանկի համար ԱՀ-ի հիմնական թերթի վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է «1» թիվը, երկրորդ ապրանքների ցանկի համար՝ ԱՀ-ի լրացուցիչ թերթի վրա՝ համապատասխանաբար «2» թիվը,

5) 33-րդ վանդակ. «Ապրանքի ծածկագիր»

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է «0» տառը, եթե տարբեր անվանումների ապրանքները հայտարարագրվում են օգտագործելով ապրանքների ցանկը:

Մնացած տեղեկությունները վանդակ են մուտքագրվում սույն Հրահանգի II բաժնով ԱՀ-ի 33-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

6) 35-րդ վանդակ. «Համաքաշ (կգ)»

Վանդակում նշվում է ապրանքների ցանկում հայտագրված ապրանքների ընդհանուր համաքաշը՝ արտահայտված կիլոգրամներով:

Ապրանքների համաքաշի մասին տեղեկությունները վանդակ են մուտքագրվում սույն Հրահանգի II բաժնով ԱՀ-ի 35-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

7) 38-րդ վանդակ. «Զտաքաշ (կգ)»

Վանդակում նշվում է ապրանքների ցանկում հայտագրված ապրանքների ընդհանուր զտաքաշը՝ արտահայտված կիլոգրամներով:

Զտաքաշի վերաբերյալ տեղեկությունները վանդակ են մուտքագրվում սույն Հրահանգի II բաժնով ԱՀ-ի 38-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

8) 41-րդ վանդակ. «Լրացուցիչ միավորներ»

Վանդակում առանց միջակայքերի նշվում է ապրանքների ցանկում հայտագրված ապրանքների անվանումների ընդհանուր քանակը՝ արտահայտված լրացուցիչ չափման միավորով, եթե հայտարարագրվող ապրանքի համար ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան կիրառվում է լրացուցիչ չափման միավոր: Այնուհետև, միջակայքից հետո նշվում է լրացուցիչ չափման միավորի ծածկագիրը՝ չափման միավորների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Տեղեկությունները վանդակ են մուտքագրվում սույն Հրահանգի II բաժնով ԱՀ-ի 41-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

9) 42-րդ վանդակ. «Ապրանքի գին»

Վանդակում նշվում է ապրանքների ցանկում ներկայացված բոլոր ապրանքների անվանումների արժեքների գումարը:

Տեղեկությունները վանդակ են մուտքագրվում սույն Հրահանգի II բաժնով ԱՀ-ի 42-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

10) 45-րդ վանդակ. «Մաքսային արժեք»

Վանդակում նշվում է ապրանքների ցանկում ներկայացված բոլոր ապրանքների անվանումների ընդհանուր մաքսային արժեքը:

Տեղեկությունները վանդակ են մուտքագրվում սույն Հրահանգի II բաժնով ԱՀ-ի 45-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով:

X.1. ԱՀ-ի լրացման առանձնահատկությունները մաքսային տարածքից արտահանվող պաշարները հայտարարագրելիս

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի հունվարի 31-ի թիվ 16 որոշման խմբագրությամբ) (ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշմամբ)

41.1. Մաքսային տարածքից արտահանվող պաշարները (այսուհետ սույն բաժնում՝ ապրանքներ) հայտարարագրելիս, հայտարարատուի կողմից լրացվում են ԱՀ-ի հետեւյալ վանդակները.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի հունվարի 31-ի թիվ 16 որոշման խմբագրությամբ)

1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 14-րդ, 15-րդ, 15 (a; b), 16-րդ, 17-րդ, 17 (a; b), 18-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 37-րդ, 38-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 44-րդ, 46-րդ, 54-րդ:

41.2. 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 11-րդ, 14-րդ, 16-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 30-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 38-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 44-րդ, 54-րդ վանդակները լրացվում են սույն Հրահանգի II բաժնով նախատեսված՝ ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան:

41.3. 9-րդ, 15-րդ, 15 (a, b), 18-րդ, 20-րդ, 29-րդ վանդակները լրացվում են սույն Հրահանգի III բաժնով նախատեսված՝ ԱՀ-ի լրացման կարգին համապատասխան:

41.4. ԱՀ-ի 1-ին, 2-րդ, 17-րդ, 17(a, b), 21-րդ, 25-րդ, 31-րդ, 37-րդ, 46-րդ վանդակները հայտարարատուի կողմից լրացվում են հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները.

1) 1-ին վանդակ. «Հայտարարագիր»

Վանդակի առաջին ենթաբաժնում կատարվում է «ԱՐՏ» գրառումը:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է երկու հատ զրո «00».

2) 2-րդ վանդակ. «Ուղարկող/Արտահանող»

Վանդակում նշվում են տրանսպորտային (փոխադրող), կոմերցիոն եւ (կամ) այլ փաստաթղթերում որպես ուղարկող նշված անձի վերաբերյալ տեղեկություններ, որոնց համապատասխան սկսվել է (սկսվում է) ապրանքների փոխադրումը:

Տեղեկությունները մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի III բաժնով ԱՀ-ի 2-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

3) 17-րդ վանդակ. «Նշանակման երկիր»

Վանդակում նշվում է ԱՀ-ի ներկայացման ամսաթվի դրությամբ հայտնի այն երկրի կրճատ անվանումը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, ուր մեկնում է տրանսպորտային միջոցը:

Սույն Հրահանգի 18-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված դեպքերում վանդակում նշվում է «ՀԱՅՏՆԻ ՉԷ».

4) 17-րդ (a,b) վանդակ. «Նշանակման երկրի ծածկագիր»

Վանդակի «a» ենթաբաժնում նշվում է ԱՀ-ի 17-րդ վանդակում նշված երկրի ծածկագիրը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

Եթե ԱՀ-ի 17-րդ վանդակում նշվել է «ՀԱՅՏՆԻ ՉԷ», ապա վանդակի «a» ենթաբաժնում նշվում է երկու հատ զրո՝ «00».

5) 21-րդ վանդակ. «Ակտիվ տրանսպորտային միջոցի նույնականացումը եւ գրանցման երկիրը՝ սահմանին»

Վանդակում նշվում են տեղեկություններ այն տրանսպորտային միջոցի մասին, որի վրա կատարվում է (կատարվելու է) ապրանքների բեռնումը:

Պարբերությունը հանվել է 2015 թվականի հուլիսի 1-ից: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշում:

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է.

ծովային (գետային) տրանսպորտով ապրանքները փոխադրելիս՝ նավի անվանումը.

օդային տրանսպորտով ապրանքները փոխադրելիս՝ չվերթի համարը.

երկաթուղային տրանսպորտով ապրանքները փոխադրելիս՝ գնացքի համարը:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է տրանսպորտային միջոցի գրանցման երկրի ծածկագիրը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան:

Ռուսաստանի Դաշնությունում ոչ ամբողջական, պարբերական կամ ժամանակավոր ԱՀ ներկայացնելու միջոցով ապրանքների հայտարարագրելիս, վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է տրանսպորտային միջոցի գրանցման երկրի ծածկագիրը, իսկ եթե փոխադրումն իրականացնելիս օգտագործվել է տրանսպորտային միջոցների շարժակազմ՝, ապա՝ այն երկրի ծածկագիրը՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան, որտեղ գրանցվել է այն տրանսպորտային միջոցը, որը շարժման մեջ է դրել մյուս տրանսպորտային միջոցը (տրանսպորտային միջոցները):

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 127 որոշմամբ)

Եթե ապրանքների հայտարարագրման պահին հայտնի չէ տրանսպորտային միջոցի գրանցման երկիրը, ապա վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է երկու հատ գրո «00»:

Երկաթուղային տրանսպորտով ապրանքները փոխադրելիս վանդակի երկրորդ ենթաբաժինը չի լրացվում.

6) 25-րդ վանդակ. «Տրանսպորտի տեսակը՝ սահմանին»

Ռուսաստանի Դաշնությունում ոչ ամբողջական, պարբերական, ժամանակավոր ԱՀ ներկայացնելու միջոցով ապրանքները հայտարարագրելիս, տրանսպորտի տարբեր տեսակների թվին դասվող մի քանի տրանսպորտային միջոցների վրա ապրանքներ բեռնելիս վանդակը չի լրացվում:

Այլ դեպքերում տեղեկությունները մուտքագրվում են սույն Հրահանգի II բաժնով ԱՀ-ի 25-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

7) 31-րդ վանդակ. «Բեռնատեղիներ եւ ապրանքների նկարագրություն»

Վանդակում 1-ին համարի տակ նշվում են՝

ապրանքների անվանումը (առետրային, կոմերցիոն կամ այլ ավանդական անվանում).

քանակությունը, բնութագրերը եւ պարամետրերը՝ արտահայտված հիմնական, լրացուցիչ եւ (կամ) այլ՝ հիմնական կամ լրացուցիչ չափման միավորներից տարբեր չափման միավորներով:

Այլ տեղեկությունները մուտքագրվում են վանդակ սույն Հրահանգի II բաժնով ԱՀ-ի 31-րդ վանդակի լրացման համար սահմանված կարգով.

8) 37-րդ վանդակ. «Ընթացակարգ»

Վանդակի առաջին ենթաբաժնում նշվում է չորս հատ զրո «0000»:

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է «010» եռանիշ թվային ծածկագիրը՝ ապրանքների տեղափոխման առանձնահատկությունների դասակարգչին համապատասխան.

9) 46-րդ վանդակ. «Վիճակագրական արժեք»

Վանդակում թվային նիշերով, առանց բաժանիչների եւ միջակայքերի նշվում է ապրանքների վիճակագրական արժեքն ԱՄՆ դոլարով՝ ստորակետից հետո մինչեւ երկու նիշ ճշտությամբ մաթեմատիկական կանոններով կլորացված:

Ապրանքների վիճակագրական արժեքը հաշվարկվում է ԱՀ-ի 42-րդ վանդակում նշված ապրանքի գնի հիման վրա՝ հետեւյալ բանաձեւով.

$$C_s = (C_{42} \times K_{iv}) / (E_{iv} \times K_s),$$

որտեղ՝

C_s -ն ապրանքների վիճակագրական արժեքն է ԱՄՆ դոլարով.

C₄₂-ն ԱՀ-ի 42-րդ վանդակում նշված ապրանքի գինն է.

K_{iv}-ն արժույթի փոխարժեքն է, որով հայտագրված է ապրանքի գինը մաքսային մարմնի կողմից՝ ԱՀ-ի գրանցման ամսաթվի դրությամբ.

E_{iv}-ն արժույթների փոխարժեքով նշված այն արժույթի միավորների քանակն է, որով ներկայացված է ապրանքի գինը.

K_s-ն մաքսային մարմնի կողմից ԱՀ-ի գրանցման ամսաթվի դրությամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքն է:

XI. Պաշտոնատար անձի կողմից ԱՀ-ի վանդակների լրացման կարգը

42. Պաշտոնատար անձի կողմից լրացվում են ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի 43-րդ վանդակի երկրորդ ենթաբաժինը եւ «A», «C», «D» տառային վանդակները:

ԱՀ-ի հիմնական թերթի դարձերեսը կարող է օգտագործվել իրականացված մաքսային հսկողության արդյունքների մասին վկայող համապատասխան նշումներ (դրոշմակնիքներ) կատարելու համար:

43. Պաշտոնատար անձի կողմից ԱՀ-ի վանդակների լրացման կարգը.

1) ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի «A» վանդակ

Վանդակի առաջին տողում նշվում է ԱՀ-ի գրանցման համարը՝ ըստ հետեւյալ սխեմայի.

xxxxxxxx/xxxxxx/xxxxxxx,

1 2 3 որտեղ՝

1-ին տարրը՝ ԱՀ-ն գրանցած մաքսային մարմնի ծածկագիրն է՝ Միության անդամ պետություններում կիրառվող մաքսային մարմինների դասակարգիչներին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Հայաստանի Հանրապետությունում ապրանքները հայտարարագրելիս նշվում է ԱՀ-ն գրանցած մաքսային մարմնի երկնիշ ծածկագիրը՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող մաքսային մարմինների դասակարգչին համապատասխան:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշմամբ)

Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ղրղզստանի Հանրապետությունում ապրանքները հայտարարագրելիս նշվում է ԱՀ-ն գրանցած մաքսային մարմնի հնգանիշ ծածկագիրը՝ Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ղրղզստանի Հանրապետությունում կիրառվող մաքսային մարմինների դասակարգիչներին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212, 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշումների խմբագրությամբ)

2-րդ տարրը՝ ԱՀ-ի գրանցման ամսաթիվն է (օր, ամիս, տարեթվի վերջին երկու թվերը).

3-րդ տարրը՝ ԱՀ-ի հերթական համարն է, որը տրվում է ԱՀ-ն գրանցած մաքսային մարմնի կողմից՝ ըստ ԱՀ-ի գրանցամատյանի (համարակալումն սկսվում է մեկ թվից՝ յուրաքանչյուր օրացուցային տարվանից): Ղազախստանի Հանրապետությունում մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքների ցանկերում ներառված ապրանքները հայտարարագրելիս, որոնց համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի իջեցված դրույքաչափեր, եւ տուրքերի

նման դրույքաչափերը հայտարարագրելիս, ԱՀ-ի հերթական համարը յուրաքանչյուր օրացուցային տարվա համար սկսվում է 1 000 000-ից:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 166 որոշման խմբագրությամբ)

Բոլոր տարրերը նշվում են իրարից առանձնացվելով «/» նշանով, իսկ տարրերի միջև միջակայքեր թողնել չի թույլատրվում:

ԱՀ-ի գրանցման համարը մուտքագրվում է (դրվում է) ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի «A» վանդակի առաջին տողում եւ հայտարարագրի լրացման յուրաքանչյուր օրինակի վերեւի անկյունում, եթե լրացումն օգտագործվում է, եւ վավերացվում է ԱՀ-ն գրանցած պաշտոնատար անձի ստորագրությամբ՝ դնելով անձնական համարակալված կնիքի դրոշմվածք:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշման խմբագրությամբ)

Օրինակ՝

Հայաստանի Հանրապետություն՝ «11/101014/0004455».

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշմամբ)

Բելառուսի Հանրապետություն՝ «06532/220211/0001122».

Ղազախստանի Հանրապետություն՝ «50208/220211/0002233».

Ղրղզստանի Հանրապետություն՝ «10302/231214/0005566».

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշմամբ)

Ռուսաստանի Դաշնություն՝ «10226010/220211/0003344»:

ԱՀ-ի գրանցման համարի տակ՝ վանդակում ըստ տողերի նշվում են

պայմանական բաց թողնվող (բաց թողնված) ապրանքների օգտագործման եւ տնօրինման սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ՝ հայտագրվող (հայտագրված) մաքսային ընթացակարգի պայմաններին համապատասխան:

Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում ԱՄԳ մաքսային ընթացակարգով ապրանքները հայտարարագրելիս ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի «A» վանդակում ԱՀ-ի գրանցման համարի տակ պաշտոնատար անձի կողմից կատարվում է հետեւյալ գրառումը՝ «ԱՄԳ (ԱՀՏԳ) տարածքի սահմաններում տեղադրում եւ օգտագործում».

2) 43-րդ վանդակ. «ԱՌՄ ծածկագիր»

Վանդակի երկրորդ ենթաբաժնում նշվում է մաքսային արժեքի ճշգրտման հատկանիշի ծածկագիրը՝ մաքսային արժեքների վերաբերյալ որոշումների դասակարգչին համապատասխան:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 212 որոշման խմբագրությամբ)

3) «C» վանդակ

ԱՀ-ի հիմնական եւ լրացուցիչ թերթերի «C» վանդակում համապատասխան համարների ներքո կատարվում են նշումներ մաքսային մարմնի կողմից այն ապրանքների մասով մաքսային հսկողություն անցկացնելու վերաբերյալ կայացրած որոշման մասին, որոնց վերաբերյալ տվյալները հայտագրված են տվյալ ԱՀ-ում:

1-ին համարի տակ թվային նիշերով նշվում է ապրանքների բացթողման ժամկետի երկարաձգման ամսաթիվը (XXXXXX՝ օրը, ամիսը, տարեթվի վերջին երկու թվերը), եթե Օրենսգրքի 196-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա կայացվել է որոշում ապրանքների բացթողման ժամկետի երկարաձգման վերաբերյալ՝ դնելով պաշտոնատար անձի ստորագրությունը:

2-րդ համարի տակ թվային նիշերով նշվում են ապրանքների բացթողման կամ բացթողումը մերժելու ամսաթիվը (XXXXXX՝ օրը, ամիսը, տարեթվի վերջին երկու թվերը), ինչպես նաև ապրանքների բացթողման գրանցման համարը, եթե դրա դնելը նախատեսված է Միության անդամ պետության օրենսդրությամբ՝ ավելացնելով (դնելով) «Բացթողումը թույլատրված է» կամ «Բացթողումը մերժված է» համապատասխան նշումը (դրոշմվածքի տեսքով դրոշմակնիք), պաշտոնատար անձի ստորագրությունը եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքը:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Բելառուսի Հանրապետությունում ԱՀ-ի լրացուցիչ թերթերի «С» վանդակում 2-րդ համարի տակ լրացման համար նախատեսված թվային նիշերը չեն նշվում:

Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում ապրանքային խմբաքանակում առանձին ապրանքներ բաց թողնելիս, եթե ապրանքային խմբաքանակում առանձին ապրանքների բացթողման մասին որոշում չի կայացվել, ի լրումն վերոնշյալ տեղեկությունների, 2-րդ համարի տակ կատարվում է հետեւյալ գրառումը՝ «Ապրանք N (ԱՀ-ի 32-րդ վանդակում նշված ապրանքի հերթական համարը)»:

3-րդ համարի տակ նշվում են՝

ապրանքների պայմանական բացթողման վերաբերյալ տեղեկություններ, կատարվում է հետեւյալ գրառումը՝ «Պայմանական բացթողում», որը վավերացվում է պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով.

մտավոր սեփականության օբյեկտներ պարունակող ապրանքների բացթողման ժամկետը կասեցնելու, ապրանքների բացթողման ժամկետը կասեցնելու ժամկետը երկարաձգելու, այդ ապրանքների բացթողման ժամկետը կասեցնելը՝ մաքսային մարմինների կողմից ընդունվող որոշումների դասակարգչին համապատասխան չեղարկելու վերաբերյալ տեղեկություններ.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 188 որոշման խմբագրությամբ)

Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում, եթե պայմանական բացթողման վերաբերյալ որոշումը կայացվել է ոչ բոլոր ապրանքների մասով, կատարվում է հետեւյալ գրառումը՝ «N ապրանքի պայմանական բացթողում (ԱՀ-ի 32-րդ վանդակում նշված ապրանքի հերթական համարը)».

Ղրղզստանի Հանրապետությունում ոչ ամբողջական ԱՀ ներկայացնելու միջոցով ապրանքները հայտարարագրելիս կատարվում է հետեւյալ գրառումը՝ «Պայմանական բացթողում մինչեւ »՝ նշելով տեղեկությունների եւ փաստաթղթերի տրամադրման ամսաթվերը:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 129 որոշմամբ)

4-րդ համարի տակ՝

եթե պայմանական բաց թողնված ապրանքները ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ, ապա կատարվում է հետեւյալ գրառումը՝ «Ապրանք N_՝ Միության ապրանք», դնելով ամսաթիվը, ստորագրությունը եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքը,

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

4) «D» վանդակ

Վանդակում համապատասխան համարների ներքո կատարվում են մաքսային մարմնի նշումները (գրառումներ) այն ապրանքների վերաբերյալ մաքսային մարմնի կայացրած որոշման մասին, որոնց վերաբերյալ տեղեկությունները հայտագրված են տվյալ ԱՀ-ում:

1-ին համարի տակ՝

նշվում են տեղեկություններ ԱՀ-ում հայտագրված տեղեկություններում մինչև ապրանքների բացթողումը կատարված փոփոխությունների եւ (կամ) լրացումների վերաբերյալ, հետեւյալ գրառմամբ՝ «Ճշգրտվել են վանդակներ» (նշելով ապրանքի հերթական համարը եւ ԱՀ-ի վանդակների համարները, որոնցում կատարվել են փոփոխություններ եւ (կամ) լրացումներ), որը վավերացվում է պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

2-րդ համարի տակ՝

Եթե մաքսային մարմնի կողմից թույլատրվել է ԱՀ-ի հետկանչը կամ մաքսային մարմինը չեղյալ է ճանաչում ապրանքների բացթողումը՝ առանց հայտարարատուի կողմից ԱՀ-ի հետկանչի հետ կապված գործողություններ իրականացնելու, ապա մաքսային մարմինների կողմից ընդունվող որոշումների դասակարգչին համապատասխան կատարվում է գրառում (նշելով նման որոշում կայացնելու ամսաթիվը), որը վավերացվում է պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 188 որոշման խմբագրությամբ)

3-րդ համարի տակ՝

Ռուսաստանի Դաշնությունում, եթե ԱՀ-ն համարվում է չներկայացված, ապա կատարվում է հետեւյալ գրառումը՝ «ԱՀ-ն համարվում է չներկայացված»՝ նշելով ամսաթիվը, որը վավերացվում է պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով:

Ղազախստանի Հանրապետությունում մաքսային տարածքից ապրանքների արտահանումը նախատեսող մաքսային ընթացակարգով ապրանքները ձեակերպելիս, ԱՀ-ի երկրորդ օրինակի վրա պաշտոնատար անձի կողմից դրվում է համապատասխան դրոշմակնիք՝ նշելով ապրանքների մատակարարման վայրը

եւ ժամկետը՝ բացառությամբ խողովակաշարային տրանսպորտով եւ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշմամբ)

4-րդ համարի տակ՝

Ռուսաստանի Դաշնությունում ապրանքների ժամանակավոր պարբերական հայտարարագրման դեպքում նշվում է ամբողջական մաքսային հայտարարագիրը ներկայացնելու ժամկետը:

5-րդ համարի տակ՝

Վանդակում կատարվում են այլ նշումներ, ինչպես նաեւ մուտքագրվում են մաքսային հսկողության արդյունքների եւ մաքսային նույնականացման զետեղված միջոցների վերաբերյալ այլ տեղեկություններ.

մաքսային զննման (տեսազննման) ակտի վավերապայմանները.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշման խմբագրությամբ)

մաքսային նույնականացման զետեղված միջոցների վերաբերյալ տեղեկություններ.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշման խմբագրությամբ)

այն դեպքերում, երբ մաքսային արժեքի հայտարարագիրը չի լրացվում, մաքսային արժեքի վերաբերյալ կայացված որոշման մասին տեղեկությունները՝ «ՄԱ-ն ընդունված է», «ՄԱ-ն ճշգրտվում է», «Լրացուցիչ ստուգում»՝ նշելով ամսաթիվը, որոնք վավերացվում են պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշման խմբագրությամբ)

տեղեկություններ ԱՀ-ում հայտագրված տեղեկություններում ապրանքների բացթողումից հետո կատարված փոփոխությունների եւ (կամ) լրացումների վերաբերյալ, հետեյալ գրառմամբ՝ «Ճշգրտվել են վանդակներ » (նշելով ապրանքի հերթական համարը եւ ԱՀ-ի վանդակների համարները, որոնցում կատարվել են փոփոխություններ եւ (կամ) լրացումներ), որը վավերացվում է պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

տեղեկություններ մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման տրամադրված (մաքսային մարմնի կողմից ընդունված) ապահովման մասին, որոնք կարող են լրացուցիչ հաշվեգրվել: Այդ տեղեկությունները ձեւավորվում են ըստ հետեյալ սխեմայի.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

1-ին տարր՝ նշվում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ապահովման տրամադրման հիմքը՝ հետեյալ թվային նշումներից որեւէ մեկը կատարելու միջոցով.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

«1»՝ եթե, Օրենսգրքի 63-րդ հոդվածին համապատասխան, մաքսատուրքերի, հատուկ, հակազնագցման կամ փոխհատուցման տուրքերի վճարման ապահովումը տրամադրվել է (մաքսային մարմնի կողմից ընդունվել է) ապրանքների ծագման երկիրը հաստատող փաստաթղթերի բացակայության

դեպքում կամ այնպիսի փաստերի հայտնաբերման դեպքում, որոնք վկայում են այն մասին, որ ներկայացված փաստաթղթերը ձեւակերպված են ոչ պատշաճ կերպով եւ (կամ) պարունակում են ոչ հավաստի տեղեկություններ.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

«2»՝ եթե, Օրենսգրքի 69-րդ հոդվածին համապատասխան, մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը տրամադրվել է (մաքսային մարմնի կողմից ընդունվել է) մաքսային մարմնի կողմից ապրանքների մաքսային արժեքի լրացուցիչ ստուգում անցկացնելիս.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

«3»՝ եթե, Օրենսգրքի 198-րդ հոդվածին համապատասխան, մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը տրամադրվել է (մաքսային մարմնի կողմից ընդունվել է) մաքսային մարմինների կողմից ապրանքների փորձանմուշների կամ նմուշների, մանրամասն տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրության կամ մաքսային մարմնի կողմից ներկայացված ԱՀ-ում կամ այլ փաստաթղթերում նշված տեղեկությունների արժանահավատության ստուգման նպատակով փորձաքննություն անցկացնելու անհրաժեշտության մասին որոշում ընդունելու դեպքում.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

«4»՝ եթե մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ապահովումը տրամադրվել է (մաքսային մարմնի կողմից ընդունվել է) Միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

2-րդ տարր՝ նշվում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության կատարման ապահովման միջոցի ծածկագիրը՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարման ապահովման միջոցների դասակարգչին համապատասխան.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289, 2018 թվականի հունվարի 16-ի թիվ 5 որոշումների խմբագրությամբ)

3-րդ տարր՝ նշվում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ապահովման գումարը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

4-րդ տարր՝ նշվում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ապահովման տրամադրումը (մաքսային մարմնի կողմից ընդունումը) հաստատող փաստաթղթի համարը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

5-րդ տարր՝ նշվում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ապահովման տրամադրումը (մաքսային մարմնի կողմից ընդունումը) հաստատող փաստաթղթի ամսաթիվը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

6-րդ տարր՝ նշվում է ժամկետն ավարտվելու ամսաթիվը, որի ընթացքում ապրանքների մաքսային արժեքի հսկողություն անցկացնելիս, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 325-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան, հայտարարատուն մաքսային մարմին պետք է ներկայացնի փաստաթղթեր եւ (կամ) տեղեկություններ, այդ թվում՝ հայտարարատուից մաքսային մարմնի կողմից հարցված գրավոր պարզաբանումներ:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի մարտի 27-ի թիվ 42 որոշման խմբագրությամբ)

Բոլոր տարրերը նշվում են առանց միջակայքերի եւ իրարից անջատվում են «-» նշանով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշման խմբագրությամբ)

Տվյալ վանդակում կարող են նշվել այլ՝ սույն ենթակետով չնախատեսված տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի՝ տրամադրված (մաքսային մարմնի կողմից ընդունված) վճարման ապահովման նկարագրությունը ճշտելու համար՝ կապված տվյալ ապահովման օգտագործման հետ, եթե դա նախատեսված է Միության անդամ պետությունների օրենսդրությամբ.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

Ռուսաստանի Դաշնությունում՝ նշումներ ապրանքների ծագման երկրի եւ (կամ) սակագնային առանձնաշնորհումների տրամադրման (տրամադրման մերժման) մասին կայացրած որոշումների վերաբերյալ.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշման խմբագրությամբ)

Ղազախաստանի Հանրապետությունում ամբողջական ԱՀ-ում ժամանակավոր, ժամանակավոր պարբերական հայտարարագրում կիրառելիս՝ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող բնական գազի եւ էլեկտրաէներգիայի համար նշվում է ամսվա վերջին օրվա ամսաթիվը, որի ընթացքում իրականացվել է ապրանքի մատակարարումը, խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող նավթի եւ նավթամթերքի համար նշվում է ապրանքների մատակարարումը հավաստող վերջին փաստաթղթի (ընդունման-հանձնման ակտի) ամսաթիվը.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշումների խմբագրությամբ)

Ռուսաստանի Դաշնությունում խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող բնական գազի եւ էլեկտրաէներգիայի համար նշվում է ամսվա վերջին օրվա ամսաթիվը, որի ընթացքում իրականացվել է ապրանքների մատակարարումը, իսկ եթե այդ ապրանքների նկատմամբ կիրառվում է ժամանակավոր կամ ժամանակավոր պարբերական հայտարարագրում, ապա ամբողջական ԱՀ-ում նշվում է նաեւ այն ամսվա վերջին օրվա ամսաթիվը, որի ընթացքում իրականացվել է ապրանքների մատակարարումը, ընդ որում, խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող նավթի եւ նավթամթերքի համար նշվում է նաեւ ապրանքների մատակարարումը հավաստող վերջին փաստաթղթի (ընդունման-հանձնման ակտի) ամսաթիվը.

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 7-ի թիվ 105 որոշմամբ)

իրականացված մաքսային հսկողության արդյունքներով այլ նշումներ եւ տեղեկություններ, եթե դա նախատեսված է Միության անդամ պետության մաքսային գործի ոլորտում լիազորված մարմնի իրավական ակտով:

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշումների խմբագրությամբ)

ԱՀ-ն էլեկտրոնային փաստաթղթի ձեռով օգտագործելու դեպքում տեղեկությունները մուտքագրվում են «Ե» վանդակ սույն ենթակետով սահմանված կարգով՝ հաշվի առնելով Միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված առանձնահատկությունները:

(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 137 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

**XII. ԱՀ-ում հայտագրված տեղեկություններում մինչև
ապրանքների բացթողումը, փոփոխություններ
եւ (կամ) լրացումներ կատարելու կարգը**

Պարբերությունն ուժը կորցրել է 2014 թվականի հուլիսի 1-ից: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 289 որոշում:

Ապրանքների հայտարարագրի
լրացման կարգի մասին հրահանգի

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

Փոփոխող փաստաթղթերի ցանկ

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 140, 2013 թվականի հուլիսի 3-ի թիվ 148, 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 215, 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38, 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 145, 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 167 որոշումների խմբագրությամբ)

Սույն ցանկի կիրառման նպատակներով անհրաժեշտ է օգտվել բացառապես ապրանքի ծածկագրից՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան. ապրանքի անվանումը ներկայացված է միայն օգտվելու հարմարության համար:

N	Ապրանքի անվանումը	Ապրանքի ծածկագիրն ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի
1	2	3
1	Գինիներ խաղողի՝ բնական՝ ներառյալ թնդեցվածները, խաղողի քաղցու	2204
2	Քսայուղեր, այլ յուղեր	2710 19 710 0 2710 19 750 0 2710 19 820 0 2710 19 840 0 2710 19 860 0 2710 19 880 0

		2710 19 920 0 2710 19 940 0 2710 19 980 0 2710 20 900 0
3	Մեքենաների, մեխանիզմների եւ տրանսպորտային միջոցների համար քսանյութեր, այլ քսանյութեր	3403 19 100 0 3403 19 900 0 3403 99 000 0-ից
4	Անվադողեր եւ դողաձածկեր՝ օդաճնշման, ռետինե, նոր	4011
5	Սարքեր սննդի պատրաստման եւ տաքացման համար, այլ սարքեր	7321 11 7321 81 000 0
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 145 որոշման խմբագրությամբ)		
6	Օդափոխիչներ, թասակներ եւ քարշիչ պահարաններ	8414 51 000 0 8414 59 8414 60 000
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հուլիսի 3-ի թիվ 148, 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 215 որոշումների խմբագրությամբ)		
7	Օդորակիչ սարքեր	8415 10 8415 20 000 8415 81 00 8415 82 000 0 8415 83 000 0
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 215 որոշման խմբագրությամբ)		
8	Սառնարաններ, սառցախցիկներ եւ այլ սառնարանային կամ սառցարանային սարքավորումներ՝ էլեկտրական կամ այլ տեսակի	8418 10 8418 21 8418 29 000 0 8418 30 8418 40 8418 50
9	Սպիտակեղենի չորանոցներ	8421 12 000 0

10	Ամանեղեն լվանալու մեքենաներ	8422 11 000 0 8422 19 000 0
11	Կշռման համար սարքավորումներ	8423
12	Ինքնաբարձիչներ՝ եղանավոր բռնիչով, այլ սայլակներ՝ համալրված վերհան կամ բեռնիչ-բեռնաթափիչ սարքավորումներով	8427
(12-րդ կետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 167 որոշման խմբագրությամբ)		
13	Բուլդոզերներ՝ ոչ դարձկեն եւ դարձկեն հարթաշերտփով, ուղեհարթիչներ (գրեյդերներ), հատակագծողներ, կեռաշերտփներ (սկրեպերներ), մեխանիկական բահեր, էքսկավատորներ, միաշերտփ բարձիչներ, տոփանման մեքենաներ եւ ուղեգլաններ՝ ինքնաշարժ	8429
14	Ձյունամաքրիչներ՝ գութանային եւ ռոտորային	8430 20 000 0
15	Տպիչներ, պատճենահանող եւ ֆաքսիմիլային սարքեր	8443 31 8443 32 8443 39
16	Լվացքի մեքենաներ	8450 11 8450 12 000 0 8450 19 000 0 8450 20 000 0
17	Կարի մեքենաներ	8452 10 8452 21 000 0 8452 29 000 0
18	Ձեռքի գործիքներ	8467 11 8467 19 000 0 8467 21 8467 22 8467 29 8467 81 000 0 8467 89 000 0
19	Հաշվիչ մեքենաներ եւ տվյալների գրանցման, վերարտադրության եւ տեսողական ներկայացման համար գրպանի մեքենաներ՝ հաշվողական գործառույթներով	8470

20	Հաշվիչ մեքենաներ եւ դրանց բլոկները	8471
21	Գրասենյակային սարքավորումներ	8472
22	Առետրի ավտոմատներ՝ ներառյալ թղթադրամները եւ մետաղադրամներ մանրելու ավտոմատները	8476 (բացի 8476 90 000 0-ից)
23	Փոշեկուլներ	8509 40 000 0 8508 11 000 0 8508 19 000
24	Էլեկտրամեխանիկական կենցաղային մեքենաներ՝ ներկառուցված, էլեկտրաշարժիչով	8508 60 000 0 8509 80 000 0
25	Էլեկտրաածելիներ, մազերը խուզելու մեքենաներ եւ մազերը հեռացնելու հարմարանքներ	8510 10 000 0 8510 20 000 0 8510 30 000 0
26	Դյուրակիր էլեկտրական լապտերներ, որոնք աշխատում են էներգիայի սեփական աղբյուրով	8513 10 000 0
27	Մեքենաներ եւ սարքեր՝ էլեկտրական, լազերային եւ այլ լուսային կամ ֆոտոնային, ուլտրաձայնային, էլեկտրոնային-ճառագայթային, մագնիսաիմպուլսային կամ պլազմաաղեղային ցածր ջերմաստիճանային զոդման, բարձր ջերմաստիճանային զոդման կամ եռակցման համար	8515 (բացի 8515 90 000 0-ից)
28	Էլեկտրական հոսանուտ կամ կուտակային (ունակային) ջրատաքացուցիչներ, սուզվող էլեկտրաջեռուցիչներ, տարածքի եւ գրունտի տաքացման էլեկտրասարքավորումներ, էլեկտրաջերմային ապարատներ՝ մազերի խնամքի համար (օրինակ՝ մազերի չորացուցիչներ, վարսափաթաթուկ (բիգուդի), տաք գանգրացման համար նախատեսված ունելի) եւ ձեռքերի չորացուցիչներ, էլեկտրական արդուկներ, կենցաղային այլ էլեկտրատաքացուցիչ սարքեր	8516 (բացի 8516 80-ից, 8516 90 000 0-ից)
(28-րդ կետը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 167 որոշման խմբագրությամբ)		
29	Հեռախոսային ապարատներ՝ ներառյալ բջջային կապի ցանցերի համար հեռախոսային ապարատները, ձայնի, պատկերների եւ այլ տվյալների հաղորդման եւ ընդունման համար այլ սարքավորումներ՝ ներառյալ լարային եւ ոչ լարային ցանցերում հաղորդակցման համար սարքավորումներ	8517 11 000 0 8517 12 000 0 8517 18 000 0 8517 61 000 8517 62 000 8517 69 100 0

30	Միկրոֆոններ եւ տակդիրներ դրանց համար. բարձրախոսներ՝ պատյանների մեջ մոնտաժված կամ չմոնտաժված. ականջակալներ եւ գլխամասային հեռախոսներ՝ միկրոֆոնի հետ զուգակցված կամ չզուգակցված, եւ լրակազմեր, որոնք բաղկացած են միկրոֆոնից եւ մեկ կամ ավելի բարձրախոսներից. ձայնային հաճախականության էլեկտրական ուժեղացուցիչներ. էլեկտրական ձայնաուժեղացնող լրակազմեր	8518 (բացի 8518 90 000 1-ից, 8518 90 000 2-ից, 8518 90 000 9-ից)
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2013 թվականի հունիսի 25-ի թիվ 140 որոշման խմբագրությամբ)		
31	Ապարատուրա՝ ձայնագրող կամ ձայնավերարտադրող	8519
32	Ապարատուրա՝ տեսագրող կամ տեսավերարտադրող	8521
33	Կրիչներ՝ պատրաստի, չգրառված	8523-ից
34	Հաղորդող ապարատուրա՝ ռադիոհեռարձակման կամ հեռուստատեսության համար, իր կազմում ընդունող, ձայնագրող կամ ձայնավերարտադրող ապարատուրա ընդգրկող կամ չընդգրկող, հեռուստատեսային խցիկներ, թվային խցիկներ եւ գրառող տեսախցիկներ	8525
35	Ռադիոլրկացիոն, ռադիոնավագնացային ապարատուրա եւ հեռակառավարման ռադիոապարատուրա	8526 (բացի 8526 10 000 1-ից, 8526 92 000 1-ից)
36	Ընդունիչ ապարատուրա ռադիոհեռարձակման համար	8527 (բացի 8527 21 200 1-ից, 8527 21 520 1-ից, 8527 21 590 1-ից, 8527 29 000 1-ից)
37	Մոնիտորներ եւ պրոյեկտորներ, իրենց կազմում ընդունիչ հեռուստատեսային ապարատուրա չընդգրկող, ընդունիչ ապարատուրա՝ հեռուստատեսային կապի համար, իր կազմում լայնահեռարձակման ռադիոընդունիչ կամ ձայնը կամ պատկերը գրառող կամ վերարտադրող ապարատուրա ընդգրկող կամ չընդգրկող	8528
38	Էլեկտրոնային ինտեգրալ սխեմաներ	8542
39	Հատուկ ձյան վրայով շարժվելու համար նախատեսված տրանսպորտային միջոցներ	8703 10 110 0

40	Զբոսանավեր եւ այլ լողացող միջոցներ՝ հանգստի կամ սպորտի համար	8903 91 8903 92 8903 99 (բացի 8903 99 100 0-ից)
41	Հեռադիտակներ, մոնոկուլյարներ, այլ դիտափողեր եւ դրանց ամրանները, այլ աստղագիտական սարքեր եւ դրանց ամրանները՝ բացի ռադիոաստղագիտական սարքերից	9005 (բացի 9005 90 000 0-ից)
42	Ֆոտոխցիկներ (բացի կինոխցիկներից)	9006 30 000 0 9006 40 000 0 9006 51 000 0 9006 52 000 9006 53 9006 59 000
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 140 որոշման խմբագրությամբ)		
43	Կինոխցիկներ եւ կինոպրոյեկտորներ՝ ձայնագրող կամ ձայնավերարտադրող սարքեր պարունակող կամ չպարունակող	9007 10 000 0 9007 20 000 0
44	Պատկերների պրոյեկտորներ՝ բացի կինեմատոգրաֆիականից	9008 (բացի 9008 90 000 0-ից)
45	Սարքեր՝ հեղուկ բյուրեղների վրա աշխատող	9013 (բացի 9013 90-ից)
46	Կողմնացույցներ՝ ուղղությունը որոշելու համար	9014 (բացի 9014 90 000 0-ից)
47	Սարքեր եւ գործիքներ՝ գեոդեզիական կամ տեղագրական (ներառյալ լուսանկարաչափականները), ջրագրական (հիդրոգրական), օվկիանոսագրական, ջրաբանական (հիդրոլոգիական), օդերեութաբանական կամ երկրաֆիզիկական՝ բացի կողմնացույցներից, հեռաչափեր	9015 (բացի 9015 90 000 0-ից)
48	Ժամացույցներ՝ ձեռքի, գրպանի եւ այլ՝ նախատեսված վրան կամ իր հետ կրելու համար՝ ներառյալ վայրկենաչափերը	9101 9102
49	Երաժշտական գործիքներ, որոնց ձայնը վերարտադրվում է կամ պետք է ուժեղացվի էլեկտրականության միջոցով	9207
50	Տեսախաղեր՝ հեռուստաընդունիչի օգտագործմամբ, խաղային ավտոմատներ՝ էկրանով, էլեկտրոնային խաղեր	9504 50 000 1 9504 30 100 0 9504 50 000 2

Ապրանքների հայտարարագրի
լրացման կարգի մասին հրահանգի

ՑԱՆԿ

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ՆՇՎՈՒՄ ԵՆ
«ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՅԹՈՂՈՒՄ»,
«ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՀԵՍ», «ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ», «ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ
ԴՈՒՐՍ», «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ (ԸՆԴՈՒՆՈՒՄ)»,
«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ», «ՎԵՐԱԱՐՏԱՀԱՆՈՒՄ»,
«ԱԶԱՏ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՏԻ», «ԱԶԱՏ ՊԱՀԵՍ» ՄԱՔՍԱՅԻՆ
ԸՆԹԱՅԱԿԱՐԳԵՐՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Փոփոխող փաստաթղթերի ցանկ

(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի
2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 133 որոշմամբ (խմբագրվել է 2014
թվականի սեպտեմբերի 23-ին) Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 214,
2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 215, 2015 թվականի ապրիլի 27-ի
թիվ 38, 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 62, 2015 թվականի մայիսի 12-
ի թիվ 50, 2015 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 109, 2015 թվականի
նոյեմբերի 3-ի թիվ 140, 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 52, 2016
թվականի նոյեմբերի 15-ի թիվ 145 որոշումների խմբագրությամբ)

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ճաճկագիր	Ապրանքի կատեգորիա	Ապրանքների մասին տեղեկություններ
1	2	3

Լ. Եվրասիական տնտեսական միության բոլոր անդամ պետություններում ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ նշելու ենթակա տեղեկություններ

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի թիվ 38 որոշման խմբագրությամբ)

0202 30 900 4, 0202 30 900 6, 0202 30 900 8	խոշոր եղջերավոր անասունների միս՝ ոսկրահան արված, սառեցրած	սպանդային կենդանու մսի տեսակը (օրինակ՝ տավարի միս, հորթի միս) մսեղիքի մասը կամ հատվածամասի տեսակը (օրինակ՝ սրունք, զստամիս, գավակ)
0203 19 550 1, 0203 19 550 9, 0203 29 550 1, 0203 29 550 9	ընտանի խոզերի միս՝ ոսկրահան արված, թարմ, պաղեցրած կամ սառեցրած	մսեղիքի մասը կամ հատվածամասի տեսակը (օրինակ՝ թիակ, ազդր, վզիկ, մեջքամիս, թրիմինգ, սուկի, այտերի միս, այտամորուս կամ ամբողջական այտերի միս)
0203 19 590 1, 0203 19 590 9, 0203 29 590 1, 0203 29 590 9	ընտանի խոզերի միս՝ ոսկրահան չարված, թարմ, պաղեցրած կամ սառեցրած	անվանումը (օրինակ՝ կողոսկրեր, աճառներ)
0203 29 550 2, 0203 29 550 3	թրիմինգ ընտանի խոզերից՝ սառեցրած	ճարպի եւ մսի տոկոսային հարաբերությունը մթերքի մեջ (օրինակ՝ 40%/60%)
0204 23 000 0, 0204 42, 0204 43 100 0, 0204 43 900 0, 0204 50 390 0, 0204 50 790 0	ոչխարի կամ այծի միս՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	մսեղիքի մասը կամ հատվածամասի տեսակը (օրինակ՝ ազդր, սրունքի միս, սրունք, կարե, սուկի) սպանդային կենդանու մսի տեսակը (օրինակ՝ ոչխարի, գառան միս)
0206 29 990 0, 0206 49 000	խոշոր եղջերավոր անասունների, խոզերի սննդային ենթամթերք՝ սառեցրած	անվանումը (օրինակ՝ խոզի լեզու, տավարի երիկամներ)
0207 14 100 1	ընտանի հավերի միս՝ ոսկրահան արված, սառեցրած	անվանումը (օրինակ՝ ֆիլե, խճողակ)

0207 27 100	հնդկահավերի միս՝ ոսկրահան արված, սառեցրած	անվանումը (օրինակ՝ ազդրի ֆիլե, կրծքամսի ֆիլե)
0209 10 110 0, 0209 10 190 0	խոզի ենթամաշկային ճարպ	մասը, որից ստացվել է ճարպը (օրինակ՝ ողնաշարային, կողային)
0302 11, 0302 13 000 0, 0302 14 000 0, 0302 19 000 0, 0302 21 – 0302 89	ծուկ՝ թարմ կամ պաղեցրած	տեսակը (լատիներեն անվանումը) մասնատման առկայությունը եւ տեսակը (օրինակ՝ չմասնատված, փորոտիքը հանած, գլխատված) մշակման առկայությունը եւ տեսակը (օրինակ՝ թարմ, պաղեցրած)
0303 11 000 0, 0303 12 000 0, 0303 13 000 0, 0303 14, 0303 19 000 0, 0303 31 - 0303 89	ծուկ սառեցրած	տեսակը (լատիներեն անվանումը) մասնատման առկայությունը եւ տեսակը (օրինակ՝ չմասնատված, փորոտիքը հանած, գլխատված)
0303 91 *	ձկնկիթ	ձկան տեսակը, որից ստացվել է ձկնկիթը (օրինակ՝ սաղմոնի ձկնկիթ, զուլթու ձկնկիթ, մինտայի ձկնկիթ) ձկնկիթի տեսակը (օրինակ՝ թաղանթով)
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15- ի թիվ 145 որոշման խմբագրությամբ)		
0305 (բացի 0305 10 000 0-ից, 0305 20 000 0-ից)	ծուկ՝ չորացրած, աղ դրված կամ աղաջրի մեջ դրված, ձուկ ապխտած	տեսակը (լատիներեն անվանումը) մասնատման առկայությունը եւ տեսակը (օրինակ՝ չմասնատված, փորոտիքը հանած, գլխատված) մշակման տեսակը (օրինակ՝ չորացրած, աղ դրված, աղաջրի մեջ դրված, տաք ապխտած, սառը ապխտած)
0306 (բացի 0306 16-ից, 0306 17-ից, 0306 19 900-ից, 0306 39 900 0-ից, 0306 99 990 0-ից)	խեցգետնակերպեր	տեսակը (լատիներեն անվանումը) պատյանի մեջ կամ առանց պատյանի մշակման առկայությունը եւ տեսակը (օրինակ՝ կենդանի, թարմ, պաղեցրած, սառեցրած, չորացրած, աղ դրված կամ աղաջրի մեջ դրված, շոգեխաշած կամ եռացող ջրի մեջ եփած)

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 145, 2017 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 163 որոշումների խմբագրությամբ)

0306 16, 0306 17	մանր ծովախեցգետիններ	տեսակը (լատիներեն անվանումը) պատյանի մեջ կամ առանց պատյանի ջերմային մշակման առկայությունը եւ տեսակը (օրինակ՝ ջերմային մշակման չենթարկված, շոգեխաշած կամ եռացող ջրի մեջ եփած) հատերի միջին քանակը կգ զտաքաշի մեջ (օրինակ՝ 70-ից պակաս, 70-90, 90-120, 120-150, 150-ից ավելի)
0504 00 000 0	կենդանիների աղիքներ, պարկեր եւ ստամոքսներ	աղիքների (պարկերի) տեսակը՝ նշելով կենդանուն, որից դրանք ստացվել են (օրինակ՝ խոզի ստամոքսներ, տավարի փորոտիք)
0603 11 000 0	թարմ կտրված վարդեր	ցողունի երկարությունը
0704 90 900 0, 0706 90 900 9, 0709 93 100 0, 0709 93 900 0, 0709 99 100 0, 0709 99 900 0	բանջարեղեն	տեսակը (օրինակ՝ կաղամբ չինական, ամսական բողկ՝ կարմիր, դդմիկներ, սալաթի տերեւ, մաղադանոս)
0804 50 000, 0805 21 000 0, 0805 40 000 0, 0805 90 000 0, 0809 29 000 0, 0810 20 900 0 0810 30 900 0 0810 90 200 0 0810 90 750 0	մրգեր եւ հատապտուղներ	տեսակը (օրինակ՝ մանգո, մանդարիններ, բալ, փշահաղարջ)

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 145 որոշման խմբագրությամբ)

0909 61 000, 0909 62 000	անիսոնի կամ բադիանի, քիմոնի կամ ռազիանի սերմեր, գիհու պտուղներ	տեսակը (օրինակ՝ ռազիան, գիհու պտուղներ, քիմոն, անիսոն)
1301 90 000 0	դոճխեժ՝ բնական, չմաքրած, բնական բուսախեժեր, խեժեր,	մթերքի անվանումը (դոճխեժ, բուսախեժ)

	սունձախեժեր եւ բեւեկն	բուսախեժի տեսակը (օրինակ՝ կոնժակային, գուարային)
1602 20 100 0	պատրաստի կամ պահածոյացված մթերքներ՝ սագի եւ բադի լյարդից	յուղոտ լյարդի պարունակությունը (% զանգվածային բաժին) (օրինակ՝ 75 % զանգվածային բաժնից պակաս, 75 % զանգվածային բաժին կամ ավելի)
1602 90 310 0	պատրաստի կամ պահածոյացված մթերքներ որսամսից կամ ճագարից	սպանդային կենդանու մսի տեսակը (օրինակ՝ ճագարից)
1604	պատրաստի կամ պահածոյացված ձուկ, թառափազգիների ձկնկիթ եւ դրա փոխարինիչները՝ պատրաստած ձկան ձկնկիթի հատիկներից	տեսակը (լատիներեն անվանումը) մթերքի զուտ զանգվածը (գ կամ կգ)՝ առանց հաշվի առնելու առաջնային փաթեթվածքը (մանրածախ վաճառքի համար սպառողական տարայի մեջ բաժնեծրարված ապրանքի համար) գենետիկորեն ձեւափոխված օբյեկտների առկայությունը
1605 40 000	պատրաստի կամ պահածոյացված խեցգետնակերպեր	տեսակը (լատիներեն անվանումը) գենետիկորեն ձեւափոխված օբյեկտների առկայությունը
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողեգիայի 2017 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 163 որոշման խմբագրությամբ)		
1701 12, 1701 13, 1701 14, 1701 99 100	եղեգնաշաքար կամ ճակնդեղի շաքար	չոր վիճակում բուսաշաքարի պարունակությունը (% զանգվածային բաժին)՝ բեւեռացումնաչափական մեթոդով որոշելով
1806 10	կակաո-փոշի՝ շաքարի կամ քաղցրացնող այլ նյութերի հավելմամբ	մթերքի զուտ զանգվածը (գ կամ կգ)՝ առանց հաշվի առնելու առաջնային փաթեթվածքը (մանրածախ վաճառքի համար սպառողական տարայի մեջ բաժնեծրարված ապրանքի համար)
2001 90 970	քացախի կամ քացախաթթվի հավելմամբ պատրաստված կամ պահածոյացված բանջարեղեն, մրգեր, ընկուզեղեն եւ բույսերի	տեսակը (օրինակ՝ գլուխ սոխ)

	այլ ուսելի մասեր	
2002 90	լրիկներ՝ պատրաստված կամ պահածոյացված՝ առանց քացախի կամ քացախաթթվի հավելման	մթերքի զուտ զանգվածը (գ կամ կգ)՝ առանց հաշվի առնելու առաջնային փաթեթվածքը տարայի նյութը գենետիկորեն ձեւափոխված օբյեկտների առկայությունը չոր նյութի պարունակությունը (% զանգվածային բաժին)
2103 30 900 0	մանանեխ պատրաստի	մթերքի զուտ զանգվածը (գ կամ կգ) առաջնային փաթեթվածքում գենետիկորեն ձեւափոխված օբյեկտների առկայությունը
2103 90 900 1	մայոնեզ սոուս	մթերքի զուտ զանգվածը (գ կամ կգ) առաջնային փաթեթվածքում գենետիկորեն ձեւափոխված օբյեկտների առկայությունը
2103 90 900 9	մթերքներ՝ սոուսներ պատրաստելու համար, պատրաստի սոուսներ, համային հավելումներ կամ խառը համեմունքներ	մթերքի տեսակը (օրինակ՝ սոուս)
3208 (բացի՝ 3208 10 100 0-ից, 3208 20 100 0-ից, 3208 90 110 0-ից, 3208 90 130 0-ից, 3208 90 190 1-ից, 3208 90 190 9-ից)	ներկեր եւ լաքեր (ներառյալ արծնները եւ ողորկալաքերը)՝ սինթետիկ պոլիմերների կամ քիմիապես վերափոխված բնական պոլիմերների հիմքով՝ ոչ ջրային միջավայրում դիսպերսված կամ լուծված	լաքաներկային նյութերի խումբը (օրինակ՝ լաք, ներկ) կիրառության ոլորտը (օրինակ՝ շինարարության եւ վերանորոգման համար, ավտոմոբիլների համար, ճանապարհների գծանշման համար, հակակոռոզիոն հատկություններով, առանձնակի հատկություններով մետաղի համար) խեժի հիմքը (օրինակ՝ ալկիդային, ակրիլային, պոլիուրեթանային, էպօքսիդային, քլորվինիլային, մելամինաֆորմալդեհիդային, բազմաթերացեյլոլոզային, ալկիդուրեթանային)

3209	<p>ներկեր եւ լաքեր (ներառյալ արծնները եւ ողորկալաքերը)՝ սինթետիկ պոլիմերների կամ քիմիապես վերափոխված բնական պոլիմերների հիմքով՝ ոչ ջրային միջավայրում դիսպերսված կամ լուծված</p>	<p>լաքաներկային նյութերի խումբը (օրինակ՝ լաք, ներկ) կիրառության ոլորտը (օրինակ՝ դրսի աշխատանքների համար՝ ճակատային, ներսի աշխատանքների համար՝ ինտերիերի, առանձնակի հատկություններով՝ բժշկական հաստատությունների, խոնավ տարածքների համար՝ լուսաանդրադարձնող) խեժի հիմքը (օրինակ՝ ալկիդային, ակրիլային, պոլիուրեթանային, էպօքսիդային, քլորվինիլային, մելամինաֆորմալդեհիդային, բազմաթերացեյլոլոզային, ալկիդուրեթանային)</p>
3210 00*	<p>ներկեր եւ լաքեր (ներառյալ արծնները, ողորկալաքերը եւ սոսնձային ներկերը)</p>	<p>լաքաներկային նյութերի խումբը (օրինակ՝ լաք, ներկ) կիրառության ոլորտը (օրինակ՝ շինարարական աշխատանքների համար) նյութի հիմքը (օրինակ՝ յուղի հիմքով, մոմի հիմքով)</p>
3214	<p>ապակու եւ այգեգործական ծեփամաձիկներ, ծյութացեմենտներ, բաղադրություններ խտման համար, մաստիկաներ, մաձիկներ</p>	<p>խումբը (օրինակ՝ մաձիկ, հերմետիկ նյութ) կիրառության ոլորտը (օրինակ՝ շինարարության եւ վերանորոգման համար, ավտոմոբիլների համար) խեժի հիմքը (օրինակ՝ ալկիդային, ակրիլային, նիտրոցեյլոլոզային, բազմաթերային, էպօքսիդային) չափածրարումը (օրինակ՝ տակառներ՝ հետագա վերամշակման համար, փաթեթվածք՝ մանրածախ վաճառքի համար)</p>
3303 00, 3304	<p>օճանելիք եւ հարդաջուր, կոսմետիկ միջոցներ կամ դիմահարդարման</p>	<p>առեւտրային նշանը (ապրանքային նշանը, բրենդը)</p>

	միջոցներ եւ մաշկի խնամքի միջոցներ, մանիկյուրի կամ պեդիկյուրի միջոցներ	
3701 10 000 0	լուսանկարչական թիթեղներ՝ ռենտգենյան եւ լուսանկարչական ժապավեններ՝ հարթ, ռենտգենյան	նշանակությունը (օրինակ՝ բժշկական, ատամնաբուժական կամ անասնաբուժական նպատակների համար)
3920 30 000, 3920 51 000 0, 3920 59 900 0, 3920 61 000 0, 3920 99 280 0, 3920 99 590 0, 3920 99 900 0, 3921 90 100 0, 3921 90 550 0, 3921 90 900 0	սալիկներ, թերթեր, թաղանթ եւ շերտեր կամ ժապավեններ	նյութի կառուցվածքը (օրինակ՝ շերտավոր, ամրանավորված) այն պլաստմասսայի քիմիական անունը, որից պատրաստված է սպրանքը արտադրատեսակի ձեւը եւ չափը (օրինակ՝ սալիկ 1մ ²), գլանափաթեթներով արտադրատեսակների համար՝ գլանափաթեթի լայնությունը (մ) եզրի տեսակը (օրինակ՝ ուղղահայաց, ելունով, փորակով)
(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 62, 2015 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 109 որոշումների խմբագրությամբ)		
3923 10 000 0*	տուփեր՝ կոմպակտ սկավառակների տրանսպորտային փոխադրման եւ փաթեթավորման համար	տրեյի (1 կամ 2 սկավառակ ամրացնելու համար նախատեսված ներդիրի) առկայությունը կոմպակտ սկավառակների տուփի մեջ այն կոմպակտ սկավառակների քանակը, որոնց պահպանման համար նախատեսված է տուփը
3923 30 101 0, 3923 30 901 0	նախաձեւեր	ստացվող շշի ծավալը (լիտր)
4015 19 000 0, 4015 90 000 0	հագուստ եւ հագուստի պարագաներ ռետինից	արտադրատեսակի մեջ ռետինե շերտը ծածկող կամ երկտակող մանածագործական նյութերի առկայությունը (օրինակ՝ միակողմանի կամ երկկողմանի ծածկույթ) ռետինե շերտի կառուցվածքը (օրինակ՝

		խիտ կամ ծակոտկեն)
		մանածագործական նյութի վերջնամշակումը (օրինակ՝ ներկվածք, նկար)
		նյութի մակերեսային խտությունը (գ/մ ²)
4016 91 000 0	ծածկեր հատակի եւ գորգիկներ՝ վուլկանացրած ռետինից	մանածագործական նյութերի, մանածագործական խավի առկայությունը մանածագործական նյութի պատրաստման եղանակը եւ ռետինե շերտի հետ մանածագործական նյութի (խավի) ամրացման եղանակը չափսերը (երկարություն, լայնություն, հաստություն) (մմ)
4303 10 908 0	հագուստի առարկաներ՝ բնական մորթուց	այն կենդանին, որի մորթուց պատրաստված են հագուստի առարկաները (օրինակ՝ այծի, սամույրի, մշկամկան, կուղբի, շինշիլայի)
4409	սղոցանյութեր՝ պրոֆիլավորված չորսուի տեսքով	չափսերը (քառակողիկների, զղլակների եւ ծոփորների՝ հատակի մանրահատակային կամ փայտե ծածկապատման համար՝ չհավաքված) (մմ)
4410	փայտատաշեղային սալեր	սղոցանյութի մեխանիկական մշակման տեսակը՝ շերտով եւ (կամ) եզրով մշակման աստիճանը (օրինակ՝ սալ չմշակված, սալ հղկված կամ սալ՝ դեկորատիվ թղթով ծածկված մակերեսով) եզրերի եւ կողաճակատների մշակման նկարագրությունը (օրինակ՝ սալերի կողաճակատները երկայնքով փորակներ եւ խտատամ սանրեր ունեն, կամ սալերը պրոֆիլավորված են երկու կողաճակատներով) չափսերը (երկարություն, լայնություն, հաստություն) (մմ)
4411	սալեր	մակերեսների մշակման առկայությունը (օրինակ՝ առանց մեխանիկական

	փայտամանրաթելային	մշակման կամ երեսապատման) չափսերը (երկարություն, լայնություն, հաստություն) (մմ)
4412 94*, 4412 99*	պանելներ՝ նրբատախտակով երեսապատված	վերին շերտի կառուցվածքը (օրինակ՝ զոլակներից հավաքված՝ միաշերտ նրբատախտակի թերթի տեսքով) փայտանյութից պատրաստված վերին շերտի հաստությունը (մմ)
